



ՀՀ տարածքային
կառավարման և
զարգացման
նախարարություն




implemented by
giz
Germanische Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

ԳՈՐԻՍ, ՏԵՂ, ԳՈՐՀԱՅՔ, ՄԵՂՐԻ, ՋԵՐՄՈՒԿ, ՎԱՅՔ, ԶԱՌԻԹԱՓ,
ՈՒՐՑԱԶՈՐ, ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ, ԿՈՂԲ, ԱՅՐՈՒՄ, ՍԱՐԱՊԱՏ,
ԱՄԱՍԻԱ, ԱՇՈՅՔ ԵՎ ԱՐՓԻ



ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն
ԳՄՀԸ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
ԵԽ	Եվրոպայի Խորհուրդ
ԵՍԳԱԳ	Եկամտաստեղծ գործունեության արագացված գնահատում (RAIGO)
ՀԶՀԾ	Համայնքի զարգացման հնգամյա ծրագիր
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՄԱՄԳ	Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում (PACA)
ՇՀԶԳ	Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏԻՄԾ	ԳՄՀԸ տեղական ինքնակառավարման ծրագիր
ՏԿԶՆ	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏՏԶ	Տեղական տնտեսական զարգացում
RDF	Regional Development Foundation

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	1
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	2
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.....	5
ՆԱԽԱԲԱՆ	6
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	9
Ծրագրի իրականացման մոտեցումները.....	9
ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԿԸ.....	14
ԳՈՐԻՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	16
Գորիս համայնքը	17
Գորիսի տնտեսության մրցակցային առավելությունները.....	17
Գորիսի տնտեսության նկարագիրը.....	18
Զարգացման նախաձեռնություններ	20
Առաջնային նախաձեռնություններ.....	21
ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	25
Տեղ համայնքը.....	26
Տեղի տնտեսության մրցակցային առավելությունները	26
Տեղի տնտեսության նկարագիրը	27
Զարգացման նախաձեռնություններ	28
Առաջնային նախաձեռնություններ.....	29
ԳՈՐՀԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	32
Գորհայք համայնքը.....	33
Համայնքի տնտեսության մրցակցային առավելությունները.....	33
Գորհայքի տնտեսության նկարագիրը.....	34
Զարգացման նախաձեռնություններ	38
Առաջնային նախաձեռնություններ.....	38
ՄԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	41
Մեղրի համայնքը.....	42
Մեղրիի մրցակցային առավելությունները	42
Մեղրիի տնտեսության նկարագիրը.....	43
Զարգացման նախաձեռնություններ	46
Առաջնային նախաձեռնություններ.....	47

ԼՈՅՆՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	50
Լոյեմբերյան համայնքը.....	51
Լոյեմբերյանի մրցակցային առավելությունները	51
Լոյեմբերյանի տնտեսության նկարագիրը.....	52
Զարգացման նախաձեռնություններ	59
Առաջնային նախաձեռնություններ	60
ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	64
Այրում համայնքը.....	65
Այրումի մրցակցային առավելությունները	65
Այրումի տնտեսության նկարագիրը	66
Զարգացման նախաձեռնություններ	70
Առաջնային նախաձեռնություններ	70
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	74
Կողբ համայնքը.....	75
Կողբի տնտեսության մրցակցային առավելությունները	75
Կողբի տնտեսության նկարագիրը.....	76
Զարգացման նախաձեռնություններ	79
Առաջնային նախաձեռնություններ	80
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	82
Վայք համայնքը.....	82
Վայքի տնտեսության մրցակցային առավելությունները	84
Վայքի տնտեսության նկարագիրը	85
Զարգացման նախաձեռնություններ	87
Առաջնային նախաձեռնություններ	88
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	92
Ջերմուկ համայնքը.....	93
Ջերմուկի մրցակցային առավելությունները	93
Ջերմուկի տնտեսության նկարագիրը	94
Զարգացման նախաձեռնություններ	95
Առաջնային նախաձեռնություններ	96
ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	99
Զառիթափ համայնքը.....	100
Զառիթափի տնտեսության մրցակցային առավելությունները.....	100
Զառիթափի տնտեսության նկարագիրը.....	101

Զարգացման նախաձեռնություններ	103
Առաջնային նախաձեռնություններ	104
ՈՒՐՑԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	107
Ուրցաձոր համայնքը	108
Ուրցաձորի մրցակցային առավելությունները.....	108
Ուրցաձորի տնտեսության նկարագիրը	108
Զարգացման նախաձեռնություններ	112
Առաջնային նախաձեռնություններ	112
ՍԱՐԱԿԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	115
Սարապատ համայնքը	116
Սարապատի տնտեսության մրցակցային առավելությունները	116
Սարապատի տնտեսության նկարագիրը	117
Զարգացման նախաձեռնություններ.....	119
Առաջնային նախաձեռնություններ	120
ՍՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	123
Ամասիա համայնքը.....	124
Ամասիայի մրցակցային առավելությունները	124
Ամասիայի տնտեսության նկարագիրը	125
Զարգացման նախաձեռնություններ	127
Առաջնային նախաձեռնություններ	128
ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	131
Աշոցք համայնքը.....	132
Աշոցքի մրցակցային առավելությունները	132
Աշոցքի տնտեսության նկարագիրը	133
Զարգացման նախաձեռնություններ	134
Առաջնային նախաձեռնություններ	135
ԱՐՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	137
Արփի համայնքը	138
Արփիի տնտեսության մրցակցային առավելությունները.....	138
Արփիի տնտեսության նկարագիրը.....	139
Զարգացման նախաձեռնություններ	142
Առաջնային նախաձեռնություններ	143
Հավելված 1. Խոշորացվող համայնքներ, կենտրոններ և ընտրություններ	146
Հավելված 2. Մասնակցային ախտորոշման և պլանավորման վարժությունների մասնակիցների քանակը ըստ համայնքների	149

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ստորև ներկայացվում է սույն հաշվետվության կառուցվածքը, որի տարբեր հատվածները անդրադառնում են հետևյալ խնդիրներին.

Նախաբան. Այստեղ նկարագրված են Ծրագրի ձևավորման նախադրյալները

Ներածություն. Այս բաժնում բնութագրված է ընդհանուր դաշտը, որի ներքո գործել է Ծրագիրը

Ծրագրի իրականացման մոտեցումները. Այս բաժինը նվիրված է ԳՄՀԸ, ՏԿԶՆ, RDF և ՀՏԶՀ դերերին և ներկայացված են աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները:

Մրանց հետևում են առանձին փնջերին վերաբերող բաժինները, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է համառոտ տեղեկություններ համայնքի մասին, տրվում է կատարված աշխատանքների նկարագիր և կիրառված մեթոդաբանությունները, վերհանված կարիքներն ու առաջնահերթությունները, առկա ռեսուրսները, ծրագրային գաղափարները, ինչպես նաև բերված է առաջնահերթությունների ցանկում ամենաբարձր տողերը զբաղեցրած երկու-երեք ծրագրային առաջարկների ավելի մանրամասն վերլուծություն և դրանց՝ ծրագրային առաջարկին մոտ ձևաչափով նկարագիր:

Կարևոր է նշել, որ թեև սոցիալական ծրագրերն ամեննին չեն եղել սույն Ծրագրի առաջնային թիրախ, սակայն տրվել է դրանց ցանկը՝ որոշ դեպքերում հակիրճ անդրադարձներով:

Յուրաքանչյուր փնջին վերաբերող՝ աշխատանքների ընթացքում նկատված առանձնահատկությունները և համապատասխան առաջարկությունները եզրափակում են այս բաժինները:

Հաշվետվության վերջում բերված են Հավելվածներ, որոնք անդրադառնում են հաշվետվության այս կամ այն բաժնում զետեղված նյութին՝ տրամադրելով փոքր-ինչ ավելի մանրամասն տեղեկություններ, որոնք բուն հաշվետվության հաշվետվության մեջ ներառելը նպատակահարմար չի գտնվել:

Սույն հաշվետվությունը պատրաստվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջև համաձայնեցված՝ «ՀՀ վարչատարածքային օրենսդրական փոփոխություններով ձևավորվող 15 նոր փնջերում տնտեսական զարգացման գաղափարների ի հայտ բերմանն աջակցություն» ծրագրի (հետայսու՝ «Ծրագիր») շրջանակներում:

ԳՄՀՀ և ՏԿԶՆ միջև համաձայնությունը ծրագրային տեսք ստացավ վերջին շուրջ մեկ տարվա ընթացքում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ ԳՄՀՀ և ՏԿԶՆ տնական, ինտենսիվ քննարկումների արդյունքում՝ Համակարգման Խորհրդի ս.թ. հունվարի և հունիսի նիստերի ընթացքում: Այս ջանքերն ուղղված էին հայտնաբերելու այն բնագավառները, ուղղություններն ու գործողությունները, որոնց շնորհիվ ԳՄՀՀ կարող էր աջակցել ՏԿԶՆ-ին և ՀՏԶՀ-ին նույնացնելու տնտեսական զարգացմանը միտված ծրագրային գաղափարները խոշորացված համայնքներում:

Այսպես, ԳՄՀՀ-ն մշակեց ծրագրի տեխնիկական առաջադրանքը, համաձայնեցրեց այն ՏԿԶՆ-ի հետ՝ քննարկումներում ներգրավելով ՀՏԶՕ-ին, որից հետո պատվիրեց Ծրագրի աշխատանքների իրականացումը «Regional Development Foundation»-ին, տարածքային, համայնքային սոցիալ-տնտեսական պլանավորման, մասնակցային ծրագրավորման, պլանավորման մեթոդաբանությունների մշակման և կիրառման միջազգային և տեղական հաջողված պատմություն և ԳՄՀՀ հետ համագործակցելու փորձ ունեցող կազմակերպությանը: Օրինակ, վերջերս՝ 2016թ.-ի մարտ-մայիս ամիսներին «Regional Development Foundation»-ը անցկացրեց «Տնտեսական զարգացման պլանավորման մեթոդաբանություններ և դրանց կիրառման եղանակներ» թեմայով եռօրյա դասընթացներ խոշորացված երեք փնջերում՝ Դիլիջան, Տաթև և Թումանյան¹:

Ըստ տեխնիկական առաջադրանքի, Ծրագրի նպատակներից էին հետևյալները.

- Տեղական տնտեսական զարգացման առաջնահերթությունները սահմանելու վերապատրաստման ծրագրի մշակում:
- Համայնքների ընդհանուր սոցիալ-տնտեսական զարգացման համառոտագրի կազմում
- Մեթոդապես հիմնավորված կարիքների առաջնահերթությունների սահմանում և զարգացման տեսլականի ձևավորում:
- Մասնակցային մեթոդների միջոցով առկա հզորությունների ու կարիքների ցանկի ձևակերպում:
- Նշյալ ցանկից երկու-երեք առաջնահերթությունների առանձնացում՝ հնարավոր դոնորին ներկայացնելու համար հետագայում, ընտրություններից հետո՝ ծրագրային առաջարկ

¹ Տես՝ <http://www.mtad.am/files/docs/1513.pdf>

ձևավորելու աշխատանքներում (օր.՝ ՀՏՁՀ և այլ) և հնգամյա պլանները կազմելու օգտագործվելու համար:

- Յուրաքանչյուր գործընկեր համայնքի գծով 7-9 էջանոց նախնական նկարագիր:
- Վերջնական հաշվետվություն (անհրաժեշտության՝ և ԳՄՀԸ-ի հետ համաձայնեցնելու դեպքում՝ «Քառամյա պլանների կազմման մեթոդաբանության» և «Ուղեցույցի» կատարելագործման վերաբերյալ առաջարկներով) նշելով հետագա քայլեր:
- Համայնքների խոշորացման շրջանակներում՝ տնտեսական զարգացման վերաբերյալ հանրային իրազեկում:

Առաջին երեք փնջերի (Դիլիջան, Տաթև և Թումանյան) փորձը ցույց տվեց, որ խոշորացված համայնքներում ներդրումային ծրագրերի կատարման հիմնական խոչընդոտներից են տեղերում կարիքներն ու առաջնահերթությունները համատեղ և մասնակցաբար բացահայտելու, ծրագրային գաղափարներ գեներացնելու, առաջնահերթ ծրագրերի շուրջ համակարգված, մասնակցային և մեթոդապես հիմնավորված՝ համայնքներում տարբեր հատվածների միջև համագործակցելու, խնդիրները դուրսբերելու և դրանց ծրագրային տեսք հաղորդելու կարողություններում առկա բացերը:

Ուստի որոշում ընդունվեց նոր փնջերում հայտնաբերել և զարգացնել համապատասխան կարողությունները՝ նախքան դրանցում ՏԻՄ ընտրություններն անցկացնելը:

Այս մոտեցումը թույլ է տալիս փնջերի թե՛ վարչական, թե՛ հասարակական և թե՛ մասնավոր հատվածների ներկայացուցիչներին պատրաստ լինել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, ինչպես նաև այլ հնարավոր դոնորների և պոտենցիալ գործընկերների՝ տեղական ու միջազգային ներդրողների, տեխնիկական աջակցություն ցուցաբերողների, բարեգործական և այլ կառույցների հետ իրականացնել արդյունավետ համագործակցություն, և ցուցաբերել միասնական, համակարգված ու ծրագրային մոտեցում:

Ավելին, որոշ համայնքներում տնտեսվարում են խոշոր խաղացողներ, որոնց ներկայությունն ու գործունեությունը համայնքում նույնպես կարող է գործադրվել ի շահ համայնքային խնդիրների լուծման (օրինակ՝ «Տաթևի թևեր», «Գեոթիմ» և այլն): Քանի որ սույն Ծրագրի շնորհիվ համապատասխան կարողությունները մնում են համայնքում՝ Ծրագրով նախատեսված միջոցառումներին մասնակիցների միջոցով, և, հաշվի առնելով Ծրագրի բնույթն ու մեթոդաբանությունը, ՏԻՄ-ի անվանական կազմը այլևս կարևոր չէ, որովհետև այսօր դեռ գործող համայնքների ղեկավարները, աշխատակազմը, համայնքային կառույցների ներկայացուցիչները շարունակելու են ապրել արդեն խոշորացված համայնքում և համատեղ լուծել նրանում առկա խնդիրները:

Մյուս կողմից, Ծրագրով նախատեսված միջոցառումների, աշխատաժողովների անցկացման, առաջնահերթությունները բացահայտելու մեթոդները, ծրագրային գաղափարները վեր հանելու և հետագայում ծրագրային առաջարկներ մշակելու աշխատակարգերը կարող են, կիրառելու դեպքում՝ օգտակար լինել ՀՏՀԾ-երի մշակման

ընթացքում, քանի որ գալիս են էապես լրացնելու «ՀՔԶ մշակման և կառավարման մեթոդաբանությունը»² և «Բազմաբնակավայր համայնքներում ՀՏՀ մեթոդաբանության կիրառման ուղեցույցը»³ հատկապես ուժեղացնելով դրանց՝ տնտեսական զարգացման պլանավորման և մասնակցայնության բաղադրիչները, որի կարիքը համայնքապետարանների՝ վարչարարության ու կառավարման տեսանկյունից բարեփոխումների ընթացիկ փուլում փուլում նշանակալից է:

Ծրագրի արդյունքում մշակված նյութերը, մասնավորապես՝ սույն հաշվետվությունը (և բոլոր փնջերին վերաբերողները) ներկայացվելու են ԳՄՀԸ, ՏԿԶՆ, անցնելով քննարկումներ դեռ նախագծային փուլում և հետո օգտագործվելու են ըստ ՏԿԶՆ հայեցողությամբ որպես ՀՏՀ համար կարևոր կողմնորոշիչ՝ խոշորացված համայնքներում ներդրումային ծրագրեր իրականացնելու համար:

Սույն հաշվետվությունը պատրաստել են «Regional Development Foundation» կազմակերպության փորձագետներ Արտակ Դադոյանը, Արտյոմ Գրիգորյանը, Գագիկ Մուրադյանը՝ կազմակերպության նախագահ Վարազդատ Կարապետյանի գլխավորությամբ:

Ծրագիրը ֆինանսավորվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության «Հարավային Կովկասում տեղական ինքնակառավարման ծրագրի» կողմից՝ «ՀՀ վարչատարածքային օրենսդրական փոփոխություններով ձևավորվող 15 նոր փնջերում տնտեսական զարգացման գաղափարների ի հայտ բերմանն աջակցություն» ծրագրի շրջանակներում: Ծրագրի համակարգողն է ԳՄՀԸ խորհրդատու Արմեն Քեշիշյանը:

² <http://mta.gov.am/files/docs/886.pdf>

³ <http://cfoa.am/wp-content/uploads.2016/06/GUIDE-for-FYDP.pdf>

Շարունակելով վարչատարածքային բարեփոխումները՝ ՀՀ կառավարությունը Ազգային ժողով ներկայացրեց «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-100-Ն օրենքի նախագիծը, որն ընդունվեց ս.թ. հունիսի 17-ին⁴ և վավերացվեց հունիսի 27-ին Նախագահի կողմից: Օրենքն ուժի մեջ է մտել 2016թ.-ի հուլիսի 11-ից:

Ըստ նշյալ օրենսդրական փոփոխության, ՀՀ տարածքում ձևավորվում են 15 նոր փնջեր, որոնք ընդգրկում են նախկին 118 համայնքներ՝ 135 բնակավայրերով: Նոր ձևավորված համայնքներն են Սյունիքի մարզում՝ Գորիս, Տեղ, Գորհայք, Մեղրի, Վայոց Ձորում՝ Զառիթափ, Վայք, Ջերմուկ, Շիրակում՝ Ամասիա, Աշոցք, Սարապատ և Արփի, Արարատում՝ Ուրցաձոր, Տավուշում՝ Նոյեմբերյան, Այրում և Կողբ: Դրանց մի մասում ՏԻՄ ընտրությունները նշանակված են ս.թ. սեպտեմբերի 18-ին և մյուսներում՝ հոկտեմբերի 2-ին (մանրամասները տես՝ Հավելված 1):

Առաջին երեք խոշորացված համայնքների՝ Դիլիջան, Տաթև և Թումանյան, փորձը ցույց տվեց, որ ծրագրային առաջարկներ ձևավորելու կարողությունները կարող են հզորացման, հաշվի առնելով, որ նրանց խոշորացումից հետո (ընտրությունները կայացել են 2016թ. փետրվարի 14-ին) անցել է գրեթե ութ ամիս, սակայն համայնքներին ՀՏԶՀ-ի միջոցով ուղղվելիք միջոցները նոր-նոր են հիմնավորվում ծրագրային առաջարկներով, որոնցով պետք է առաջնորդվել խոշորացված համայնքներին ներդրումային ծրագրերով աջակցելիս:

Նախնական գնահատականները, համայնքներում աշխատելու հսկայական փորձը հուշում էր, որ ծրագրային գաղափար ձևավորելու համար անհրաժեշտ է լուրջ աշխատանք տանել: Այս նպատակին ուղղված քայլերից եղավ ԳՄՀԸ կողմից մշակված և ՀՀ ՏԿԶՆ-ի և ՀՏԶՀ-ի հետ համաձայնեցված սույն Ծրագիրը:

Ծրագրի իրականացման մոտեցումները

Ծրագրի իրականացումը մեթոդապես բաժանվում է երկու բաղադրիչների.

- **Կազմակերպչական և**
- **Մեթոդաբանական**

Ծրագրի **կազմակերպչական** բաղադրիչը ներառել է բանակցություններ և խորհրդակցություններ ԳՄՀԸ, ՏԿԶՆ և ՀՏԶՀ-ի միջև՝ ծրագրային նպատակներն ու ուղղությունները հստակեցնելու և անելիքները ժամկետավորելու շուրջ:

⁴ <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=40879>

Սա անելուց հետո ԳՄՀՆ պայմանագիր է կնքել «RDF» հիմնադրամի հետ, որը տիրապետում է տարածքային և համայնքային սոցիալ-տնտեսական զարգացման մասնակցային պլանավորման միջազգային և հայաստանյան փորձին, ունի ԳՄՀԸ հետ համագործակցելու հաջողված փորձ և բարձրակարգ մասնագետներ՝ Ծրագրով նախատեսված աշխատանքները պատշաճ որակով իրականացնելու համար:



ԳՄՀԸ խորհրդատուն և ՏԿԶՆ նախարարի առաջին տեղակալը, ՏԻՄ վարչության պետը և ՀՏԶՀ համակարգման վարչության պետն ու ծրագրերի պատասխանատուն համաձայնեցրեցին համայնքներում առաջին մասնակցային վերլուծական հանդիպումների ժամանակացույցը, որի վերջնական տարբերակը ներկայացվում է ստորև.

Աղյուսակ 1. Խոշորացված համայնքներ այցելությունների ժամանակացույց

Մարզ/ Համայնք	Ամսաթիվ	Մարզ/ Համայնք	Ամսաթիվ	Մարզ/ Համայնք	Ամսաթիվ
Սյունիք		Վայոց Ձոր		Տավուշ	
Գորիս	27.07	Զերմուկ	03.08	Նոյեմբերյան	10.08
Տեղ	27.07	Վայք	04.08	Կողբ	11.08
Գորհայք	28.07	Զատիթափ	04.08	Այրում	11.08
Մեղրի	19.08				
Շիրակ		Արարատ			
Աշոցք	23.08	Ուրցաձոր	16.08		
Սարապատ	23.08				
Ամասիա	24.08				
Արփի	24.08				

ՀՀ ՏԿԶՆ ՏԻՄ վարչության պետը մեծապես աջակցել է փորձագիտական թիմին հանդիպումները կազմակերպելու գործում՝ Ծրագրի նպատակների, ինդիքների և ակնկալվող արդյունքների մասին տեղեկացնելով համապատասխան ՏԻՄ-երին, հասարակական, քաղաքացիական, մասնավոր հատվածի և ՋԼՄ-ների, ինչպես նաև տեղերում գործող այն կառույցների ներկայացուցիչներին, որոնք լուրջ դերակատարում կարող են ունենալ համայնքային զարգացման բնագավառում (օր.՝ «Տաթևի թևեր», «Գեոթիմ» և այլն):

Ընդհանուր առմամբ, Ծրագրով նախատեսված միջոցառումներին մասնակցել է 587 մարդ:

ՏԿԶՆ ՏԻՄ վարչության պետը (պարոն Ա. Գիլոյանը) մասնակցել է բոլոր փնջերի բոլոր հանդիպումներին և դրանց հաջորդող՝ աշխատանքների ներթիմային վերլուծություններին, պարզաբանումներ, գնահատականներ և առաջարկություններ ներկայացնելով կատարվող աշխատանքների վերաբերյալ: ՀՏՁ-ի ստորաբաժանումների ղեկավարների (պարոնայք Ա. Գրիգորյանն ու Դ. Ասլանյանը) մասնակցությունը այցելությունների մեծ մասին շատ կարևոր էր ինչպես ՀՏՁ ընթացակարգերը ներկայացնելու, ավելորդ ակնկալիքներ չստեղծելու, փնջերում ընտրություններից հետո գալիք՝ ՀՏՁ-համայնք աշխատանքներում հստակություն մտցնելու տեսանկյունից:

Ծրագիրն իսկապես եղավ ներգրավված հաստատությունների թիմային, մասնակցային աշխատանք, որից շահեց ինչպես դրված նպատակների իրականացումը, այնպես էլ շահառուների կողմից նախատեսվող աշխատանքների, դրանց մեջ նրանց դերի, ծրագրային մոտեցումների կարևորության ընկալումը և ծրագրային առաջարկները մասնակցաբար մշակելու ու ձևավորելու նրանց կարողությունը:

Այցելություններն ու դրանց միջանկյալ արդյունքները պարբերաբար քննարկվում էին ՀՀ ՏԿԶՆ նախարարի առաջին տեղակալ՝ պարոն Վ. Տերտերյանի հետ՝ յուրաքանչյուր հաջորդ այցելության ընթացքում այս կամ այն հարցն առավել համապարփակ ներկայացնելու և վերջնական հաշվետվությունը առավել նպատակամետ դարձնելու նկատառումով:

Ինչ վերաբերում է Ծրագրի իրականացման, աշխատաժողովներն անցկացնելու **մեթոդաբանական** բաղադրիչին, ապա այստեղ «Regional Development Foundation» ընկերության փորձագիտական խումբը՝ պարոնայք Վ. Կարապետյանի, Ա. Գրիգորյանի, Ա. Դադոյանի և Գ. Մուրադյանի ներգրավվածությամբ, կիրառել է միջազգային ճանաչում գտած՝ տնտեսական զարգացման մասնակցային գործիքների մի ամբողջ խումբ, որից մեկի կամ մի քանիսի համատեղությամբ ընտրությունը պայմանավորվում էր մասնակիցների, լսարանի առանձնահատկություններով:

Նշյալ մեթոդաբանություններից են «Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում» (PACA), HEXAGON, COMPASS, «Գենդերային արժեքային շղթաներ» (GSVC), «ՏՏՁ սրճարան» (LED Café): Դրանց հակիրճ նկարագրությունը բերված է ստորև՝ Ներդիր 1-ում.

Ներդիր 1. Ծրագրի ընթացքում կիրառված մեթոդաբանությունների համառոտագիր

PACA (Participatory Appraisal of Competitive Advantage)

ՄԱՄԳ (Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում)⁵

PACA-ն մասնակցային, ներքնից վերև, պրագմատիկ մոտեցում է տեղական տնտեսության զարգացմանը: Դա գործիքակազմ է, որը թույլ է տալիս կարճ ժամանակահատվածում գնահատել համայնքի տնտեսական իրավիճակը, բացահայտել մրցակցային առավելություններն և հանդես գալ նախաձեռնություններով, որոնց արդյունքները տեսանելի կլինեն կարճաժամկետ հեռանկարում:

⁵ Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ <http://www.mesopartner.com/knowledge-services/tools/paca/>

PACA-ի առաջնային նպատակը արագ և տեսանելի արդյունքների ի հայտ բերումն է, ի հակադրություն այն ծրագրերի, որոնք կենտրոնանում են երկարաժամկետ, բարդ և մեծ ֆինանսական միջոցներ պահանջող ռազմավարությունների մշակման վրա:

Այն օգտագործվում է համայնքներում՝

- SSQ գործընթացի խթանման համար
- Առկա SSQ գործընթացի արդյունավետության բարձրացման համար

PACA գործիքը ներդրվել և գործարկվել է ավելի քան 40 երկրներում:

Hexagon

Տեղական տնտեսական զարգացման (SSQ) վեցանկյուն⁶

Հեքսագոնը գործիք է, որի միջոցով իրականացվում են SSQ վերապատրաստման միջոցառումներ: Այն խմբավորում է տեղական զարգացման առանցքային խնդիրները 6 հիմնական բլոկների մեջ: Մինևույն ժամանակ Հեքսագոնը հիմք է հանդիսանում մի շարք ձևաչափերով արագ սեմինարների կազմակերպման համար, որոնք ուղղված են տեղական դերակատարների SSQ հեռանկարների պարզաբանմանը:

Հեքսագոնի 6 հիմնական բաղադրիչներն են.

1. SSQ թիրախային խումբը (Տեղական կազմակերպություններ, սկսնակներ, արտաքին ներդրողներ)
2. Տարածքային գործոններ (Շոշափելի և ոչ շոշափելի գործոններ տեղական ընկերությունների համար)
3. Միներգիա (SSQ զարգացման, սոցիալական զարգացման և տեղական ռազմավարական պլանավորման միջև հարաբերություններ)
4. Տեղական տնտեսական զարգացման կայունություն:
5. Տեղական տնտեսական զարգացման գործընթացի կառավարում:
6. Տեղական տնտեսական զարգացման գործընթացը:

Compass

«Կոմպասը» SSQ գործիք է, որի հիմքում ընկած է մեկ օր տևողությամբ սեմինար տեղական ակտիվ դերակատարների հետ⁷: Սեմինարի ընթացքում տեղական դերակատարները.

- Փոխանակվում են հաջողված փորձով
- Սահմանում են իրենց գործողությունների հիմնական նպատակը
- Որոշում են իրենց ոլորտում հաջողության առաջնահերթ գործոնները
- Որոշում են գործողություններ, որոնք ուղղված են հաջողության առաջնահերթ գործոններին

«Կոմպաս» գործիքի կիրառումը թույլ է տալիս

- Արագորեն տեղեկանալ համայնքում առկա ընթացիկ գործողություններին
- Տեղական դերակատարների հեռանկարների համահարթեցում

⁶ Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ <http://www.mesopartner.com/knowledge-services/tools/hexagon/>

⁷ Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ <http://www.mesopartner.com/knowledge-services/tools/compass/>

- Տեղական դերակատարների միջև համատեղ աշխատանքի պատրաստակամության աճ, պայմանավորվածություն
- Որոշել գործողությունների ցանկ, որը ուղղված է համայնքային տնտեսության ուժեղացմանը:

The LED Café⁸

Այս գործիքը իրենից ներկայացնում է մեծ թվով տեղական դերակատարներից բաղկացած խմբի սեմինարային կառավարման գործիք, որը թույլ է տալիս բարձրացնելու ՏՏՁ իրազեկվածությունը: Այն կարել է հեշտությամբ օգտագործել ավելի քան 200 մասնակիցների համար: Այս Գործիքը բավականին արդյունավետ ձևաչափ է, որը նպաստում է տեղական դերակատարների միջև տեղեկության փոխանակմանը և համահարթեցմանը:

⁸ <http://www.mesopartner.com/knowledge-services/tools/led-cafe/>

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԸ

Վերջում անհրաժեշտ ենք համարում նշել, որ բոլոր աշխատաժողովները կառուցված են եղել հետևյալ կերպ.

- Բացման և ներածական խոսքով հանդես է եկել պարոն Ա. Գիլոյանը, որը ներկայացրել է վարչատարածքային բարեփոխումների ընթացիկ վիճակը, նորություններ հաղորդել մասնակիցներին դրանց ընթացքի և ծրագրերի մասին, ներկայացրել նախարարության մոտեցումները անելիքների շուրջ: Պարոն Գիլոյանը նշել է նաև Ծրագրի շրջանակներում համայնքին փոխանցվող գիտելիքի ու հմտությունների կարևորությունը իբրև համայնքի՝ պոտենցիալ դոնորների հետ փոխգործակցությունն առավել համակարգված, մեթոդապես հիմնավորված և ամբողջ համայնքի կարիքների լուծմանն ուղղված գործունեությունը կարգավորելու արդյունավետ միջոց:
- ԳՄՀՀ համակարգող պարոն Ա. Քեշիշյանը ներկայացրել է Ծրագրի նպատակներն ու խնդիրները, խնդրո առարկա Ծրագրում ԳՄՀՀ, ՏԿԶ նախարարության և ՀՏԶՀ-ի համագործակցության մարմնավորման առանձնահատկությունները, հորդորել մասնակիցներին ակտիվ ներգրավվել աշխատանքներում և ապահովել իրապես մասնակցային, փոխհամաձայնեցված առաջնահերթությունների, կարիքների և ծրագրային գաղափարների վերհանում և ներկայացրել փորձագետների թիմը: Պարոն Քեշիշյանը ընդգծել է նաև տնտեսական զարգացման պլանավորման կարևորությունը համայնքի հնգամյա ծրագրավորման համար նաև այն առումով, որ Ծրագրի շրջանակներում ներկայացվող ու մասնակիցների հետ համատեղ կիրառվող մասնակցային պլանավորման մեթոդները կարող են օգտակար լինել ռազմավարական պլանավորման, դոնոր հանրության հետ փոխհարաբերությունների որակի բարելավման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մասնակցայնության, գործընկերների առջև որպես մեկ համայնք ավելի ուժեղ դիրքերից հանդես գալու և տեղերում առկա ռեսուրսների կոնսոլիդացման համար:
- ՀՏԶՀ-ի ներկայացուցիչներ պարոնայք Ա. Գրիգորյանն ու Դ. Ասլանյանը ներկայացրել են Հիմնադրամի առջև դրված խնդիրները, տեղեկացրել նրա ընթացակարգերի ու գործընթացների առանձնահատկությունները, վստահեցրել, որ Հիմնադրամի մասնագետները կայցելեն փնջերը ընտրություններից և ՏԻՄ-երի ձևավորումից հետո՝ ընդգծելով ներկա Ծրագրի կարևորությունը Հիմնադրամին դիմելու համար պատրաստ լինելու տեսանկյունից: Պարոնայք Գրիգորյանն ու Ասլանյանը համառոտ տեղեկատվություն են տրամադրել նաև արդեն խոշորացված՝ Դիլիջանի, Տաթևի և Թումանյանի համայնքներում մեկնարկող և մեկնարկելու շեմին գտնվող՝ ՀՏԶԾ-ի կողմից իրականացվող ծրագրերի, ինչպես նաև ՏԿԶՆ նախարարի առաջին տեղակալ՝

պարոն Վ. Տերտերյանի նախագահությամբ փորձագիտական խմբի ստեղծման ու գործունեության⁹ մասին:


- RDF իր աշխատանքները մեկնարկել է ներկայացնելով աշխատաժողովի օրակարգը, բաշխել դերերը, ներկայացրել կրավելիք մեթոդները: Փորձագետների խումբը՝ պարոնայք Վ. Կարապետյանը, Ա. Դադոյանը, Ա. Գրիգորյանն ու Գ. Մուրադյանը, ըստ էության վարել են աշխատաժողովը, առավելագույնն անելով բոլոր հնչած կարծիքները լսելու և արձանագրելու, քննարկելու և առհասարակ՝ ուղղորդելու աշխատանքները: Կիրառվող մեթոդների առանձնահատկություններից մեկն այն է, որ մասնակիցներն իրենք են ներկայացնում, նկարագրում, բնութագրում և ձևակերպում կարիքները, առաջնահերթությունները և մշակում ծրագրային գաղափարները, մինչդեռ փորձագետների խումբը՝ հուշումների և բացատրական աշխատանքների միջոցով ուղղորդում է ներկաներին դեպի որակյալ ձևակերպումներ՝ մեթոդաբանությունների կիրառմամբ:

Բոլոր կողմերը, մասնավորապես՝ ՏԿԶՆ-ն, ԳՄՀԸ-ն, ՀՏԶԾ-ն և RDF-ը վստահեցրել են մասնակիցներին իրենց հարցերին պատասխաններ տալու պատրաստակամության մասին, ինչը և տեղի ունեցել՝ տարբեր համայնքներում տարբեր ակտիվությամբ: Երբեմն, զգալով Հիմնադրամի՝ համայնքում ներդրումային ծրագրեր իրականացնող ներկա պահին առավել կոնկրետ հաստատություն լինելը՝ մասնակիցները հասկանալի կերպով բազմաթիվ հարցեր էին փորձում պարզել, որոնք վերաբերում էին բացառապես Հիմնադրամին և նրա ընթացակարգերին: Առանց մարդկանց հարցերը անպատասխան թողնելու՝ Ծրագրի շրջանակներում համագործակցող կողմերը (ՏԿԶՆ-ն, ԳՄՀԸ-ն, ՀՏԶԾ-ն և RDF-ը) հստորեն հաջողում էին աշխատաժողովները վերադարձնել բնականոն, Ծրագրով նախատեսված հուն, անդրադառնալ դրա նպատակներին ու խնդիրներին և անցնել բուն աշխատանքներին:

Ծրագիրը լայնորեն լուսաբանվել է ՋՄԼ-ներում՝ տեղական վարչական կամ ՋՄԼ պատասխանատուների (օր.՝ աշխատակազմի քարտուղար Աշոցքում, «Գորիսի մամուլի ակումբ» Գորիսում, մարզպետարանների պաշտոնական կայքեր Շիրակում և այլն) և ՏԿԶՆ կայքի միջոցով, որոնց տեղեկություն կամ ՏԶԿՆ-ԳՄՀԸ համագործակցությամբ մշակված՝ պատրաստի նյութ էր տրվում համապատասխան նորությունների բաժինների համար:

⁹ Խումբը ստեղծվել է ՀՀ ՏԿԶՆ նախարարի 20.07.2016թ.-ի հ. 80-Ա հրամանով

ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Աղյուսակ 2. Մյունիքի մարզի համառոտ տվյալներ¹⁰

Տարածքը	4 506 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	15.1%
Քաղաքային համայնքներ	7
Գյուղական համայնքներ	102
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	140.2 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	4.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	67.3 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	306 914.4 հա

¹⁰ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015»

Գորիս համայնքը

Գորիս համայնքը գտնվում է ՀՀ Մյունիքի մարզի հյուսիսային հատվածում և իր մեջ ներառում է Գորիս քաղաքը, Ակներ, Աղբուլաղ, Բարձրավան, Խնձորեսկ, Հարթաշեն, Ներքին Խնձորեսկ, Շուռնուխ, Որոտան, Վանանդ, Վերիշեն, Քարահունջ գյուղերը:

Գորիս համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործընթացը սկսվեց 27.07.2016 –ին:

Գորիսի տնտեսության մրցակցային առավելելու թյունները

Համայնքի տնտեսության մրցակցային առավելելությունները վեր հանվեցին 'օգտագործելով «LED cafe» մեթոդոլոգիան:



Ստորև ներկայացված է մրցակցային առավելելությունների ցանկը.

1. տուրիստական բարձր գրավչություն՝ պատմական, բնական և նորաստեղծ հուշարձաններ, գեղատեսիլ և անկրկնելի բնություն,
2. ճանապարհային խաչմերուկ՝ հյուսիս- հարավ, դեպի Լեռնային Ղարաբաղ և դեպի Իրան տանող ճանապարհներ,
3. ենթակառուցվածքային ապահովվածություն (բարվոք ճանապարհներ, խմելու և ոռոգման ցանցեր և այլն),
4. ավանդույթ դարձած ամենամյա փառատոններ, սպորտային միջոցառումներ,
5. կրթական ենթակառուցվածքների առկայություն՝ քոլեջ, բուհ,
6. արհեստագործական լավագույն մասնագետներ,
7. ակտիվ հասարակություն (մոտ 30 հասարակական կազմակերպության առկայություն),
8. մրգային հայտնի օղիներ, լոբի և այլ մթերքներ,
9. գյուղատնտեսության զարգացման նպաստավոր պայմաններ՝ բերրի հողեր, հասանելի մեծաքանակ հողային ռեսուրսներ, արոտավայրեր և խոտհարքներ:

Գորիսի տնտեսության նկարագրիչը

Ըստ առաջատար ոլորտների բնակավայրի տնտեսության պատկերը ստանալու համար՝ օգտագործվեց «COMPASS» մասնակցային ախտորոշման և գնահատման գործիքը:



Համայնքի տնտեսության առաջատար ճյուղերը 4-ն են՝

1. զբոսաշրջություն,
2. սննդարդյունաբերություն և այլ արտադրություններ,
3. հողագործություն,
4. անասնապահություն:

Զբոսաշրջությունը համայնքներում

Բարձրաբերձ ժայռերը, բրգաձև գագաթները, խորը ձորերն ու կիրճերը, քարայրներն ու քարանձավները անկրկնելի գեղատեսիլ են դարձնում Գորիսի ռելիեֆը, որը խիստ կտրտված է Որոտան, Գորիս, Չորաշեն, Խնձորեսկ, Աղսու, Խոզնավար և Տաթև գետերի 200-800 մ խորությամբ հովիտներով: Բնությունը գեղեցիկ է, օդը՝ մաքուր:

Համայնքում առկա են բազմաթիվ պատմամշակութային, բնական և նորաստեղծ հուշարձաններ (Մխիթար սպարապետի ամրոցը, աղջկա ամրոցը, Մուրբ Թաղևոս եկեղեցին, Մուրբ Հոփսիմե եկեղեցին, Խնձորեսկի ճոճվող կամուրջը և այլն), որոնք, գումարվելով անկրկնելի բնությանը, զբոսաշրջության զարգացման համար ամուր հիմք են ստեղծում:

Տարեկան 35000–40000 ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա զբոսաշրջիկներ են այցելում այս վայրերը:

Ի տարբերություն Գորիս քաղաքի, որտեղ համեմատաբար զարգացած են զբոսաշրջությանը սպասարկող ենթակառուցվածքները և ճյուղերը (հյուրանոցներ, հասարակական սննդի օբյեկտներ, ժամանցի վայրեր, մասնագիտացված խանութներ, տրանսպորտ և այլն)՝ գյուղերը հիմնականում չեն առաջարկում լրացուցիչ ծառայություններ զբոսաշրջիկներին, ինչի հետևանքով լավագույն դեպքում զբոսաշրջիկների այցից օգտվում են գյուղական մի քանի փոքր խանութներ՝ վաճառելով ջուր, զովացուցիչ ըմպելիքներ և այլն:

Մ ն ն դ ա ր դ յ ու ն ա ր ք ե ր ու թ յ ու ն ն ա յ լ ա ր տ ա դ ր ու թ յ ու ն ն ե ր

Համայնքում գործում են «Գամմա», «Զանգեզուր», «Գորիսի միկրոշարժիչ» արդյունաբերական ձեռնարկությունները, գործում են սննդարդյունաբերության, արհեստագործական ձեռնարկություններ, քարամշակման արտադրամասեր: Համայնքում հատկապես զարգացած է էլեկտրաէներգիայի արտադրությունը, հանձինս՝ «Որոտան ՀԷԿ-երի համակարգ» ՓԲԸ-ի:

Զարգանում են ինֆորմացիոն տեխնոլոգիաների վրա հիմնված փոքր ձեռնարկությունները. համայնքում արդեն գործում է ռոբոտաշինության կենտրոն:

Մ ն ա ս ն ս ա զ ա հ ու թ յ ու ն

Անասնապահությունը բոլոր գյուղական համայնքներում տնտեսության գերակա ճյուղ է հանդիսանում: Բնակչության մեծ մասը ներգրավված է այս ոլորտում: Հիմնականում գերակշռում է «կովկասյան գորշ» տեսակը: Միջին կաթնատվությունը 2100 լիտր/տարի է: Հեռագնա արտադրության օգտագործումը տարածված է, սակայն որոշ դեպքերում առկա է ջրի և էլեկտրաէներգիայի խնդիր, ինչը դժվարություններ է առաջացնում կիթի գործընթացի ավտոմատացման և կովերին խմելու ջրի ապահովման հարցում:

Կաթը ամբողջությամբ մթերվում է համայնքների ներսում և հարևան համայնքներում գործող հիմնականում պանիր արտադրող փոքր արտադրամասերի կողմից: 15 գլխից ավելի կով ունեցող ֆերմերները կաթն ամբողջությամբ հանձնում են: Նրանց շատ քիչ մասն է կաթից արտադրում կաթնամթերք՝ իրենց ներքին կարիքների բավարարման համար: Ավելի քիչ քանակությամբ կով ունեցող տնային տնտեսությունները հանձնում են կաթի 70%-ը, իսկ մնացածից արտադրում հիմնականում պանիր և յուղ՝ սեփական կարիքների բավարարման և մի քանի հիմնական հաճախորդներին վաճառելու համար:

Շուկայում կաթի միջին գինը տատանվում է 125-150 դրամի սահմանում: Ֆերմերները կաթի բարձր յուղայնության համար լրացուցիչ վարձատրվում են. բոլոր կաթ մթերողները ունեն յուղայնության, թթվայնության, ջրի բաղադրության ստուգման սարքեր:

Մսի վաճառքն իրականացվում է մսավաճառների միջոցով, ովքեր համայնքներից գնում են միսը: Երինջի և հորթի միսը վաճառվում է 1800-2200 դրամով, մնացածը՝ միջինը 1200-1500 դրամով: Ի տարբերություն կաթի՝ մսի իրացումը բավականին դժվար է, ինչը առաջացնում է ֆերմերների արդարացի դժգոհությունը:

Ոչխարները հիմնականում չեն կթվում, ինչը պայմանավորված է կիթի բարդությամբ: Վաճառում են գառներ՝ 35 000–40 000 դրամով::

Հողագործություն

Հողագործությունը ևս տարածված է համայնքներում: Հիմնականում ցանվում են բանջարեղեն, հացահատիկ և բազմամյա խոտաբույսեր: Պարարտացումը իրականացվում է հիմնականում ազոտական պարարտանյութով և գոմաղբով:

Մշակվող հողերի կեսից ավելին բաժին է ընկնում հացահատիկին՝ հիմնականում ցորենի և գարու մշակմանը: Մերմացուն ձեռք են բերվում Գյուղնախարարության կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրի շրջանակում:

Հողագործները բողոքում են սերմի որակից՝ լավագույն բերքատվությունը չի անցնում 30 ցենտները մեկ հեկտարի հաշվարկով:

Բազմամյա խոտաբույսերի մշակումը ևս բավականին տարածված է: Ցանովի խոտաբույսերի բարձր բերքատվության շնորհիվ հնարավորություն է ստեղծվում միավոր տարածության հաշվով ավելի շատ անասնախոտ ստանալու: Միննույն ժամանակ վարելահողերում ցանվող մշակաբույսերի տեսակների փոփոխությունը չի որակազրկում հողը, ինչն ապահովում է համեմատաբար բարձր բերքատվություն:

Զարգացման նախաձեռնություններ

Համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործիքների կիրառման արդյունքում բացահայտվեցին համայնքի տնտեսության զարգացման հետևյալ նախաձեռնությունները՝

Գյուղատնտեսություն

- Նոր շուկաների բացահայտում, արտադրանքի առաջմղում,
- գյուղտեխնիկայի թարմացում, մեքենատրակտորային պարկի ստեղծում,
- նոր սերմերի, սորտերի և տնկիների ներմուծում, սերմնաբուծության զարգացում,
- գյուղատնտեսական կրթական կենտրոնների ստեղծում,
- ոռոգման ջուր՝ ցանցեր, ջրամբար և այլն,
- սպանդանոցի կառուցում,
- կաթի մթերման կետի կառուցում,
- հակակարկտակայանների ստեղծում:

Տուրիզմ

- Շրջանի տուրիստական գրավչության գովազդում,
- տուրիստական քարտեզի ստեղծում,
- տուրիստական ռազմավարության մշակում և PR,
- համալսարանում տուրիզմի բաժնի բացում,
- միջավայրի մաքրություն և աղբահանություն,

- ցուցանակներ և վահանակներ,
- էկո տուրիզմի զարգացում,
- գետի մաքրում:

Բիզնես

- Փոքր արտադրամասերի ստեղծում,
- որակի ստանդարտների և տեխնոլոգիաների ներդրման աջակցություն,
- Ժամանցի վայրերի և ձեռնարկությունների ստեղծում:

Ընդհանուր և այլ

- Նոր դռներ և գործընկերների ներգրավում,
- լուսավորություն՝ փոքր գյուղերում,
- միջբնակավայրային և ներհամայնքային ճանապարհների բարելավում:

Առաջ և այ ի ն ախաձեռն ու թ յ ու ն ն ե ռ

Վարարակն գետի և հեղեղատների մաքրում.

	Վարարակն գետի	Սարգիս գետի	Սարգիս գետի	Սարգիս գետի	Սարգիս գետի	Սարգիս գետի
Գետի մաքրում	1	0	1	5	4	8
Սարգիս գետի (գետաբեր գետ)	2	2	1	1	3	10
Սարգիս գետի (գետաբեր գետ)	1	2	2	2	3	13
Սարգիս գետի (գետաբեր գետ)	1	2	1	2	3	11
Սարգիս գետի (գետաբեր գետ)	3	2	2	2	2	19
Սարգիս գետի	1	2	2	2	2	11
Սարգիս գետի	1	2	1	1	2	8
Սարգիս գետի	1	1	1	1	2	7
Սարգիս գետի	2	2	1	2	2	10
	14	17	11	14	22	12

Վարարակն գետը, որի ընդհանուր երկարությունը կազմում է 27.5 կմ, սկիզբ է առնում Իշխանասար լեռից, անցնում է չորս / Ակներ, Վերիշեն, Գորիս, Քարահունջ / համայնքներով և թափվում Որոտան գետը:

Համայնքում գետի երկարությունը կազմում է 9.6 կմ, որը այս համայնքների համար հանդիսանում է նաև որպես գլխավոր հեղեղատար: Գորիս խոշորացված համայնքում հեղեղատարներ հիմնականում կառուցված են Գորիս, Վերիշեն և Քարահունջ համայնքներում, որոնք թափվում են Վարարակն գետը: Հեղեղատարների քանակը 10-ն է, ընդհանուր երկարությունը 8670 մ: Ներկայումս թե՛ գետը, և թե՛ բոլոր հեղեղատարները ունեն մաքրման և վերանորոգման խիստ կարիք:

Ռելիեֆից ելնելով և հաշվի առնելով տարածաշրջանի եղանակային պայմանները՝ հեղեղատարների մաքրումը և շահագործումը թույլ կտան վազեցնելու համայնքային տարածքների հեղեղումների վտանգը, ինչը էականորեն ազդում է ինչպես գյուղատնտեսական նշանակության տարածքների շահագործման, այնպես էլ այլ նշանակություն ունեցող տարածքների փլուզման ու ավերվածության վրա, որոնք պարբերաբար կրկնվում են Գորիսում՝ առաջացնելով մեծ ավերածություններ:



Վարարակն գետի ընդհանուր մաքրման ենթակա մասի երկարությունը մոտ 8 կմ է, որից 3 կմ –ի դեպքում գետի լայնքը կազմում է 18 մետր, իսկ մնացած 5 կմ– ի դեպքում՝ միջինը 6,5 մետր:

Մաքրվելու ենթակա տարածքը կազմում է $3000 \text{ մ} * 18 \text{ մ} + 5000 \text{ մ} * 7 \text{ մ} = 89\ 000 \text{ քմ}$: Միջին հաշվարկով 1 քմ մաքրվող տարածքից դուրս կհանվի 0,25 խորանարդ աղբ: Մաքրվող տարածքից դուրս կհանվի ընդհանուր $89\ 000 \text{ քմ տարածք} * 0,25 = 22\ 250$ խորանարդ աղբ:

Հաշվի առնելով, որ գետի լայնքը մեծ է 2 մետրից և մաքրումը հնարավոր է իրականացնել տեխնիկայով՝ գետի մաքրման արժեքը կկազմի՝ $22\ 250 \text{ խորանարդ աղբ} * 1500 \text{ դրամ մեկ խորանարդի դիմաց} * 1,35 \text{ գործակից} = \text{մոտ } 45 \text{ մլն դրամ}$:

Հեղեղատարներից 3 000 մետրը ունի 3 մետր լայնություն, 5670 մետրը՝ մոտ 1.25 մետր լայնություն: 3 մետր լայնություն ունեցող հեղեղատարի մաքրումը հնարավոր է իրականացնել տեխնիկայի միջոցով, ինչի արժեքը կկազմի՝ $3000 \text{ մետր} * 3 \text{ մետր} * 0,35 \text{ խորանարդ աղբ} * 1500 \text{ դրամ} * 1,35 \text{ գործակից} = \text{մոտ } 6,4 \text{ մլն դրամ}$:

Հեղեղատների մնացած մասը պետք է մաքրվի ձեռքով, ինչի արժեքը կկազմի՝ $5670 \text{ մետր} * 1.25 \text{ մետր} * 0,35 \text{ խորանարդ աղբ} * 6000 \text{ դրամ} * 1,35 \text{ գործակից} = \text{մոտ } 20 \text{ մլն դրամ}$:

Ընդհանուր ծրագրի արժեքը կկազմի $45 \text{ մլն} + 20 \text{ մլն} + 6,4 \text{ մլն} = 71 \text{ մլն դրամ}$:

Օրագրի ազդեցության գնահատական

Օրագրի ուղղակի շահառուները Գորիս, Վերիշեն և Քարահունջ բնակավայրերի բնակիչներն են՝ մոտ 25 000 մարդ, ինչը կազմում է համայնքի բնակչության 85 % -ը: Անուղղակի շահառուներ են հանդիսանում համայնքի բոլոր բնակիչները, համայնք այցելող տուրիստները:

Մեքենաատրակտորային պարկի ստեղծում

Այժմ, երբ 12 հարևան բնակավայրերը համախմբվեցին մեկ խոշորացված Գորիս համայնքի մեջ, ավելի քան արդիական է բնակավայրերի միջև տրանսպորտային անխափան կապի ապահովումը, ինչպես նաև ժամանակակից գյուղատնտեսական սարքավորումների առկայությունը, ինչը թույլ կտա առավել արդյունավետ կազմակերպելու գյուղատնտեսական աշխատանքները, համագործակցությունն ու համատեղ աշխատանքները:

Այս խնդիրների լուծումը համայնքի բնակիչները տեսնում են մեքենատրակտորային պարկի ստեղծման միջոցով, որն իր էությամբ կծառայի վերը նշված երկու խնդիրների լուծմանը՝

1. բնակավայրերի միջև տրանսպորտային անխափան և հասանելի կապի ապահովում,
2. գյուղատնտեսական աշխատանքների համար անհրաժեշտ գյուղտեխնիկայի ապահովում:

Բնակավայրերի միջև տրանսպորտային անխափան և հասանելի կապի ապահովում.

Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է 5 մարդատար փոխադրամիջոց «Газель-Next» մակնիշի, որոնք կիրականացնեն բնակիչների տեղափոխում հինգ ուղղություններով՝

- 1-ին ուղղություն - Գորիս Վերիշեն-Ակներ,
- 2-րդ ուղղություն - Գորիս-Խնձորեսկ-Ներքին Խնձորեսկ,
- 3-րդ ուղղություն - Գորիս – Հարթաշեն,
- 4-րդ ուղղություն - Գորիս – Քարահունջ – Որոտան,
- 5-րդ ուղղություն - Գորիս – Բարձրավան – Շուռնուխ:

Մեկ ուղղության միջին գինը կլինի 100-400 ՀՀ դրամ (հաշվի է առնվում տարածքների հեռավորությունը Գորիս քաղաքից):

Հաշվի առնելով գին-որակ համադրությունը՝ «Газель-Next» ավտոմեքենաները արդյունավետորեն կարող են իրականացնել իրենց առջև դրված խնդիրը:

Մեկ այսպիսի մեքենան կարժենա մոտ 12 մլն դրամ: 5 այսպիսի մեքենաների արժեքը կկազմի **60 մլն. դրամ**: Ծառայությունը կմատուցի համայնքապետարանը: Ստացված եկամուտը կուղղվի տրանսպորտային պարկի հետագա շահագործմանը և այլ համայնքային նշանակության ծրագրերի իրականացմանը:

Միջին հաշվարկով այս տրանսպորտներից օրական կօգտվեն 500 – 800 քաղաքացի:

Գյուղատնտեսական աշխատանքների համար անհրաժեշտ գյուղտեխնիկայի ապահովում.

Համայնքում դաշտավարության մեջ հիմնական բաժինը կազմում է աշնանացան և գարնանացան հացահատիկի մշակումը: Ընդհանուր առմամբ համայնքում մշակվում է հացահատիկ՝ աշնանացան - 2875 հա, գարնանացան – 949 հա: Համայնքին պատկանող հողերից բացի, մոտավոր նույնքան տարածք մշակվում է համայնքի բնակիչների կողմից հարևան համայնքներին պատկանող հողերում: Այս տարածքների հունձն իրականացվում է

առկա 7 կոմբայնով, որոնց մեծ մասը բարոյապես և ֆիզիկապես մաշված են և գնալով դժվարանում է դրանց շահագործումը: Կոմբայների մաշվածությանը և սպասարկման բարձր արժեքին գումարվում է կրկնակի բարձր դիզվառելիքի ծախսը: Բերքահավաքի կորուստը կազմում է 30 - 35 %:

Բերքահավաքը արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է ևս 10 նոր կոմբայն, որոնց ձեռքբերման արժեքը կկազմի մոտ **480 մլն դրամ**:

Բացի կոմբայններից, գյուղատնտեսական աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է նաև 8 տրակտոր՝ իրենց կցորդ գործիքներով, ինչը կարժենա մոտ **150 մլն դրամ**:

Ծրագրի ընդհանուր արժեքը կկազմի **690 մլն դրամ**:


Ծրագրի ազդեցության գնահատական

Ծրագրի շահառուներն են՝

- համայնքի բոլոր բնակիչները, ովքեր հնարավորություն կստանան օգտվելու միջբնակավայրային տրանսպորտից,
- տուրիստների այն հատվածը, որը ճամփորդում է սեփական նախաձեռնությամբ՝ առանց տեղափոխող և ուղեկցող տրանսպորտի,
- համայնքում գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսությունները, որոնք կազմում են համայնքի ընդհանուր տնտեսությունների 60 % -ը:

ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ



Աղյուսակ 3. Սյունիքի մարզի համառոտ տվյալներ¹¹

Տարածքը	4 506 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	15.1%
Քաղաքային համայնքներ	7
Գյուղական համայնքներ	102
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	140.2 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	4.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	67.3 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	306 914.4 հա

¹¹ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015»

Տեղ համայնքը

Տեղ համայնքը գտնվում է Սյունիքի մարզի Գորիս քաղաքից 20կմ հեռավորության վրա, սահմանամերձ է: Տնտեսության հիմնական ճյուղերն են հողագործությունն ու անասնապահությունը: Համայնքների խոշորացման արդյունքում Տեղ համայնքը միավորում է Կոռնիձոր, Քարաշեն, Խնածախ, Արավուս, Վաղատուր և Խոզնավար բնակավայրերը:

Տեղ համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործընթացը սկսվեց 27.07.2016 –ին:

Տեղի տնտեսության մրցակցային առավելություն ունեն երը

Համայնքի տնտեսության մրցակցային առավելությունները վեր հանվեցին՝ օգտագործելով «LED cafe» մեթոդոլոգիան:



- մեծաքանակ վարելահողերի առկայություն,
- հողագործության ոլորտում երկար տարիների փորձ,
- Գորիս-Արցախ մայրուղին անցնում է համայնքի միջով, որը հնարավորություն է տալիս ճանապարհամերձ հատվածներում մատուցել տարատեսակ ծառայություններ և հիմնել առևտրի կետեր,
- գյուղատնտեսության զարգացման նպաստավոր պայմաններ՝ բերրի հողեր, արոտավայրեր և խոտհարքներ:

Տեղի տնտեսության նկարագիրը

Ըստ առաջատար ոլորտների բնակավայրի տնտեսության պատկերը ստանալու, ինչպես նաև զարգացման տնտեսական նախաձեռնությունները վեր հանելու համար օգտագործվեց «COMPASS» մասնակցային ախտորոշման և գնահատման գործիքը:



Համայնքի բնակչության հիմնական եկամտի աղբյուր են հանդիսանում անասնապահությունն ու հողագործությունը:

Հողագործության համար նպաստավոր պայմաններ են ապահովում աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները: Հողերը բերրի են: Մարդիկ մշակում են հիմնականում հացահատիկ: Բերքտվությունը 1 հա-ից կազմում է 2-2.5 տոննա: Ցորենի և գարու արտերը կազմում են մոտ 5600 հա:

Տեղ համայնքը բարենպաստ է նաև բանջար-բոստանային մշակաբույսերի մշակման և այգիներ հիմնելու համար: Խորհրդային տարիներին համայնքում մշակվել է մեծ քանակությամբ ձակընդեղ, ծխախոտ, կարտոֆիլ, կերային մշակաբույսեր, զբաղվել են նաև պտղաբուծությամբ: Սակայն ոռոգման ջրի բացակայության պատճառով այսօր մշակվում է միայն հացահատիկ: Նույնիսկ բազմամյա խոտաբույսերի (անասնակերի) աճեցումը շահավետ չի, եթե չի ոռոգվում:

Անասնապահությունը տնտեսության երկրորդ հիմնական ճյուղն է: Համայնքն ունի մոտ 10000 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որոնցից 4100-ը կովեր են, ինչպես նաև 40 000 գլուխ մանր եղջերավոր անասուններ:

Կաթի մի մասը տնտեսությունները հանձնում են շրջակա բնակավայրերում գործող պանրի փոքր գործարաններին, մի մասով էլ տնական պայմաններում իրենք են պանիր արտադրում: Կաթի իրացումը քիչ թե շատ բավարարում է, իսկ մսի և բրդի իրացումը մեծ բարդություն է գյուղացիների համար: Բրդի պահանջարկ չկա, գյուղացիք ամիսներով կուտակում են այն, հետո դեն նետում: Մսի գինը թելադրում են վերավաճառողները: Ֆերմերները դժգոհում են, որ այն գինը, որով վերավաճառողները գնում են միսը, շատ ցածր է, և շահույթ գրեթե չի մնում:

Զարգացման և ակաաձեռնու թյ ու ն ն ե ր

Մասնակցային ախտորոշման և պլանավորման վարժության միջոցով համայնքի բնակիչների և գլխավոր դերակատարների հետ դուրս բերվեցին տնտեսության զարգացման հետևյալ հիմնական նախաձեռնությունները.

1. Կաթի, մսի, բրդի իրացման շուկայի ապահովում

Համայնքում ներքին սպառումից զատ ստեղծվում է 70տ բուրդ, 250 տոննա գառի միս, 200 տոննա տավարի միս: Մշտական և կայուն շուկա չլինելու պատճառով միսը վաճառվում է մեծ դժվարությամբ և ցածր գնով, իսկ բուրդը թափվում է:

2. Որակյալ սերմերի և պարարտանյութի ապահովում

Սերմերի ապահովման մասով կառավարության կողմից իրականացվում են ծրագրեր: Սակայն հիմնական խնդիրը սերմացուի որակն է, որը հաճախ տարբեր է նախապես հայտարարածից: Պարարտանյութի տրամադրման ժամկետները ուշացնելու պատճառով այն ստիպված են լինում ձեռք բերել ավելի թանկ՝ շուկայից:

3. Միջբնակավայրային և հանդամիջյան ճանապարհների վերանորոգում

Ճանապարհներն անմխիթար վիճակում են: Անհրաժեշտ է կա՛մ կապիտալ վերանորոգում, կա՛մ էլ համայնքի սեփականություն հանդիսացող էքսկավատոր ու գրեյդեր, որպեսզի ամեն տարի ինքնուրույն կատարվեն բարեկարգման աշխատանքները:

4. Խմելու ջրի ներքին ցանց

Միայն Խնածախ բնակավայրում բացակայում է խմելու ջրի ներքին ցանցը:

5. Լուսավորության ապահովում

Համայնքն իր 7 բնակավայրերով զրկված է երեկոյան լուսավորությունից:

6. Աղբահանության կազմակերպում

Կանոնավոր աղբահանություն չի իրականացվում: 2 աղբատար ավտոմեքենայի և անհրաժեշտ քանակի աղբամանների ձեռքբերմամբ հնարավոր է կազմակերպել բնակավայրերի աղբահանությունը:

7. Կոյուղու կառուցում


Համայնքը չունի կոյուղի: Բնակիչները ենթակառուցվածքային խնդիրներից առանձնացնում են նաև կոյուղու կառուցումը:

8. Ոռոգման համակարգի կառուցում

Գրեթե բոլոր համայնքներում առկա է ոռոգման ներքին ցանցերի վերանորոգման խնդիր: Այդ ցանցերի մեծ մասը տեխնիկապես մաշված են, ինչ պատճառով տեղի է ունենում զգալի ջրի կորուստ:

9. Մեքենատրակտորային կայանի հիմնում

Քվեարկության միջոցով առանձնացվեցին երկու առաջնային նախաձեռնություններ՝ ոռոգման համակարգի կառուցում և մեքենատրակտորային կայանի հիմնում:



Առաջ ն այ ի ն ն ախաձեռն ու թ յ ու ն ն եր

Ոռոգման համակարգի կառուցում

Տեղ համայնքում մշակվում է մոտ 5600 հա հող: 90 %-ը չի ոռոգվում: Պատկերն ըստ բնակավայրերի հետևյալն է.

Աղյուսակ 4. Հող մշակող տնտեսությունների հիմնական ցուցանիշները ըստ բնակավայրերի:¹²

Բնակավայրեր	Հող մշակող տնտեսություններ	Վարելահողեր (հեկտար)	Որից՝ ջրովի(հեկտար)	Զմշակվող (հեկտար)
Տեղ	600	2200	-	-
Կոռնիձոր	298	1250	500	-
Քարաշեն	130	450	-	-
Խնածախ	240	730	-	150
Արավուս	45	630	-	-
Վաղատուր	100	200	-	100
Խոզնավար	90	200	-	100
Ընդամենը	1503	5660	500	350

Մշակվող հողերի 75%-ը բաժին է ընկնում ցորենի, 20%-ը՝ գարու և 5%-ը՝ հաճարի մշակմանը: Կոռնիձորի տնամերձ հողամասերում, որտեղ ոռոգման ջուր կա, մոտ 40 հա բանջարեղեն է մշակվում: Բանջարեղենի մշակման դեպքում ճյուղի եկամտաբերությունն

¹² Աղբյուր՝ համայնքային հանդիպումների արդյունքում ստացված տվյալներ:

անհամեմատ ավելի բարձր է, քան հացահատիկի մշակման դեպքում: Մակայն ոռոգման ջրի բացակայության պատճառով բանջարաբուստանային մշակաբույսերի աճեցումը չի ընդլայնվում և զարգանում: Տարիներ առաջ այս գոտում մշակվել են կարտոֆիլ, կաղամբ, ծխախոտ, լոլիկ, վարունգ, լոբի, սոխ, ինչպես նաև անասնակերի համար՝ ճակնդեղ և առվույտ: Թվարկված բոլոր մշակաբույսերը, ջրի առկայությամբ պայմանավորված, ապահովել են բարձր բերքատվություն: Իսկ ներկայումս ոռոգման ջուր չկա, և նշված բոլոր տեսակները հիմնականում չեն մշակվում:

Ծրագրի մոտավոր պատկերը

Ոռոգման ջրով ապահովելու համար պահանջվում է Մայր ջրանցքի մոտ կառուցել պոմպակայան, որտեղից 5 կմ առուներ (կիսախողովակ) անցկացնելով՝ ջուրը կհասնի Տեղ բնակավայրին, 3 կմ խողովակաշար/առու անցկացնելով՝ Խոզնավար, Վաղատուր, Խնածախ բնակավայրեր, և 500 մետր՝ դեպի Քարաշեն և Արավուս:

Տեղ բնակավայրում ոռոգման ջրի հասանելիության ապահովման համար հարկավոր է 2.5 կմ ներքին ցանց, իսկ Քարաշեն բնակավայրում՝ 700 մետր:

Ծրագրի արժեքը

Նախնական հաշվարկներով ծրագիրը կարժենա մոտ **500 մլն** դրամ:

Ծրագրի ազդեցության գնահատական

Տեղ համայնքում 1503 տնտեսություն է ներգրավված հողագործության մեջ՝ գրեթե ամբողջ համայնքը: Յուրաքանչյուր տնտեսություն մշակում է միջինը 3-4 հա հող (0.5-10 հա): 1 հա հացահատիկի մշակումից 1 տնտեսության եկամուտը կազմում է 150-250 հազար դրամ, իսկ բանջարաբուստանային մշակաբույսերի դեպքում՝ 1-3 մլն դրամ՝ կախված մշակաբույսի տեսակից: Ոռոգման ջրի առկայության պայմաններում բնակիչները պատրաստակամ են անցում կատարել բանջարաբուստանային մշակաբույսերի աճեցմանը, ինչպես նաև այգիներ հիմնելուն:

Ծրագրի իրականացման արդյունքում ոռոգովի կղառնան վարելահողերի 80-90%-ը: Տնային տնտեսությունները 40-60% եկամուտների աճ կունենան հացահատիկի և անասնակերի մշակման ոլորտում, իսկ բարձրարժեք մշակաբույսերի անցման դեպքում՝ 200-300% եկամտի աճ:

Մեքենաառքակտորային կայանի հիմնում

Այս նախաձեռնությունը, ինչպես և ոռոգման համակարգի կառուցումը, ուղղված է Տեղ համայնքում հողագործության զարգացմանը և համայնքի բակչության եկամտի աճին: Հացահատիկի բերքահավաքն իրականացնող կոմբայները ավելի քան 30 տարեկան են, ֆիզիկապես և բարոյապես մաշված: Հացահատիկի բերքի 30-50 %-ը մնում է դաշտում՝ որպես կորուստ: Բերքահավաքի ժամանակը ձգձգվում է գյուղտեխնիկայի հաճախակի վերանորոգման պատճառով: Պահեստամասերի հաճախակի ձեռքբերման և վառելիքի գերածախսով պայմանավորված՝ բերքահավաքի ինքնարժեքը բարձրանում է: Նույն պատկերն է նաև վարելահողերի վար ու ցանք կատարող մեխանիզացիայի դեպքում:

Հացահատիկի բերքահավաքի արդյունավետ կազմակերպման համար հարկավոր է մեքենա-տրակտորային պարկի հիմնում՝ 3 հատ կոմբայն, ինչպես նաև սերմնագոտիչ՝ 2 հատ, իսկ հանդամիջյան և ներհամայնքային ճանապարհների կարգավորման համար՝ 1 հատ փոքր էքսկավատոր, 1 հատ գրեյդեր:

Ծրագրի արժեքը


Նախաձեռնության իրականացման համար պահանջվում է մոտ 150-250 մլն. դրամ (կախված կոմբայնների տեսակից և գնից՝ 1 հատը 30-50 մլն. դրամ):

Ծրագրի ազդեցության գնահատական

Գյուղատնտեսական նշանակության տեխնիկայի շահառու են համարվում համայնքի գրեթե բոլոր տնտեսությունները, որոնք զբաղվում են հողագործությամբ՝ 950 տնտեսություն: Ներհամայնքային ճանապարհների վերանորոգումը կամ բարեկարգումը ուղղակիորեն ազդում է բոլոր բնակավայրերի բնակիչների գործունեության վրա:

ԳՈՐՀԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ



Աղյուսակ 5. Սյունիքի մարզի համառոտ տվյալներ¹³

Տարածքը	4 506 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	15.1%
Քաղաքային համայնքներ	7
Գյուղական համայնքներ	102
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	140.2 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	4.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	67.3 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	306 914.4 հա

¹³ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015»

Գորհայք համայնքը

Գորհայք համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործընթացը սկսվեց 27. 07. 2016 –ին:

Գորհայք համայնքը ներառում է չորս բնակավայր՝ Գորհայք, Սպանդարյան, Ծղուկ և Սառնակունք: Գորհայքը անասնապահական համայնք է: Այստեղ գյուղացիական տնտեսությունների մեծ մասի եկամտի հիմնական աղբյուրը անասնապահությունն է: Երկրորդ խոշոր ճյուղը հողագործությունն է. զբաղվում են ցորենի, գարու և կարտոֆիլի մշակմամբ:

Համայնքի տնտեսության մրցակցային առավելությունները


Համայնքի տնտեսության մրցակցային առավելությունները և տնտեսության նկարագիրը վեր հանվեցին՝ օգտագործելով «LED cafe» մեթոդոլոգիան:

Գորհայքի տնտեսության զարգացման համար կան որոշ նախադրյալներ և մրցակցային առավելություններ:

- Համայնքը և դրանում ներառված բնակավայրերը լեռնային են, հարուստ անասնապահական ռեսուրսներով՝ արոտավայրեր, խոտհարքեր և վարելահողեր:
- Մարդիկ ավանդաբար զբաղվում են անասնապահությամբ և ունեն համապատասխան փորձ և գիտելիք:
- Արդեն մի քանի տարի է, ինչ Սառնակունքում գործում է անասնապահական ռեսուրսային կենտրոնը, որը որակյալ անասնաբուժական ծառայություններ է մատուցում, տարածաշրջանում լավագույն մասնագետները այս կենտրոնում են աշխատում:
- Ծղուկում գործում է կաթի վերամշակման ժամանակակից սարքավորումներով հագեցած ձեռնարկություն, որը նաև տարածաշրջանի՝ կաթի հիմնական մթերոդներից է:
- Վարելահողերը բերրի են, համապատասխան սերմացուի օգտագործման դեպքում հնարավոր է ստանալ ցորենի և գարու՝ հանրապետության միջինից բարձր բերք:
- Համայնքի տարածքով անցնում է Հյուսիս-Հարավ ավտոմայրուղին, ինչն արտադրանքի իրացման լրացուցիչ հնարավորությունն է ստեղծում՝ մեղր, վայրի խոտաբույսեր և այլն:

Գորհայքի տնտեսության նկարագիրը

Ըստ առաջատար ոլորտների բնակավայրի տնտեսության պատկերը ստանալու, ինպես նաև տնտեսական զարգացման նախաձեռնությունները վեր հանելու համար՝ օգտագործվեց Մ. Պորտերի «Ադամանդ» մասնակցային ախտորոշման և գնահատման գործիքը:¹⁴



Տնտեսության առաջատար ճյուղերը անասնապահությունն ու հողագործությունն են: Գորհայքի տնտեսության պատկերը վիճակագրական թվերով հետևյալն է՝


Աղյուսակ 6. Գորհայքի գյուղատնտեսության հիմնական ցուցանիշները:

Գյուղատնտեսություն	Թվաքանակ
Մեղվաբնտանիքներ	1019
Մանր եղջերավորներ	4981
Խոշոր եղջերավորներ	4285
Որից՝ կովեր	1944
Խոզեր	210
Գյուղնշանակության հողեր/ հա	45080
Որից՝ վարելահող	4682
Խոտհարք	1822
Արոտ	28215
Այլ հողեր	10360

¹⁴ Պորտերի «Ադամանդ» մասնակցային ախտորոշման և գնահատման գործիքը, որը թույլ է տալիս գնահատել տնտեսության առաջատար ճյուղերի ներքին որակը, զարգացման համար էական գործոնները, շուկան և օժանդակ ճյուղերը:


Ան սս ն սսսսսս ու թյ ու ն

Անասնապահության հիմնական ուղղությունները ոչխարաբուծությունն ու խոշոր եղջերավոր անասնապահությունն են: Համայնքը հիմնականում արտադրում է միս և կաթ: Մսի հիմնական գնորդը մթերողներն են, ովքեր այն իրացնում են երևանյան շուկաներում: Համայնքում մսի մթերման և Երևանում դրա իրացման գների տարբերությունը մոտ 50 % է՝



Տավարի մսի նման ինքնարժեք ստացվում է, եթե գյուղացիական տնտեսությունն ունի տասը գլխից ավել ցուլիկներ և տարվա մի մասը այն պահում է հեռագնա արտադարյում: Ավելի քիչ քանակի կամ միայն գյուղում պահքի դեպքում մսի ինքնարժեքն աճում է մոտ 20%-ով:

Տարվանից և սեզոնայնությունից կախված՝ մոտավորապես նույն պատկերն է նաև ոչխարի մսի իրացման շուկայում: Այս ոլորտում խոշոր արտահանողներ կան, սակայն նրանց գործունեությունն էլ կայուն չէ և ուղղակի կախված է առկա պատվերներից: Կաթի գների դեպքում հետևյալ իրավիճակն է՝



Եթե գյուղացիական տնտեսություններն ուղղակի իրացնում են կաթը, ապա այս գործունեության շահութաբերությունը մոտ 30% է, որը, եթե հաշվի առնենք տնտեսությունների չափերը, չի բավարարում անգամ ընտանիքի առօրյա սպառմանը: Այս ոլորտը նվազման միտում ունի՝ պայմանավորված կաթի գների տատանումներով:


Համայնքում գործող պանրի արտադրամասը և տնային պայմաններում պանրի արտադրությունը որոշակիորեն փոխում են պատկերը: Այսպես, եթե գյուղացիական տնտեսությունը, թեկուզ տնային պայմաններում պանիր է արտադրում, այլ ոչ թե իրացնում է կաթը, տնտեսության եկամտաբերությունը մոտ երկու անգամ աճում է:

Սառնակունքի անասնապահական ռեսուրսային կենտրոնը էական ազդեցություն ունի այս ոլորտի զարգացման վրա: Այն նպաստում է արհեստական սերմնավորման, անասնաբուժական ծառայությունների, ինչպես նաև ընդհանուր գյուղատնտեսական ծառայությունների արդյունավետության բարձրացմանը:

Անասնապահության զարգացման սխեմատիկ պատկերը ներկայացված է ստորև՝

- Գյուղացիական տնտեսությունների իրավիճակը
- + Ընդարձակ հողատարածքներ՝ արոտավայրեր, խոտհարքներ
 - + Ավանդական փորձ և գիտելիք
 - Գոմային պայմանները անբարենպաստ են
 - Ժամանակակից տեխնոլոգիաներ չեն կիրառվում
 - Կազմակերպման և շուկայավարման հմտություններ չկան
 - Աշխատակազմի որակավորումը ցածր է
 - Տնտեսությունների ընդլայնման ներքին հնարավորությունները փոքր են

- Արտադրական գործոններ
- + Ոլորտի վերաբերյալ գիտելիքի կենտրոնի առկայություն (CARD)
 - + Հասանելի ֆինանսներ՝ հնարավոր է վարկեր ստանալ
 - + Միջպետական մայրուղու հարևանություն
 - + Գյուղատնտեսության աջակցության պետական միջոցառումներ՝ վառելիքի սուբսիդավորում և այլն:




- Շուկայի դինամիկա
- Մսի գները համեմատաբար կայուն են վերջին երեք տարիների ընթացքում
 - Կաթի գները անկայուն են կամ կրճատվում են
 - Բնակչությունն ավելի շատ է հակվում դեպի էկոլոգիապես մաքուր սնունդը՝ արտադրված գյուղերում

- Հարակից ճյուղեր
- + Անասնաբուժական և արհեստական սերմնավորման ծառայություններ
 - + Խոտի արտադրություն
 - Անասնակերի արտադրություն
 - Գյուղտեխնիկայի ծառայությունները անարդյունավետ են՝ պայմանավորված դրանց մաշվածությամբ

Հողագործություն

Հողագործության հիմնական արտադրանքը ցորենն է:

Մեկ հեկտարից այստեղ ստանում են մոտ երկու տոննա ցորեն, ինչը հանրապետական միջինին մոտ ցուցանիշ է:¹⁵



Մեկ հացահատիկ արտադրող տնտեսությանը միջինը ունի մոտ հինգ հեկտար տարածք, հետևաբար, այդ տնտեսությունը ստանում է մոտ 300 հազար դրամ շահույթ ամբողջ տարվա համար: Այս գումարը չի բավարարում անգամ ընտանիքի ընթացիկ ծախսերին:

Համայնքը և գյուղացիական տնտեսությունները չունեն բավարար ներուժ գյուղատնտեսական տեխնիկայի, որակյալ սերմացուի, պարարտանյութի կամ ոռոգման ցանցերի մեջ ներդրումներ անելու համար:

Հողագործության զարգացման հիմնական մարտահրավերները՝

- Նոր կոմբայն և այլ գյուղատնտեսական տեխնիկա: Հին կոմբայնները բերքի մոտ 30%-ը չեն կարողանում հավաքել, որից էապես նվազում է տնտեսությունների շահութաբերությունը:
- Էական դժվարություններ կան նաև հողի վարը կազմակերպելու հարցում. հին և դեռևս խորհրդային տարիներից մնացած տեխնիկական վատ է վարում հողը և նվազեցնում բերքատվությունը:
- Հողը տարբեր տեղերում քարքարոտ է, իսկ մելորացայի համար տեխնիկա համայնքում չկա:
- Սերմացուն, թեկուզև տրամադրվել է պետական աջակցության ծրագրով, այդուհանդերձ ոչ միշտ է որակյալ է և առաջացնում է գյուղացիների դժգոհությունը:
- Պետական աջակցության ծրագրով սուբսիդավորում են պարարտանյութի և վառելիքի գները, դրանք հասանելի են գյուղացիներին:

¹⁵ Աղբյուր՝ համայնքային հանդիպումների արդյունքում ստացված տվյալներ:

Զարգացման նախաձեռնություններ

Համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործիքների կիրառման արդյունքում բացահայտվեցին համայնքի տնտեսության զարգացման հետևյալ նախաձեռնությունները՝

- Գյուղտեխնիկայի պարկ, հատկապես՝ նոր կոմբայնի ձեռքբերում համայնքի համար:
- Մելրացիայի սարքավորման ձեռքբերում, որը կնպաստի քարքարոտ հողերի մաքրմանը և վարելահողերի ավելացմանը:
- Ոռոգման ջրատարների և ներքին ցանցերի կառուցում՝ վարելահողերը ջրովի դարձնելու համար:
- Սերմնաբուծական տնտեսության ստեղծում, որը կմատակարարի որակյալ ցորենի սերմացու:
- Գրեյդեր- մեքենայի ձեռքբերում, որը հնարավորություն կտա մշտապես բարեկարգել գյուղամիջյան և հանդամիջյան ճանապարհները, ինչպես նաև ձմռանը մաքրել ձյունը:
- Կաթնամթերքի և մսամթերքի վերամշակման ձեռնարկությունների հիմնման աջակցություն:
- Կաթի և մսի իրացման աջակցության մեխանիզմների մշակում և ներդրում:

2	1	2	2	2	8
1	0	0	2	2	3
1	0	0	1	1	3
1	0	1	3	2	4
1	2	2	2	2	9
1	1	1	2	2	7

10 14 8 11 9

Մասնակցային վարժության միջոցով առանձնացվեցին առաջնային նախաձեռնությունները, որոնք, ըստ համայնքի բնակիչների, ամենաեական ազդեցությունը կարող են ունենալ տնտեսական զարգացման վրա՝

- Գյուղտեխնիկայի պարկ
- Հանդամիջյան ճանապարհների բարեկարգում, Գրեյդեր-մեքենայի ձեռքբերում:

Այս նախաձեռնությունները ստորև ներկայացվում են ավելի մանրամասն:

Առաջնային նախաձեռնություններ

Գյուղտեխնիկայի պարկ, մեքենա և ստորակտրային կայան

Համայնքում ցորենի մշակումը առաջատար ճյուղերից է: Բերքատվության բարձրացման մի քանի հիմնական խոչընդոտներ կան, որոնցից բնակիչները առանձնացնում են վարի և բերքահավաքի անարդյունավետությունը:

- Առկա կոմբայնները հին են և բերքի մոտ 30%-ը չեն կարողանում հավաքել:
- Կոմբայնների չհավաքված բերքը հաջորդ տարի խանգարում է նորմալ ցանքաշրջանառությանը:
- Վարի տեխնիկան նույնպես հին է. մեծ է վառելիքի ծախսը և ցածր՝ վարի որակը:
- Արդյունքում՝ ցորենի բերքատվությունը նվազում է մոտ 30%- ով, կամ՝ յուրաքանչյուր գյուղացիական տնտեսություն ստանում է մոտ 100.000 դրամ քիչ եկամուտ:

Գյուղացիական տնտեսությունների 60% տոկոսը ցորեն է աճեցնում, օգտվում գյուղատնտեսական տեխնիկայի ծառայություններից:

Տարեկան համայնքում ցանում են ավելի քան 3000 հեկտար ցորեն: Միայն գյուղտեխնիկայի ցածր որակով պայմանավորված՝ մարդիկ կորցնում են մոտ 1000 տոննա բերք կամ 150 մլն դրամ եկամուտ: Գյուղտեխնիկայի պարկը կարող է ներառել շարքացաններ, կոմբայն և վարի տրակտոր: Այս ներդրման արժեքը 70-80 մլն. դրամ է:

Մեքենատրակտորային պարկը կարող է լինել համայնքապետարանի ենթակայության տակ, իսկ ծառայությունները մատուցվեն մինչև քսան տոկոս շուկայականից ավելի էժան գներով: Գյուղտեխնիկայի շահագործումից առաջացող եկամուտներով համայնքը կարող է ձեռք բերել համայնքին անհրաժեշտ այլ տեխնիկա: Ավելացող գումարն էլ կուղղվի համայնքի այլ խնդիրների լուծմանը:

Ծրագրի ազդեցության գնահատական

Ծրագրի արդյունքում՝

- շահառու տնտեսությունների քանակը՝ ավելի քան 300,
- յուրաքանչյուր տնտեսության շահութաբերության մոտ 30%- ով աճ,
- տարեկան մշակվող տարածքների 15-20 տոկոսով ավելացում:

Համայնքի տեսանկյունից ներդրումը հնարավոր է ետ բերել մոտ հինգ տարում: Իսկ եթե հաշվի առնենք նաև բերքի կորուստը հին գյուղատնտեսական տեխնիկայի պատճառով, ապա այդ ժամկետը ավելի կարճ կլինի:

Հ ան դ ամ ի ջ յ ան ճ ան սպար հ ն ե ռ ի ք ս ր ե կ ս ր գ ու մ

Ունենալով ավելի քան հազար կիլոմետր հանդամիջյան և ներհամայնքային ճանապարհներ՝ Գորհայքը չունի այդ ճանապարհները վերանորոգելու կամ անցունակ պահելու միջոցներ:


Յուրաքանչյուր տնտեսություն տարեկան ծախսում է ավելի քան հիսուն հազար դրամ հանդամիջյան ճանապարհներով բեռնափոխադրումների վրա (ընդամենը՝ 25 մլն դրամ), որի ավելի քան 20%-ը պայմանավորված է ճանապարհների անմխիթար վիճակով (մոտ հինգ մլն դրամ):

Հանդամիջյան ճանապարհների պարբերական բարեկարգումը հնարավորություն կընձեռնի տնտեսությունների ավելի արդյունավետ կազմակերպելու բեռնափոխադրումները և բարձրացնելու տնտեսության շահութաբերությունը:

Ճանապարհների բարեկարգման համար անհրաժեշտ է գրեյդեր- մեքենա և էքսկավատոր: Դրանց շուկայական արժեքը մոտ 80 մլն դրամ է, 40 մլն գրեյդերը և մոտ 40 մլն՝ էքսկավատորը: Մեքենան կարող է օգտագործվել նաև ձմռան ընթացքում ճանապարհների մաքրման համար:

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ



Աղյուսակ 7. Սյունիքի մարզի համառոտ տվյալներ¹⁶

Տարածքը	4 506 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	15.1%
Քաղաքային համայնքներ	7
Գյուղական համայնքներ	102
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	140.2 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	4.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	67.3 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	306 914.4 հա

¹⁶ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015»

Մեղրի համայնքը

Համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործընթացը սկսվեց 19. 08. 2016 –ին:

Մեղրի խոշորացված համայնքը իր մեջ ներառում է Մեղրի, Ագարակ, Այլվանք, Գուդեմնիս, Լեհվազ, Լիճք, Կարճևան, Կուրիս, Նոնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր և Տաշտուն բնակավայրերը:



Մեղրին Հայաստանի հարավային համայնքն է, գտնվում է Զանգեզուրի հարավում՝ 390 մ–ից (Մեղրու կիրճ) մինչև 3904 մ (Կապուտջուղ) բարձրությունների վրա: Ունի լեռնային կտրտված մակերևույթ: Հյուսիսում և հյուսիս-արևելքում Մեղրու լեռնաշղթան է, արևմուտքում՝ Զանգեզուրի լեռնաշղթան: Տարածքի զգալի մասը զբաղեցնում է Մեղրու կիրճը: Կան ոսկու, բազմամետաղային, պղնձի, մոլիբդենի, երկաթի և կրաքարի հանքավայրեր:

Գերակշռում են անտառային ու ալպիական մարգագետնային լանդշաֆտները:

Համայնքի տնտեսության հիմքում գյուղատնտեսությունն է, գյուղմթերքների վերամշակումն ու հանքարդյունաբերությունը:

Մեղրիի մրցակցային առավելությունները

Համայնքի տնտեսության մրցակցային առավելությունները վեր հանվեցին՝ օգտագործելով «LED cafe» մեթոդոլոգիան:

- Գտնվում է Հայաստան-Իրան սահմանի վրա, ինչը մեծ հնարավորություն է ստեղծում միջսահմանային համագործակցության համար: Համայնքի վարչական տարածքում է գտնվում նաև Հայաստան-Իրան անցակետը:
- Համայնքի միջով է անցնում M2 միջպետական ճանապարհը, որն Իրանը Հայաստանին կապող միակ ճանապարհն է:
- Համայնքի ռելիեֆը բազմազան է: Այն տեղակայված է 390 մ–ից մինչև 3904 մ բարձրության վրա, ինչը թույլ է տալիս ինչպես աճեցնելու տարբեր մշակաբույսեր, պտուղներ, այնպես էլ օգտվելու ալպիական մարգագետիններից:
- Համայնքը ապահովված է ոռոգման ջրի բավականին մեծ պաշարով, համայնքի տարածքով են հոսում Մեղրի, Տաշտուն, Կարճևան, Մալև և այլ գետեր:

- Կան ոսկու, բազմամետաղային, պղնձի, մոլիբդենի, երկաթի և կրաքարի հանքավայրերի առկայություն, որը որոշակիորեն լուծում է բնակչության զբաղվածության խնդիրը:


Մեղրիի տնտեսության նկարագրիչը

Հստ առաջատար ոլորտների բնակավայրի տնտեսության պատկերը ստանալու համար՝ օգտագործվեց «COMPASS» մասնակցային ախտորոշման և գնահատման գործիքը:



Այգեգործություն և պտղի վերամշակում

Համայնքում այգեգործությունը ավանդապես զարգացած է եղել: Այստեղ աճեցվող թուզը, նուռը, սերկևիլը, խաղողը, դեղձը և այլ մրգերը միշտ հայտնի են եղել իրենց անուշաբույրությամբ և քաղցրահամությամբ: Վերջին տարիներին աճեցվող ավանդական մրգերին ավելացել են նաև մերձարևադարձային կուլտուրաներ՝ արքայանարինջ, կիվի, զեյթուն և այլն: Ստորև ներկայացված է արտադրվող մրգերի տեսակարար կշիռը՝ ըստ մրգերի տեսակների (*Աղբյուր՝ համայնքային հանդիպումների արդյունքում ստացված տվյալներ*):



Արտադրվող մրգերը հիմնականում վաճառվում են տեղի արտադրողների միջոցով. վաճառված բերքը տեղափոխում և վաճառում են Ղափանում, Գորիսում, Երևանում և այլ տարածքներում: Այստեղ բավականին բարդություն է առաջացնում ճանապարհը, որը, չնայած ասֆալտապատված է, բայց բավականին դժվար անցանելի է բազմաթիվ ուղորանների պատճառով: Բերքի տեղափոխումը զգալիորեն բարձրացնում է ինքնարժեքը:

Համայնքում գործում են պահածոների և գինու գործարանները, որոնք մասամբ մթերում են արտադրվող բերքը: Վերջին տարիներին զգալիորեն ավելացրել են մրգերի վերամշակման փոքր արտադրամասերը (հյութերի, մուրաբաների, չրերի արտադրություն) և սառնարանները, որոնց արտադրանքը հիմնականում վաճառվում է մեծածախ՝ Երևան քաղաքում գործող վերավաճառողներն: Արտադրանքի որոշ մասը արտահանվում է ՌԴ:

Դաշ տավար ու թյ ու ն

Հատկապես համայնքի փոքր բնակավայրերում դաշտավարության մեջ են զբաղված գրեթե բոլոր տնային տնտեսությունները: Ընդհանուր առմամբ մշակվում է մոտ 750հա վարելահող՝ որտեղ աճեցվում են բանջարեղեն, հացահատիկ և անասնակեր:

Աճեցվող բանջարեղենի շահութաբերությունը 5–10 անգամ գերազանցում է հացահատիկի շահութաբերությանը, ինչի արդյունքում բոլոր այն վարելահողերում, որտեղ հասանելի է ոռոգման ջուրը, հիմնականում աճեցվում է բանջարեղեն:

Արտադրվող բանջարեղենը և հացահատիկը վաճառվում են համայնքի ներսում և Ղափանում՝ հիմնականում բալկերի միջոցով:

Համայնքում աճեցնում են 5 -6 տեսակ բազմամյա խոտաբույսեր և սիլոսային կերեր:

Խոզաբուծություն

Խոզաբուծությունն այնքան էլ տարածված չէ համայնքում: Հիմնականում անասնապահությամբ զբաղվող ընտանիքները սեփական կարիքների համար պահում են մեկ–երկու գլուխ խոզ:

Ան սա ն սալահ ու թյ ու ն ն մեղ վաբ ու ծ ու թյ ու ն

Համայնքում հավասարապես զարգացած է մանր և խոշոր եղջերավոր անասնապահությունը: Ստորև ներկայացված է անասնապահության ցուցանիշները ըստ բնակավայրերի:

Աղյուսակ 8. Անասնապահության ցուցանիշները Մեղրի համայնքում (պաշտոնական վիճակագրություն):

Միավորվող համայնքներ	Մեղվա ընտանիքներ	Խոզեր	Ոչխարներ և այծեր	Խոշոր եղջերավոր անասուններ	
				Ընդամենը	Կովեր
1.Մեղրի	1200	0	350	156	76
2.Ագարակ	117	154	330	193	80
3.Ալվանք	12	31	46	85	24
4.Գուդեմնիս	0	0	200	15	8
5.Լեհվազ	251	118	508	76	33
6.Լիճք	175	19	55	72	35
7.Կարճևան	342	6	135	71	32
8.Կուրիս	33	0	5	27	14
9.Նոնաձոր	0	28	0	125	0
10.Շվանիձոր	0	19	0	138	48
11.Վահրավար	52	0	0	23	10
12.Վարդանիձոր	209	333	770	217	76
13.Տաշտուն	87	1	139	134	59
Ընդամենը	2478	709	2538	1332	495

Մեղ վաբ ու ծ ու թյ ու ն

Համայնքում առկա է մոտ 2500 մեղվաընտանիք, ինչի զարգացման հիմքը հարուստ և բազմազան բնությունն է: Մեղրի մեծ մասը վաճառում են փոքր քանակություններով հիմնական հաճախորդներին 3500–5000 դրամով մեկ կիլոգրամի դիմաց՝ կախված բերքի քանակից: Վաճառքը իրականացնում են ինչպես սովորական տարրաներով, այնպես էլ մեղրի համար նախատեսված և հատուկ փաթեթավորում և դիզայն ունեցող տարրաներով:

Մանր եղջերավոր ան սա ն սալահ ու թյ ու ն

Համայնքի լեռնային կտրտված մակերեսը նպաստում է մանր եղջերավոր անասնապահության զարգացմանը: Կենդանիներին հիմնականում չեն կթում, վաճառում են գառները և ուլերը: Վաճառքը իրականացնում են համայնքի ներսում՝ տեղի բնակիչներին և Իրանից ժամանած զբոսաշրջիկներին: Հիմնական խնդիրը բրդի պահանջարկի

բացակայությունն է: Այն գրեթե չի վաճառվում՝ առաջացնելով ինչպես ֆինանսական, այնպես էլ պահպանման տարածքի հետ կապված բարդություններ:


Խոշոր եղջերավոր անասնապահություն

Գերակշռում է «կովկասյան գորշ» տեսակը: Կաթնատվությունը տարեկան 1300–1500 լիտր է: Արտադրված կաթը վաճառվում է փոքր քանակությամբ համայնքի ներսում: Որոշ տնտեսություններ տնական պայմաններում արտադրում են պանիր և այն վաճառում մեկ կիլոգրամը 1300–1500 դրամով:

Հանքարդյունաբերություն

Մեղրին բնական ռեսուրսների մեծ պաշարներ ունի, որից ամենատարածվածը պղնձամոլիբդենային հումքի ատկայությունն է: Համայնքի (հատկապես Ագարակ բնակավայրի) տնտեսության վրա ուղղակիորեն ազդեցություն ունի «Ագարակի ՊՄ կոմբինատ» ՓԲԸ-ն, որն ապահովում է աշխատանքով բավականին մեծ թվով տեղի բնակիչների:

Զարգացման նախաձեռնություններ



Մասնակցային ախտորոշման և պլանավորման վարժության միջոցով համայնքի բնակիչների և գլխավոր դերակատարների հետ դուրս բերվեցին տնտեսության զարգացման հետևյալ հիմնական նախաձեռնությունները.

Միջհամայնքային տրանսպորտ և աղբահանություն

Այս նախաձեռնությունը ամենապահանջվածն է տեղի բնակիչների շրջանում: Միջհամայնքային տրանսպորտի բացակայությունը ուղղակիորեն ազդում է մարդկանց տեղափոխման վրա՝ ստեղծելով բարդություններ ինչպես աշխատանքի գնալու, այնպես էլ բերքի իրացման դեպքում: Աղբահանության կազմակերպումը ևս

այս պահին բավական մեծ խնդիր է համայնքի համար անհարժեշտ տեխնիկական միջոցների բացակայության պատճառով:

Ջրամբար և ոռոգման ցանցեր

Համայնքում առկա ոռոգման ջրի պաշարները ճիշտ օգտագործելու և ոռոգման ցանցերի վերանորոգման դեպքում համայնքի ջրովի տարածքները կավելանան մոտ 70% -ով: Սրանք այն տարածքներն են, որտեղ օգոստոս ամսին հիմնականում ջուրը չի հերիքում:

Գյ ու դ ատն տե ս ակ ան տե խն ի կ ա և հ ան դ ամ ի ջ յ ան ճ ան սպար հ ն եր ի ք ար ե կ ար գ ու մ

Գյուղտեխնիկական բարելավման կարիք ունի: Հին տեխնիկական անարդյունավետ չէ ինչպես մատուցվող ծառայության որակի, այնպես էլ տեխնիկայի կայուն աշխատանքի առումով:

Գյ ու դ մ թ եր ք ի վ եր ամ շ ակ մ ան աջ ակ ց ու թ յ ու ն

Համայնքում էական ազդեցություն կունենա վերամշակող փոքր արտադրությունների հիմնումը, որը թույլ կտա էականորեն ավելացնելու համայնքում ստեղծվող արժեքը, ինչպես նաև խուսափելու թարմ բերքի իրացման հնարավոր դժվարություններից: Արդյունավետ կարող են աշխատել սառնարանները, չորանոցները, հյութերի և մուրաբաների, կաթնամթերքի և մսամթերքի արտադրությունները:

Առ աջ ն այ ի ն ն ախաձ ե ո ն ու թ յ ու ն ն եր

Մասնակցային վարժության միջոցով առանձնացվեցին առաջնային նախաձեռնությունները, որոնք, ըստ համայնքի բնակիչների, ամենաէական ազդեցությունը կարող են ունենալ տնտեսական զարգացման վրա՝

Մի ջ հ ամ այ ն ք այ ի ն տր ան ս պո ր տ և աղ ք ահ ան ու թ յ ու ն

Ինչպես արդեն նշել ենք միջհամայնքային տրանսպորտի բացակայությունը ուղղակիորեն ազդում է մարդկանց տեղափոխման վրա՝ ստեղծելով բարդություններ ինչպես աշխատանքի գնալու, այնպես էլ բերքի իրացման դեպքում: Այս խնդիրը առավել քան արդիական է հիմա, երբ Մեղրի, Ագարակ, Այլվանք, Գուղեմնիս, Լեհվագ, Լիճք, Կարճևան, Կուրիս, Լոնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր և Տաշտուն բնակավայրերը միավորվեցին մեկ խոշորացված Մեղրի համայնքի մեջ:

Այս խնդրի լուծումը համայնքի բնակիչները տեսնում են տրանսպորտային ցանցի ներդրման ձևով, որը, ամեն օր աշխատանքային ժամի սկզբին և ավարտին համայնքային տրանսպորտի երթ կիրականացնի 3 ուղղությամբ.

- Կարճևան-Ագարակ-Մեդրիի մաքսակետ-Մեդրիի տարածաշրջանային հիվանդանոց-Մեդրի –Ալվանք – Շվանիձոր- Նոնաձոր և հակառակ ուղղությամբ,
- Ագարակ-Մեդրիի մաքսակետ-Մեդրիի տարածաշրջանային հիվանդանոց-Մեդրի-Լեհվազ- Վահրավար- Գուդեմնիս-Կուրիս և հակառակ ուղղությամբ,
- Ագարակ-Մեդրիի մաքսակետ-Մեդրիի տարածաշրջանային հիվանդանոց-Մեդրի-Լեհվազ-Վարդանիձոր-Լիճք-Տաշտուն և հակառակ ուղղությամբ:

Մեկ ուղղության գինը նախատեսվում է սահմանել 200 դրամի չափով:

Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է՝

- 4 հատ մարդատար մեքենա – 48 մլն դրամ (հաշվի առնելով գին-որակ համադրությունը՝ «Газель-Next» ավտոմեքենաները արդյունավետորեն կարող են իրականացնել իրենց առջև դրված խնդիրը),
- 11 հատ կանգառ գյուղերում - 33 մլն դրամ,
- 2 մեծ կանգառ Մեդրի քաղաքում - 8 մլն դրամ:

Ընդամենը՝ մոտ 90 մլն դրամ:

Աղբահանության կազմակերպման համար անհրաժեշտ է 4 աղբատար մեքենա – 80 մլն դրամ և 65 աղբարկղ – 20 մլն դրամ:

Ընդամենը՝ 100 մլն դրամ:

Ծրագրի ազդեցության գնահատական

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 190 մլն դրամ: Ծրագրից կօգտվեն համայնքի բոլոր բնակիչները՝ աշխատանք-տուն տեղափոխման, գնումների, այցելությունների, կրթական և այլ նպատակներով:

Ջրամբար և ոռոգման ցանցեր

Համայնքի տարածքում առկա են ինքնահոս ոռոգման ջրի պաշարներ, որոնք հիմնականում չեն հավաքվում և հետևաբար արդյունավետ չեն օգտագործվում: Արդյունքում օգոստոս ամսից սկսած գրեթե անհնար է ոռոգում իրականացնել այս տարածքներում: Եթե հաշվի առնենք, որ դաշտավարության և այգեգործության մեջ զբաղված են համայնքի տնային տնտեսությունների մոտ 60% -ը, ապա այս ծրագիրը էական ազդեցություն կունենա համայնքի տնտեսության վրա՝ խթանելով առավել եկամտաբեր մշակաբույսերի աճեցումը և այգեգործության ավելացումը:

Ծրագիրը բաղկացած կարող է լինել 2 փուլից՝


1. մայր և օժանդակ ջրամբարների կառուցում, որտեղ կհավաքվի ոռոգման նպատակով օգտագործվելիք ջուրը,
2. համայնքում ոռոգման ներքին ցանցերի կառուցում և նորոգում:

Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է կառուցել 12կմ ցանց և հիմնանորոգվել 15 կմ ցանցը:

Մայր ջրամբարի դիրքը, ինչպես նաև օժանդակ ջրամբարների քանակը, դիրքերը և այլ ցուցանիշներ ստանալու համար պետք է իրականացվի մասնագիտական հետազոտություն և նախագծում:

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ



Աղյուսակ 9. Տավուշի մարզի համառոտ տվյալներ¹⁷

Տարածքը	2 704 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	9.1%
Քաղաքային համայնքներ	5
Գյուղական համայնքներ	57
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	126.7 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	4.2 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	42.2 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	110 773.1հա

¹⁷ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015»

Նոյեմբերյան համայնքը

Համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործընթացը սկսվեց 10. 08. 2016 –ին:

Նոյեմբերյան խոշորացված համայնքը ներառում է Նոյեմբերյան, Դովեդ, Կոթի, Բարեկամավան, Բաղանիս, Ոսկեվան, Ոսկեպար, Ջուջևան բնակավայրերը:

Նոյեմբերյանն ուրույն կերպով համադրում է գյուղական և քաղաքային բնակավայրերին բնորոշ գծեր: Մի կողմից այն զարգացած գյուղատնտեսական գոտի է, մյուս կողմից համայնքում զարգանում են նաև առևտրի, սպասարկման ու ծառայությունների ոլորտները:

Նոյեմբերյանի մրցակցային առավել ությունները



Համայնքի տնտեսության մրցակցային առավել ությունները վերհանվեցին՝ օգտագործելով «LED cafe» մեթոդով:

Նոյեմբերյանի մրցակցային առավելությունները երկու հիմնական մասի են բաժանվում: Մի մասը հենց քաղաքային բնակավայրին բնորոշ առավելություններն են, իսկ մյուս մասը՝ գյուղական:

- Բնակլիմայական պայմանները մեղմ են, նպաստավոր գյուղատնտեսությամբ զբաղվելու համար: Եթե հարևան Դեբեդի հովտում ցրտահարությունները և ծայրահեղ շոգը կարող են վնասել տնկիներն ու ոստերը, ապա այստեղ ջերմաստիճանի կտրուկ տատանումներ գրեթե չկան:
- Անտառի հարևանությունը բնակչությանն ապահովում է հատապտուղներով և մրգերով:
- Տարածքով անցնող միջպետական մայրուղին բարենպաստ հնարավորություն է ստեղծում արտադրված գյուղմթերքների իրացման համար:
- Խորհրդային շրջանում բանջարեղենի, մրգերի, պանրի ու պահածոների արտադրության փորձն ու գիտելիքը դեռևս առկա են և կարող են ներդրվել գյուղատնտեսության և գյուղմթերքների վերամշակման մեջ:

- Տարածաշրջանում առկա են պանրի և պահածոների արտադրության փոքր ձեռնարկություններ, որոնք կարող են հաջողված նախադեպ հանդիսանալ ոլորտի զարգացման համար, եթե համապատասխան մարդիկ և շուկաները բացահայտվեն:
- Անասնապահության զարգացման համար առավելություն է հեռագնա արոտների և խոտհարքների առկայությունը, որոնք ապահովված են ջրով և ճանապարհներն էլ բարեկարգ են:
- Տարածաշրջանի բնակչությունը հակված է համատեղ գործողությունների, փոփոխությունների, առկա են համագործակցության բազմաթիվ տարբերակներ:
- Գրեթե բոլոր տնտեսությունները տնական պայմաններում օղի և գինի են արտադրում, որոնք հայտնի են ամբողջ հանրապետությունում և մեծ պահանջարկ ունեն:
- Տարածքում բազմաթիվ են ֆելզիտի, բազալտի և ցեոլիտի հանքավայրերը:

Նոյեմբերյանն աչքի է ընկնում նաև հետևյալ որակյալ մասնագետներով՝

- գինեգործներ,
- պահածոյագործներ,
- փայտամշակողներ,
- ավանդական արհեստների մասնագետներ,
- այգեգործներ,
- պանրագործներ,
- մեղվաբույծներ,

Նոյեմբերյանի տնտեսության նկարագիրը

Ըստ առաջատար ոլորտների բնակավայրի տնտեսության պատկերը ստանալու համար՝ օգտագործվեց «COMPASS» մասնակցային ախտորոշման և գնահատման գործիքը: Հիմնական առանցքային ռազմավարական ճյուղերի նկարագիրը՝ ստորև:

Առևտուր

Նոյեմբերյան համայնքը առանցքային նշանակություն ունի ինչպես ենթաշրջանի ներքին ապրանքնաշրջանառության, այնպես էլ մարզի արտադրանքի իրացման

տեսանկյունից, որին նպաստում է աշխարհագրական դիրքը, ինչպես նաև քաղաքի ավանդական առևտրի կատալիզատորի դերը:

Քաղաքում և ենթաշրջանում բացակայում են մասնագիտացված շուկաները, ինչը բացասական ազդեցություն է ունենում ոլորտի զարգացման վրա: Այստեղ գործում են մոտ երեք տասնյակ մթերային խանութներ, տեխնիկայի վաճառքի խանութներ, որոնցից օգտվում է ամբողջ շրջանը, շինանյութի վաճառատներ, ինչպես նաև հագուստի և այլ տնտեսական ապրանքների վաճառքի կետեր: Մրգերի վաճառքը հիմնականում կատարվում է այգուց կամ՝ սեփական փոխադրամիջոցով քաղաքից-քաղաք այն փոխադրելով:

Այ գ ե գ ո Ր Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Դեռևս խորհրդային կարգերի ժամանակ այս տարածաշրջանում սկսեց զարգանալ այգեգործությունը: Հարյուրավոր հեկտարների հասնող խաղողի, դեղձենու, ընկուզենու այգիները տալիս էին Հայաստանում որակյալ և պահանջված բերք:

Խորհրդային կարգերի փլուզումը և ծավալվող պատերազմը 90-ական թվականներին այգիների մեծ մասի ոչնչացման պատճառ դարձան:

Հիմա խաղողի այգիները մի քանի տասնյակ հեկտար են, հիմնականում՝ Բերդավանում և Կոթիում: Հողակտորները փոքր են (0,1-0,2 հա), պատկանում են տարբեր սեփականատերերի: Սորտերը խառն են, բերքը, համեմատած խաղողագործական մյուս շրջանների՝ մոտ 30%-ով ավելի քիչ է: Ոռոգման ջրի պակասը նույնպես բացասաբար է ազդում խաղողագործության զարգացման վրա: Սակայն մարդիկ դեռևս տիրապետում են խաղողագործության ոլորտում անհրաժեշտ գիտելիքներին և հմտություններին և հետաքրքրված են նոր այգիներ տնկելու:

Խաղողի բերքով տնական պայմաններում գինի են արտադրում: Գինեգործության մեջ ընդգծված հաջողություններ չունեն: Արտադրված գինին հիմնականում ներքին սպառման համար է: Բերդավանի գինու գործարանը փոփոխական հաջողությամբ է աշխատում և միշտ չէ, որ մթերում է գյուղացիների կողմից աճեցված խաղողը:

Պտղաբուծությունն ունի 40-50 տարվա պատմություն: Դրա ծավալները նույնպես էապես կրճատվել են խորհրդային կարգերից հետո Բերքաբերի ջրամբարի գործարկումը դադարեցվեց և սկսվեց պատերազմը, իսկ այգիները մի մասը հենց շփման գծում էին:

Հիմա, հիմնականում՝ տնամերձերում, աճեցնում են տանձ, խնձոր, դեղձ, ընկույզ: Ոռոգման ջրի մոտալուտ մատակարարումը մարդկանց պլաններում փոփոխություններ է մտցնում: Շատերը պլանավորում են դեղձի, խնձորի, տանձի, արքայանարնջի նոր այգիներ տնկել, եթե ունենան հասանելի ռեսուրսներ, ապա նաև՝ իրացման շուկա:

Արտադրած միզը հիմնականում վաճառում են ճամփեզրին. տարածքով անցնում է միջպետական մայրուղին: Բաղանիսում անցյալ տարվանից գործարկվում է գյուղատնտեսական մթերքների նոր շուկան, որը նույնպես որոշակիորեն խթանում է տեղական թարմ մրգերի և բանջարեղենի արտադրությանը և վաճառքին:



Տարածաշրջանում մրգերի և հատապտուղների մթերման դրական օրինակ է Ջուջևանի պահածոների գործարանը: Գործարանը մի կողմից մթերում է տարածքի դեղձն ու հոնը, ընկույզն ու անտառի բարիքները, մյուս կողմից փոքր վերամշակման արտադրամասի լավ օրինակ է, որի հաջողությունը ընկերության աշխատակիցները ապացուցում

են իրենց քրտնաջան ամենօրյա աշխատանքով և տեխնոլոգիաների ու շուկաների կատարելագործմամբ:

Տարածաշրջանում ընդունված է նաև հատապտուղների, սեզոնային բանջարեղենի և այլ անտառային բարիքների հավաքչարարությունն ու իրացումը ճանապարհի եզրին, Ջուջևանի պահածոների գործարանին, կամ մեծ մթերողներին՝ հոնի դեպքում: Տարածաշրջանից հարյուրավոր մարդիկ վաղ գարնանից մինչև ուշ աշուն հավաքում են սկզբում սինդրիկ ու ծնեբեկ, ապա՝ ազնվամորի ու մոշ, վերջում էլ՝ ընկույզ ու հոն:

Մինդրիկն ու ծնեբեկն իրացվում են ճամփեզրին կամ հարևաններին, հատապտուղներն ու ընկույզը՝ Ջուջևանի պահածոների գործարանին, իսկ հոնը մթերում են նաև մեծածախ իրացնողները:

Հավաքչարարությամբ զբաղվող մարդկանց եկամուտը չի բավարարում անգամ ընտանիքի նվազագույն ծախսերը հոգալու համար: Աշխատանքը ծանր է, օրական քայլում են ավելի քան քսան կիլոմետր, իսկ եկամուտը՝ քիչ:

Այգեգործության զարգացումը ենթադրում է հետևյալ գործողությունների և միջոցառումների իրականացումը՝

- Տարածաշրջանին համապատասխան տնկիների մատակարարում՝ դեղձ, սալոր, տանձ, խնձոր:
- Կաթիլային ոռոգման համակարգի ներդրման փորձարկում, լայնածավալ կիրառում,
- հակակարկտային ցանցերի և համակարգերի փորձարկում, և, ըստ արդյունքերի, լայնածավալ կիրառում:
- Խաղողի այգիների թարմացում, մթերման հնարավորությունների ընդլայնում:

- Չրի արտադրության համար ձեռնարկատիրության խթանում տեխնոլոգիական, ձեռնարկատիրական, ֆինանսական աջակցության գործիքներով:
- Ազնվամորու այգիների զարգացման աջակցություն ֆինանսական, տեխնոլոգիական աջակցության գործիքներով:

Բանջարաբուծություն

Խորհրդային շրջանում 80-ական թվականներից, կապված Բերքաբերի ջրամբարից ոռոգման ջրի մատակարարման հետ, այս տարածաշրջանում զարգացավ բանջարաբուծությունը: Մի քանի տարում Կոթին և հարակից համայնքները հայտնի դարձան լոլիկով, վարունգով ու ձմերուկով¹⁸: Այս մշակաբույսերի բերքատվությունը չէր զիջում Արարատյան դաշտավայրի հայտնի գյուղատնտեսական գոտիներին:

Պատերազմական գործողությունների սկզբում ոռոգման ջրագիծը քանդվեց, բաջարաբուծությունն էլ աստիճանաբար վերացավ՝ սահմանափակվելով միայն տնամերձ հողակտորներում տնտեսության ներքին սպառման համար բանջարաբուստանային կուլտուրաների աճեցմամբ: Տարածաշրջանը աստիճանաբար այս մշակաբույսերի արտադրողից վերածվեց դրանց սպառողի:

Տարածաշրջանում բանջարաբուծության զարգացման համար հետևյալ գործողություններ են անհրաժեշտ՝

- ոռոգման ջրի մատակարարման ցանցի վերականգնում,
- որակյալ սերմերի ու սածիլների մատակարարում,
- աճեցման ժամանակակից տեխնոլոգիաների և շուկաների վերաբերյալ դասընթացներ գյուղացիների համար,
- հասանելի ֆինանսավորում՝ բանջարաբուծության համար,
- հասանելի գյուղատնտեսական տեխնիկա՝ մինի տրակտորներ և համապատասխան գործիքներ (տեխնիկական կարող է իրացվել լիզինգային տարբերակով, կամ կարող են ստեղծվել մեքենատրակտորային կայաններ, որոնք հասանելի ծառայություններ կմատուցեն գյուղացիներին),
- փոքր ջերմոցային տնտեսությունների ստեղծման աջակցություն (մինչև 200քմ), որոնք բանջարեղենի աճեցմամբ կգրադվեն գյուղատնտեսական սեզոնից դուրս՝ սեպտեմբերից նոյեմբեր և մարտից մայիս ամիսներին: Այս ուղղությամբ առաջին քայլերը Կոթիում արդեն արվում են¹⁹:

¹⁸ Պայմանականորեն ձմերուկի աճեցումը դիտարկում ենք բանջարաբուստանային կուլտուրաների շարքում:

¹⁹ ՄԱԶԳ և ԳԱԱՊ աջակցությամբ 2013 – 2014-ին հիմնվեցին 16 ջերմատներ:

Պտղի վերամշակում

Այս ոլորտը այգեգործության զարգացման առանցքային հիմքն է, որը որոշ դեպքերում արտադրողականությամբ կարող է ավելի բարձր լինել, քան այգեգործությունը: Տարբեր կազմակերպությունների ջանքերով հիմնադրվել են չորանոցներ, որոնց դրական փորձի կրկնօրինակումը կունենա մեծ ազդեցություն այս ոլորտի կայացման վրա:

Խորհրդային տարիներին համայնքում գործել են մրգերի մթերման և վերամշակման կետեր, որոնք, սակայն, վերջին տարիներին չեն շահագործվել: Բացառություն է Ջուջևանի պահածոների գործարանը, որը արտահանում է իր արտադրանքի մեծ մասը:

Հաշվի առնելով Նոյեմբերյան համայնքի տնտեսության մրցակցային առավելությունները՝ ակնհայտ է դառնում տնտեսության զարգացման գործում այգեգործության արժեշրթայի կայացման անհրաժեշտությունը, որն իր հետևից կարող է քաշել ամբողջ տնտեսությունը և զարկ տալ հարակից այնպիսի արժեշրթաների կայացմանը, ինչպիսիք են անասնապահության (կաթի և մսի արտադրության) և շրջանի առևտրային կենտրոնի կայացումը:

Հացահատիկային կուլտուրաների աճեցում

Ցորենը հիմնական հացահատիկային մշակաբույսն է այս տարածաշրջանի համար: Ցորենի բերքատվությամբ համայնքը զիջում է Հայաստանի առաջատար համայնքներին: Համեմատական աղյուսակը ավելի պատկերավոր է ներկայացնում այս եզրակացությունը՝

Աղյուսակ 10. Ցորենի բերքատվության համեմատական վերլուծություն (աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն):

Մշակաբույս	Բերքատվություն, 1 հա /միջինը, տոննա		
	Նոյեմբերյան	Առաջատար մարզ	ՀՀ միջին
Աշնանացան ցորեն	1.5 - 2 տ	Արարատ 3,31	2,12
Գարի	1.5 - 1.9 տ	Արարատ 2,54	2,01

Տարածքի բնակչությունը ցորենի աճեցումը հիմնավորում է մի քանի գործոններով՝

- ծախսեր քիչ են պահանջվում,

- ֆիզիկական աշխատանքը քիչ է, որը հատկապես էական է սահմանին հարող տարածքներում, որտեղ պարբերական աշխատանքը կյանքի կամ առողջության սպառնալիք է ներառում հակառակորդի գնդակոծությունների պատճառով,
- ցորենը մի կողմից հեշտ է իրացվում, մյուս կողմից՝ տնային տնտեսությունների կարիքների բավարարմանն է ուղղվում,
- ցորենի աճեցման տարածքները հիմնականում անջրդի են և հարմար են միայն ցորենի աճեցնելու համար:

Այսուհանդերձ, սահմանին ուղղակի հարող և ոռոգման ջուր չունեցող տարածքներում ցորենի մշակումը դեռ երկար կշարունակվի, որի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է հետևյալ միջոցառումների իրականացումը՝

- որակյալ և տարածքին հարմար սերմացուի մատակարարում,
- տարածաշրջանի գյուղերի համար նոր կոմբայնների ձեռքբերում, որը կօգնի մոտ 20%-ով նվազեցնելու բերքի կորուստը,
- թրթուրավոր տրակտորների ձեռքբերման աջակցություն, որի շնորհիվ հնարավոր կլինի մշակել արդեն խոպան դարձած վարելահողը,
- որակյալ և տարածաշրջանի հողային կազմին համապատասխան պարարտանյութի ձեռքբերման աջակցություն՝ ի լրումն պետական աջակցության մեխանիզմի,
- անասնակերի արտադրության սկսնակ ընկերությունների աջակցություն:

Ծխախոտ և եգիպտացորեն

Ծխախոտն ու եգիպտացորենը ունեն բարձր շահութաբերություն՝ համեմատած ճակնդեղի և ցորենի հետ: Միևնույն ժամանակ այս բույսերի մշակման համար անհրաժեշտ է որակյալ ոռոգման հնարավորություն: Մշակումը բավականին աշխատատար է:

Ծխախոտը աճեցվում է International Masis Tabak (ԻՄՏ) ընկերության աջակցությամբ: Միջին բերքատվությունը 15-20 տոննա է, որն ապահովում է 400 - 600 հազար դրամ շահութաբերություն: Այս ոլորտում բավարար են աջակցության մեխանիզմները (խորհրդատվություն, ֆինանսական աջակցություն, երաշխավորված շուկա և այլն), առկա է կայուն պահանջարկ:

Համայնքում եգիպտացորենի մշակման փորձը գալիս է դեռևս սովետական տարիներից: Մեկ հեկտարի բերքատվությունը մոտ 8 տոննա է կազմում: Կան հիբրիդային սորտեր, որոնք ապահովում են մինչև 15 տոննա բերքատվություն: Հիբրիդային սորտերի գինը ավելի էժան է, քանի որ օգտագործվում է որպես անասնակեր: Ընդհանուր առմամբ 1 հեկտարի աճեցումը ապահովում է 800000-1000000 դրամ շահութաբերություն: Եգիպտացորենի աճեցման հիմնական խնդիրը ոռոգովի վարելահողերի պակասությունն է, մշակման դժվարությունը, մշակող գյուղտեխնիկայի սակավությունը և ոչ բարվոք վիճակը, ինչպես նաև ոչ կայուն պահանջարկը:

Ջերմոցայ ի ն տն տե ս ու թ յ ու ն ն եր

Համայնքում ակտիվորեն զարգանում են նաև ջերմոցային տնտեսությունները: Նույնիսկ ձմռան ամիսներին ջերմատներում բանջարեղեն չարտադրելու դեպքում ջերմոցային տնտեսությունները բավականին եկամտաբեր են:

Բնակլիմայական պայմանները ևս նպաստում են ջերմատների զարգացմանը: Ջերմատները թույլ են տալիս արտադրելու բանջարեղեն գարնան վերջին և ուշ աշնանը, երբ շուկայում սպառվել է բանջարեղենի հիմնական բերքը, հետևաբար առկա է մեծ պահանջարկ և գները 2-3 անգամ բարձր են:

100մ² արտադրական տարածք ունեցող ջերմոցը տարվա ընթացքում ապահովում է մոտ 600000 դրամ շահույթ:

Արտադրվող բերքը վաճառվում է համայնքների ներսում՝ ինչպես նաև իրացվում վերավաճառողների միջոցով:

Համայնքներում առկա են մասնագետներ, ովքեր փորձով ձեռքբերված բավարար գիտելիքների և հմտությունների են տիրապետում ջերմատներում բանջարեղեն մշակելու և հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումներ անցկացնելու համար:

Ան ա ս ն ապահ ու թ յ ու ն

Համայնքի տնտեսության մեջ գերակա ճյուղերից է անասնապահությունը: Ոռոգման համակարգերի ոչնչացման հետևանքով աստիճանաբար կրճատվեցին այգիները, խաղողի տնկարկները: Մարդիկ աստիճանաբար ավելացրեցին անասունների գլխաքանակը:

Անասնապահությունը ավանդական ճյուղ է այս գյուղերի համար: Գյուղերի բնակչության գրեթե 50%-ը զբաղվում է անասնապահությամբ: Իհարկե, տնտեսությունների մեծամասնությունը ունի մեկ-երկու գլուխ կով և միայն մեկ ընտանիքի կարիք է հոգում, բայց կան նաև մեծ անասնապահական տնտեսություններ:

Եթե մինչև հինգ անասուն ունեցող տնտեսությունները հիմնականում անասունները պահում են գյուղերում, ապա ավելի մեծ տնտեսություններում ընդունված է հեռագնա արոտներում անասնապահությունը: Հեռագնա արոտները գյուղերից 10-30 կիլոմետր հեռավորության վրա են՝ անտառածածկ ու գեղատեսիլ տարածքներում: Ուղղակի այս տարածքներում բացակայում են էլեկտրաէներգիան, կոմունալ այլ հարմարությունները: Գումարվում է նաև աշխատանքի բարդությունը, և երիտասարդներն աստիճանաբար հրաժարվում են անասնապահությունից:

Կովերի կաթնատվությունը ցածր է: Մեկ կովի միջին կաթնատվությունը տարեկան մոտ 1500-1700 լիտր է: Կաթի մի մասով գյուղացիները պանիր են արտադրում, մյուս մասը հանձնում են՝ մեկ լիտրը 130-140 դրամով: Հիմնական մթերոդները Կոթիի և Նոյեմբերյանի պանրի արտադրամասերն են: Մեծ արտադրողներն այստեղ ներկայացված չեն. մի կողմից հեռավորությունը, մյուս կողմից՝ կաթի սղությունը և տեղի շուկայում ձևավորված գինը վանում են մեծ մթերողներին:

Արտադրված պանիրը հանձնում են միջնորդ վերավաճառողներին մեկ կիլոգրամը 1300-1400 դրամով, կամ հասցնում Երևան և այլ քաղաքներ ու վաճառում խանութներին մեկ կիլոգրամը 1600-1700 դրամով:

Գյուղացիական տնտեսություններն հիմնականում կախման մեջ են միս մթերողներից, ովքեր մեծամասամբ այլ համայնքներից են:

Տավարի մսի արտադրությունը տարածաշրջանում արդյունավետ է, եթե տնտեսությունը ավելի քան վեց գլուխ ցուլիկ է բուծում, ինչպես նաև արտամսուրային շրջանում ցիլկները պահում է հեռագնա արտոնելու: Այս կերպ տարածաշրջանի գյուղացիական տնտեսությունների մոտ 30%-ը զբաղվում է տավարաբուծությամբ:

Ոչխարաբուծությունը զարգացած չէ: Հիմնականում մինչև տասը գլուխ ոչխար ունեն, այլն էլ՝ հատուկենտ տնտեսություններ: Բացասաբար է ազդել Ադրբեջանի կողմից անասնագողությունը, ինչպես նաև հեռագնա արտոնելու ոչխարաբուծության դժվարությունն ու շուկայում՝ գների հաճախակի տատանումները:

Խոզաբուծությունը կտրուկ նվազել է աֆրիկյան ժանտախտի համաճարակից հետո (2011թ): Հիմա էլ, եթե գյուղացիները ցանկանում են անտառներում խոզ պահել, առկա է վարակման վտանգը: Մյուս տարբերակը մսուրային բուծումն է, որի համար ավելի մեծ ծախսեր են պահանջվում. գյուղացիները աստիճանաբար սկսում են վերջին տարբերակի կիրառումը:

Ընդհանուր առմամբ, մսի արտադրության ծավալները վերջին երեք տարիներին աճում են և՛ տավարաբուծության, և՛ ոչխարաբուծության մեջ՝ պայմանավորված ներդրված գումարի արագ վերադարձով (գարնանը գնում են ցիլկները, ուղարկում հեռագնա արտոններ, իսկ աշնանն արդեն մորթում են և վաճառում): Երիտասարդներն էլ ավելի շատ են հակված այս ոլորտում աշխատելուն:

Զարգացման և ախաձեռնումի ռոններ

Մասնակցային պլանավորման վարժության միջոցով համայնքի հիմնական դերակատարներն առաջարկում են հետևյալ նախաձեռնությունները համայնքի տնտեսության ռազմավարական ճյուղերի զարգացման համար՝

- հեռագնա արտոնների բարելավման միջոցառումներ՝ էլեկտրաֆիկացում, անասունների խմելու ջուր, հասանելիություն և այլն,

- մեղրի հավաքման կենտրոն՝ լաբորատորիա, տարայավորման հնարավորություններ, արտահանման աջակցություն և այլն,
- ռոտոգման ցանցերի կառուցում կամ բարելավում. այս նախաձեռնությունը վերաբերում է գյուղական բոլոր բնակավայրերին,
- հակակարկտային սարքավորումներ կամ ցանցեր,
- մեքենատրակտորային պարկ և՛ գյուղատնտեսության, և՛ հանդամիջյան ճանապարհների վերանորոգման համար,
- կաթի և մսի մթերման և վերամշակման աջակցություն,
- պտղի վերամշակման ձեռնարկությունների աջակցություն,
- գինեգործության զարգացման աջակցություն,
- մրգերի և պատրաստի արտադրանքի արտահանման աջակցություն,
- գյուղատնտեսական մեծածախ և մանրածախ շուկա,
- այգեգործության և անասնապահական ռեսուրսային կենտրոն:

Համայնքի բնակիչների կողմից որպես առաջնային գերակա նախաձեռնություններ նշվեցին՝

- գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ձեռնարկությունների աջակցություն,
- մեքենատրակտորային պարկի հիմնում:

Առաջնային նախաձեռնություններ

Վերամշակող փոքր արտադրամասեր


2	1	1	2	1	1	0
1	0	1	2	0	0	0
1	2	1	1	0	1	0
1	2	1	1	0	0	5
2	3	2	2	1	1	12
2	1	1	2	1	1	10
1	2	1	2	1	1	4
1	1	1	2	2	1	9
2	2	1	3	1	2	10
1	1	1	2	1	1	7
2	2	1	1	1	1	8
16	17	22	3	4	5	

(տեսակավորված և փաթեթավորված մրգի, սառեցված մրգի, ջեմերի, մուրաբաների, կոմպոտների, չրերի արտադրություն)

Նոյեմբերյանի տնտեսության առանցքային ճյուղերից և՛ այգեգործության, և՛ անասնապահության ոլորտում ավելի մեծ արժեք ստեղծող շղթաների բացակայությունը (մրգերի և անտառային հատապտուղների վերամշակմամբ զբաղված ձեռնարկություններն են, բեռնափոխադրողները, մեծածախ իրացնողները, մսի և կաթի միևնույն որակի ստանդարտով աշխատող փոքր արտադրամասերը) թույլ չի տալիս շղթայի յուրաքանչյուր հաջորդ փուլում ավելի մեծ արժեք ստանալ, արդյունավետություն ստեղծել: Միևնույն ժամանակ, վերամշակող արտադրությունների բացակայությունը բացասական ազդեցություն է ունենում շուկայում գների ձևավորման վրա, բարձր բերքատվության տարիների ընթացքում

բարձրանում է բերքի կորստի տեսակարար կշիռը, քանի որ հնարավոր չէ միանգամից իրացնել ամբողջ բերքը:

Նոյեմբերյանում մեծ հաջողություն կարող են ունենալ միևնույն որակի ստանդարտներով աշխատող փոքր արտադրամասերը (ստորև ներկայացված է արտադրամասի սկզբունքը չորանոցների օրինակով).



Ծրագրի իրականացումը ենթադրում է հետևյալ քայլերը՝

- մասնակիցների ընտրություն,
- տեխնոլոգիական և գործարար ունակությունների դասընթացներ,
- որակի կառավարման միասնական ստանդարտների մշակում,
- մասնակիցների ֆինանսավորում և փոքր ձեռնարկությունների հիմնման աջակցություն,
- միասնական բրենդի մշակում և շուկայում առաջմղում,
- ռեսուրսային կենտրոնի հիմնում և նորաստեղծ ձեռնարկությունների համակողմանի աջակցություն:

Ծրագրի իրականացման արժեք, ներառյալ ձեռնարկությունների գրանտային և փոխառվական ֆինանսավորումը, կազմում է մոտ 150 մլն դրամ:

Արդյունքում կհիմնվեն մոտ քսան ձեռնարկություններ՝ չորանոցներ, սառնարաներ, մրգերի պահածոյացման փոքր արտադրամասեր:

Մեքենաատրակտորային պարկ

Նոյեմբերյանում գյուղատնտեսական նշանակության հողերի մշակման պատկերը հետևյալն է՝ ըստ բնակավայրերի.

Աղյուսակ 11. Նոյեմբերյանում գյուղատնտեսական նշանակության հողերի մշակման պատկերը (աղբյուր՝ համայնքային հանդիպումների արդյունքում ստացված տվյալներ):

Բնակավայրեր	Հող մշակող տնտեսություններ	Վարելահողեր	Որից՝ ջրովի	Զմշակվող	Խաղող/Պտուղ
Նոյեմբերյան	1400	701	29	630	27/4
Բերդավան	860	1268	172	834(Մ ²⁰)+200	92/27
Դովեղ	176	230	-	170	6/6
Ջուջեվան	180	110	-	80	-
Բաղանիս	262	285	30	110(Մ)+100	12/2
Ոսկեվան	407	380	10	210	-
Ոսկեպար	215	200	100	200	-
Կոթի	765	1594	-	890(Մ)+70	-
Բարեկամավան	100	410	-	350(Մ)	-
Ընդամենը					

Համայնքում ընդհանուր մշակվող 2110 հեկտար վարելահողերի գերակշիռ մասը՝ մոտ 65 տոկոսը, օգտագործվում է հացահատիկային կուլտուրաների մշակման համար, առավելապես՝ ցորեն, ապա՝ գարի և հաճար:

Վարելահողերի մնացած 35 տոկոսում ցանվում է կարտոֆիլ, ծխախոտ, բանջարաբուստանային կուլտուրաներ և այլն, մի որոշ մասն էլ, ցանքաշրջանառության անհրաժեշտությունից ելնելով, հանգստանում է: Բհարկե, կուլտուրաների պրոֆիլը տարեցտարի շատ փոփոխական է, ցանքատարածությունների մակերեսը՝ նույնպես: Սակայնված է բնակիչների հնարավորություններից, նախորդ տարվա եկամուտների մակարդակից, որակյալ սերմացուի առկայությունից, ֆինանսական ռեսուրսների հասանելիությունից ու մատչելիությունից, աշնանացանի ժամանակ եղանակային պայմաններից, գյուղատնտեսական տեխնիկայի առկայությունից և այլ շատ ուրիշ գործոններից:

2016-ին լավ սերմացուի, լավ կազմակերպման և բարձրորակ մասնագիտական աջակցության պայմաններում Բաղանիս գյուղում ստացվել է ռեկորդային՝ մեկ հեկտարից ավելի քան 60 ցենտներ հացահատիկի բերք:

²⁰ Սահմանամերձ տարածքներ, որոնք չեն մշակվում գնդակոծման վտանգի պատճառով:

Հին գյուղատնտեսական տեխնիկան հողագործության զարգացման հիմնական խոչընդոտն է:

Նաև կարիք կա բարելավելու բնակավայրերի ներքին ճանապարհները, ինչպես նաև կազմակերպելու ձմեռային մաքրումը:


Մասնակցային հանդիպումները պատկերեցին անհրաժեշտ գյուղատնտեսական և ճանապարհների պահպանության տեխնիկայի հետևյալ տեսակներն ու քանակը՝

- հացահատիկահավաք կոմբայն – երկու հատ,
- թրթուրավոր տրակտոր գութանով – 2 հատ,
- անիվավոր տրակտոր «Բելոռուս S-82»,
- խոտի հնձիչ - 4 հատ,
- հակավորող սարք – 2 հատ,
- տրակտոր՝ մոտ 140 հա խաղողի միջշարային աշխատանքների կազմակերպան համար – 2 հատ,
- էքսկավատոր – 1 հատ,
- փոքր ամբարձիչ – 1 հատ,
- մարդատար մեքենա՝ 20-22 նստելատեղով – 1 հատ:

Այս նախաձեռնության ընդհանուր արժեքը մոտ 250 մլն դրամ է:

ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ



Աղյուսակ 12. Տավուշի մարզի համառոտ տվյալներ²¹

Տարածքը	2 704 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	9.1%
Քաղաքային համայնքներ	5
Գյուղական համայնքներ	57
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	126.7 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	4.2 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	42.2 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	110 773.1հա

²¹ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015»

Այ ր ու մ հ ա մ այ ն ք ր

Համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործընթացը սկսվեց 11. 08. 2016 –ին:

Խոշորացված Այրում համայնքը բաղկացած է Այրում, Դեբեդավան, Դեղձավան, Բագրատաշեն, Պողավան, Հաղթանակ, Լճկաձոր և Արճիս բնակավայրերից: Համայնքը տեղակայված է Հայաստանի հյուսիս-արևելյան սահմանին՝ Դեբեդ գետի հովտում:

Բնակչության հիմնական զբաղմունքը այգեգործությունն ու դաշտավարությունն է: Վրացական սահմանին և Բագրատաշենի անցակետին մոտ լինելը, ինչպես նաև 90-ականների սկզբից մինչև 2005թ. այս հատվածում գործող «Մադախլո»-ի սահմանամերձ շուկայի առկայությունը, առևտրում հմտանալու նոր հնարավորություն ստեղծեց տեղի բնակիչների համար: Այդ հմտությունները, կապերը, գործարարության արդարացված ռիսկը մինչև այժմ այստեղ ապրող մարդկանց բնորոշ գծերն են, որոնք արդյունավետությամբ իրացվում են գործարարության մեջ:

Մարդիկ բաց են նորարարության, նոր բիզնես գաղափարների, հաջողված փորձի արագ կրկնօրինակման և ընդարձակման համար, ինչի արդյունքում վերջին տարիներին ակտիվորեն զարգանում են պտղի վերամշակումը և ջերմոցային տնտեսությունները: Պահանջկոտ չեն դեպի պետական սուբսիդիաներն ու հովանավորչությունը. երազում են գործարարությանը նպաստող միջավայրի մասին, որը իրենց թույլ կտա սեփական քրտինքով և ջանքով հասնել ցանկալի արդյունքի:

Այ ր ու մ ի մ ր ց ա կ ց ա յ ի ն առավել ու թ յ ու ն ն ե ր ը

Համայնքի տնտեսության մրցակցային առավելությունները վեր հանվեցին՝ օգտագործելով «LED cafe» մեթոդոլոգիան:

- Այրում երկաթուղային կայանի առկայություն,
- Բագրատաշենի մաքսակետի առկայություն,
- Երևան–Թբիլիսի մայրուղու հարևանություն,
- ծովի մակարդակից ՀՀ ամենացածր կետ (340 մ),
- բարենպաստ և մերձարևադարձային կլիմա, մեղմ ձմեռ,
- հողագործության երկար ժամանակահատված (սեզոն),
- բերքի հասունացման ամենակարճ ժամանակահատված,
- համայնքները գտնվում են Դեբեդ գետի ափին, որը ոռոգման ջրի անսպառ աղբյուր է,
- բույսերի տեսակներ, որոնք աճում են սակավաթիվ համայնքներում՝ ձիթապտուղ, կիվի, արքայանարինջ, պիստակենի և այլն,

- այգեգործության մասնագետներ՝ սերնդեսերունդ փոխանցված գիտելիքներ
- գործարար կապեր ՀՀ տարբեր շրջաններում, ինչպես նաև Վրաստանում և Թուրքիայում,
- հաջողված փորձի արագ կրկնօրինակման հակվածություն:

Այ ր ու մ ի տ ն տե ս ու թ յ ան ն կ ա ր ա գ ի ր ք

Ըստ առաջատար ոլորտների բնակավայրի տնտեսության պատկերը ստանալու համար օգտագործվեց «COMPASS» մասնակցային ախտորոշման և գնահատման գործիքը:



Համայնքի տնտեսության հիմքում հետևյալ հինգ ոլորտներն են՝

- այգեգործություն,
- հողագործություն,
- անասնապահություն,
- գյուղմթերքի վերամշակում,
- առևտուր:

Այ գ ե գ ո Ր Ք Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Շնորհիվ ցածրադիր գոտու և ոռոգման ջրի հասանելիության՝ այգեգործության համար այստեղ ստեղծված են բարենպաստ պայմաններ, ինչի արդյունքում այգեգործությունը մեծ թափով զարգանում է:

Այն համայնքի բոլոր բնակավայրերի համար ունի արմատական նշանակություն: Դեռևս Սովետական միության տարիներից այստեղ աճեցվել են հիմնականում դեղձ, խնձոր, սալոր և այլն: 90-ականներին այգեգործությունը անկում ապրեց աճեցվող մրգերի իրացման հետ կապված դժվարության, ինչպես նաև սահմանամերձ «Սադախլու» շուկայի պատճառով, որտեղ առևտուրը մոտակա համայնքների բնակիչներին ապահովել էր ավելի հեշտ և անհամեմատելի բարձր եկամտաբերություն ունեցող աշխատանքով:


Այժմ սկսվել է այգեգործության ընդլայնման գործընթաց: Այս գործընթացը պայմանավորված է չորս էական գործոններով.

- այգեգործության համեմատաբար բարձր եկամտաբերություն՝ համեմատած դաշտավարության հետ,

- միրգ վերամշակող ձեռնարկությունների զարգացում և քանակական աճ,
- մոտ ապագայում հայկական մրգի արտահանման տեսանկյունից հնարավորություններ,
- մրգերի վաղ հասունացման հնարավորություն՝ շնորհիվ ցածրադիր գոտու:

Ավանդական աճեցվող դեղձը աստիճանաբար զիջում է իր դիրքը մրգերի այլ տեսակների: Վերջին 5 տարիների ընթացքում ստեղծված այգիների միայն 10 % է կազմում դեղձը:

Ստորև ներկայացված է նորաստեղծ այգիների բաշխվածությունը՝ ըստ մրգերի տեսակների (աղբյուր՝ համայնքային հանդիպումների արդյունքում ստացված տվյալներ):



Պտղի վերամշակում

Համայնքում վերջին տարիներին զարգանում է նաև պտղի վերամշակման ոլորտը: Այստեղ ստեղծվել է 9 արևային և 12 էլեկտրաէներգիայով աշխատող չորանոց, 5 ժամանակակից սառնարան և չրի հավաքման կետ, մուրաբաների և հյութերի արտադրության երեք արտադրամաս:

Այս ձեռնարկությունները ունեն փոքր, բայց հաստատուն պահանջարկ և իրացում են ապահովում համայնքներում արտադրվող բերքի համար:

Այս ոլորտի ձեռնարկությունների զարգացումը, ինչպես նաև նոր ձեռնարկությունների ստեղծումը, որոնք կկարողանան արտադրել որակյալ և ստանդարտացված արտադրանք, թույլ կտա էականորեն խթանել այգեգործության հետագա զարգացումը և համայնքներում ստեղծվող եկամտի աճը:

Հողագործություն


Հողագործության մեջ վերջին 10 տարիներին գերակշռում է արևածաղկի արտադրությունը, որը դարձել էր այս համայնքի տնտեսության հենակետային ճյուղերից մեկը: Այս հանգամանքը պայմանավորված է արևածաղկի հեշտ մշակմամբ, մեծ պահանջարկով և համեմատաբար քիչ աշխատատարությամբ՝ համեմատած այլ մշակաբույսերի հետ:

Ընդհանուր առմամբ, համայնքում աճեցվում է միջինը 450 հա արևածաղկ: Մեկ հեկտարից ստացվում է միջինը 0,7-1,2 տոննա արևածաղիկ, որի վաճառքի միջին գինը 600 դրամ է: Մեկ հեկտարից շահույթը կազմում է մոտ 300 հզ. դրամ:

Բազրատաշենում գործում են արևածաղկի երկու բովարան, որոնք մթերում են անասինանափակ քանակությամբ արևածաղիկ:

Ստորև ներկայացված է արևածաղկի աճեցման դինամիկան՝ ըստ մշակվող հողատարածքների և տարիների:

Արևածաղկի աճեցման դինամիկան Այրում համայնքում (աղբյուր՝ համայնքային հանդիպումների արդյունքում ստացված տվյալներ).



Ինչպես երևում է գրաֆիկից, վերջին տարիների ընթացքում արևածաղկի աճեցումը անկում է ապրում, որը 2016-ին հասել է ռեկորդային ցածր ցուցանիշի, ինչը պայմանավորված է բերքատվության անկմամբ:

Բերքատվության անկումը պայմանավորված է հետևյալ երկու գործոններով.


- միևնույն տեսակի սերմերի օգտագործում,
- հողերի որակի անկում:

Արևածաղկի աճեցման ծավալների անկմանը գուցաևեռ համայնքներում աստիճանաբար ավելանում է բանջարեղենի և հացահատիկի աճեցումը: Բանջարեղենը ևս ունի բավականին բարձր շահութաբերություն, իսկ հացահատիկի աճեցումը ժամանակավոր է և ուղղված է հողերի որակական հատկանիշների փոփոխմանը:

Ան աս ն սպահ ու թյ ու ն

Անասնապահությունը համեմատաբար թույլ է զարգացած համայնքներում: Հիմնականում կաթի ու մսի արտադրությունը տեղական և ընտանեկան սպառման համար է կատարվում:

Ակնհայտ է, որ անասնապահության մեջ աշխատանքի արտադրողականությունը բավականին ցածր է այգեգործության ոլորտում աշխատանքի արտադրողականությունից և պահանջում է շատ ավելի մեծ ներդրում, քան այգեգործության մեջ: Համեմատության համար ասենք, որ 10 բավող հորթ ունեցող տնտեսության դեպքում մեկ մարդու աշխատանքի արտադրողականությունը շատ ավելի փոքր է, քան մեկ հեկտար խնձորի աճեցման դեպքում ստացվող արտադրողականությունը:



Առ և տո ու ր և բ ե ո ն ափո խադ ր ու մ ն ե ր

«Մադախլու» շուկան իր արմատական դերն է ունեցել առևտրի ունակությունների և փորձի կուտակման վրա: Շուկան իր գործունեության մոտ տասը տարիների ընթացքում հնարավորություն ընձեռեց շուկային կից համայնքների բնակիչներին ձեռք բերել առևտրային մեծ ունակություններ, կապեր ինչպես ՀՀ տարբեր շրջանների գործարարների, մեծածախ և մանրածախ առևտրով զբաղվողների, այնպես էլ Թուրքիայի, Վրաստանի, և Ռուսաստանի ձեռներեցների հետ:

Շուկայի փակվելուց հետո բնակիչների մի մասը գնեց փոքր բեռնատար մեքենաներ և շարունակեց զբաղվել առևտրով՝ ներմուծելով ապրանքներ հիմնականում Ռուսաստանի հարավային շրջաններից, Վրաստանից և Թուրքիայից: Այժմ կան մոտ 28 առևտրով զբաղվողներ, ովքեր իրենց սեփական փոքր բեռնատարներով («Ford» կամ «ГАЗЕЛЬ» մակնիշի) ներմուծում են տարբեր տեսակի արտադրանք (միրգ, հագուստ, արևածաղիկ, չրեր և այլն) ու վաճառում ՀՀ տարբեր շրջաններում:

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին առևտուրը և ապրանքների ներմուծումը կտրուկ ակտիվանում է, և առևտրով սկսում են զբաղվել մոտ 400 մարդ:

Զարգացման և ախաձեռնություններ

Մասնակցային վարժության միջոցով առանձնացվեցին առաջնային նախաձեռնությունները, որոնք, ըստ համայնքի բնակիչների, ամենաեական ազդեցությունը կարող են ունենալ տնտեսական զարգացման վրա՝



- Ոռոգման ցանցերի կառուցում և բարելավում,
 - մեքենատրակտորային կայանի հիմնում,
- այգեգործական ռեսուրս կենտրոնի ստեղծում,
- պտղի վերամշակում և արտա-հանում,
- ճանապարհային շուկայի կառու-ցում սահմանի մոտ,
- տնական օդու արտադրություն:

Առաջնային նախաձեռնություններ

Մեքենատրակտորային կայանի ստեղծում

Շնորհիվ աշխարհագրական դիրքի և բնակլիմայական պայմանների Այրում համայնքը ունի մրցունակ դիրք գյուղատնտեսության, հատկապես՝ այգեգործության ու դաշտավարության զարգացման համար:

Համայնքի բնակիչները գյուղատնտեսության զարգացումը ուղղակիորեն կապում են առկա գյուղտեխնիկայի հետ: Ցավոք, առկա տեխնիկան բարոյապես և տեխնիկապես մաշված է, գտնվում է ոչ բարվոք վիճակում, ինչն ուղղակիորեն ազդում է մշակվող տարածքների և ստացվող բերքի որակի ու քանակի վրա: Բացի տեխնիկական մաշվածությունից, առկա գյուղտեխնիկան հաճախ հնարավոր չէ օգտագործել հատկապես այգիների ընթացիկ սպասարկման ժամանակ՝ սրսկում, և այլն:

Հաշվի առնելով որ այս ոլորտը համայնքի տնտեսության առաջնային ոլորտներից է՝ ժամանակակից տեխնիկայի ձեռքբերման աջակցությունը դառնում է կենսական պայման՝ բնակչության եկամտների աճի և համայնքի տնտեսական զարգացման տեսանկյունից:

Այրում համայնք	Հող մշակող Տնտեսություններ
Այրում	630
Արճիս	340
Բագրատաշեն	772
Դեբեդավան	177
Դեղձավան	92
Լճկաձոր	95
Հաղթանակ	220
Պտղավան	270
Ընդամենը	2596

Աղյուսակ 13. Հող մշակող տնտեսությունները ըստ բնակավայրերի (աղբյուր՝ համայնքային հանդիպումների արդյունքում ստացված տվյալներ):

Մեքենատրակտորային կայանի հիմնումը ուղղակիորեն կազդի 2596 տնտեսությունների աշխատանքի արդյունավետության բարձրացման վրա: Կբարձրանա այս պահին մշակվող 1400 հեկտար հողերի արդյունավետությունը, ինչպես նաև մշակվող հողերի քանակը առաջիկա տարիներին կաճի 20 – 30 % -ով:

Անհրաժեշտ տեխնիկայի ցանկը՝

- ունիվերսալ կոմբայն՝ հացահատիկի, արևածաղկի և եգիպտացորենի հավաքման համար (օր. «Massey Ferguson MF 9790») 60–100 մլ ն դրամ ,
- չորս անիվավոր տրակտոր՝ համապատասխան գործիքներով (գութան, շարքացան, պրես, կուլտիվատոր) – 80 մլն դրամ,
- մեկ թրթուրավոր տրակտոր և գութան - 30 մլն դրամ,
- երկու մինի-տրակտոր և կցորդ՝ սրսկիչ այգիներում աշխատելու համար - 10 մլն դրամ,
- գրեյդեր – 50 մլն դրամ:


Ընդամենը՝ 230–270 մլն դրամ:

Այգեգործական ռեսուրսային կենտրոն և արտահանման աջակցություն

Համայնքի բնակլիմայական պայմանները հատկապես մրցունակ են դարձնում այգեգործության ճյուղը:

Այգեգործության աճն ուղղակիորեն կապված է այս ոլորտում որակյալ մատակարարումների, մասնագիտական հմտությունների և շուկայում հաստատուն կապերի հետ: Ցավոք, այս պահին համայնքներում հասանելի են հիմնականում անորակ նյութեր (դեղանյութ, քիմիկատ, տնկի և այլն), ինչն իր անմիջական ազդեցությունն է ունենում թե՛ բերքատվության, թե՛ մրգերի որակի վրա:

Ի տարբերություն մարզի այլ համայնքերի՝ այստեղ առկա են շուկայական հաստատուն կապեր, և խնդիրը միայն որակյալ մատակարարման և արժեզրթայի ամբողջական կայացման մեջ է: Համայնքներում բավական ցածր է նաև պտղի աճեցման գործընթացին վերաբերող մասնագիտական գիտելիքը: Ընդհանուր առմամբ, այգեգործության ոլորտում տեղի ունեցող զարգացման փակ շրջապտույտը հնարավոր է արտահայտել հետևյալ գրաֆիկի միջոցով.




Այս ոլորտի հետագա զարգացման համար արմատական նշանակություն ունի այգեգործական ռեսուրս կենտրոնի հիմնումը, որը կմասնագիտանա հետևյալ ծառայությունների մատուցման մեջ՝

- դեղանյութերի, պարարտանյութերի, թունաքիմիկատների, արտադրական գործիքների, տնկիների մասնագիտացված վաճառք,
- այգեգործության ոլորտում վերապատրաստումների անցկացում, խորհրդատվության մատուցում,
- գյուղտեխնիկայի տրամադրում՝ վարձակալության հիմունքներով, ծառայությունների մատուցում,
- վերամշակված և թարմ մրգերի վաճառքի շուկաների հետ կապերի հաստատում, ուղղորդում, մաքսային ընթացակարգերի վերաբերյալ խորհրդատվություն և ուղեկցում:

Ծրագրի մոտավոր արժեքը կազմում է մոտ 200 մլն դրամ, որից 110 մլն դրամը կենտրոնի ստեղծման գումարն է, 90-ը՝ տեխնիկայի, վաճառքի սարքավորումների և շրջանառու միջոցների նախնական ձեռքբերման արժեքը:

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ



Աղյուսակ 14. Տավուշի մարզի համառոտ տվյալներ²²

Տարածքը	2 704 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	9.1%
Քաղաքային համայնքներ	5
Գյուղական համայնքներ	57
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	126.7 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	4.2 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	42.2 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	110 773.1հա

²² Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015»

Կողբ համայնքը

Համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործընթացը սկսվեց 11. 08. 2016 –ին:

Կողբ համայնքի կազմում են Կողբ և Զորական գյուղական բնակավայրերը:

Կողբը հնում եղել է Գուգարաց նահանգի Կողբափոր գավառի կենտրոնը: Գյուղամերձ տարածքում են գտնվում Մշկավանք, Տավարաեղցի, Վարդգյուղ, Լոմուս և այլ վանքերի ու եկեղեցիների ավերակները: Գյուղի միջով անցնող Կողբագետի վրա կառուցված 3 կամուրջները կապում են գյուղի երկու մասերը: Զորական գյուղը մինչև 1988 թ. բնակեցված է եղել ադրբեջանցիներով: Ազգամիջյան կռիվների ահագնացման պատճառով այստեղ բնակություն են հաստատել Շամխորի շրջանի Չարդախլու գյուղից մոտ 320 բռնագաղթած ընտանիքներ: Համայնքի բնակչության հիմնական մասը զբաղված է այգեգործությամբ, բուսաբուծությամբ և անասնապահությամբ: Մնացած մասը զբաղված է առևտրի և հանրային սննդի կետերում, քարամշակման և փայտամշակման, անտառային բարիքների հավաքչարարության և վերամշակման ոլորտներում: Զգալի է նաև մարդկանց ներգրավվածությունը գյուղում տեղակայված գործարանում:

Կողբի տնտեսության մրցակցային առավել ու թյ ու ն ն եր ը

Համայնքի տնտեսության մրցակցային առավելությունները վեր հանվեցին՝ օգտագործելով «LED cafe» մեթոդոլոգիան:

- Համայնքը շրջապատված է անտառային գոտիներով, որոնք հարուստ են հատապտուղների և այլ անտառային բարիքների մեծ պաշարով:
- Եղանակային և բնակլիմայական պայմանները նպաստավոր են այգեգործության և ջերմոցային տնտեսությունների զարգացման համար:
- Ձմեռները համեմատաբար մեղմ են (մինչև -6C)՝ երկրի այլ համայնքների (շրջանների) հետ համեմատած:
- Բնակչության մեծ մասը մասնագիտացած է խաղողագործության և ավանդական գինեգործության մեջ:
- Մ-16 Երևան–Թբիլիսի ճանապարհին անցնում է համայնքի միջով, ինչը պայմաններ է ստեղծում ճանապարհամերձ հատվածներում հանրային սննդի կետերի հիմնման և առևտրի կազմակերպման համար:
- «Զիկատար» բնապահպանական կենտրոնի առկայությունը, որի միջոցով ապահովվում է արգելավայրի տարածքում գտնվող բնության եզակի հուշարձանների, բնական պաշարների բնականոն զարգացման, պահպանության, վերարտադրության, անտառի պաշարների պահպանության

ու վերարտադրության գիտական փորձարկումների իրականացումը, նպաստում տուրզմի զարգացմանը:

- Նպաստավոր պայմաններ մերձարևադարձային մշակաբույսերի (ձիթապտուղ, կիվի, պիստակ, նուշ, կիտրոն) աճեցնելու համար:
- Փայտանյութի մեծ պաշար անտառներից:

Կողբի տնտեսության նկարագիրը

Ըստ առաջատար ոլորտների բնակավայրի տնտեսության պատկերը ստանալու, ինչպես նաև տնտեսական զարգացման նախաձեռնությունները վեր հանելու համար՝ օգտագործվեց Մ. Պորտերի «Աղամանդ» մասնակցային ախտորոշման և գնահատման գործիքը:



Կողբ համայնքի տնտեսության հիմնական ճյուղերն են՝

- այգեգործությունը,
- դաշտավարությունը,
- անասնապահությունը,
- առևտուրը,
- փայտամշակումը և ձեռագործ իրերի արտադրությունը:

Պտղաբուծություն և խաղողագործություն

Պտղաբուծության մեջ ներգրավված է համայնքի բնակչության մոտ 80%-ը: Նրանց մեծ մասն իրենց տնամերձ հողամասերում ունեն այգիներ: Տնամերձ հողամասերից դուրս այգեգործությամբ են զբաղվում մոտ 100 տնտեսություններ: Պտղի հիմնական տեսակներն են՝ խնձորը, սալորը, դեղձը, արքայանարինջը: Բացի վերը թվարկված աճեցվող հիմնական պտուղներից, համայնքներում փոքր ծավալներով առկա են նաև ընկույզի, թզի, կիվիի, լիմոնի, նռան և այլ այգիներ: Ոռոգովի հատվածները գրեթե ամբողջությամբ մշակվում են: Այգիների

ընդլայնման հնարավորությունը պայմանավորված է ոռոգման ջրի առկայությամբ: Ներկայումս ոռոգվում է հողերի մոտ 30%-ը:

Համայնքի ներսում մրգերի վերամշակում և պահպանում գրեթե չի իրականացվում: Գործում են մի քանի սառնարաններ և չորանոցներ, որոնք հիմնականում օգտագործվում են սեփական բերքի մի մասի պահպանման և վերամշակման համար:

Բերքատվությամբ և եկամտաբերությամբ պտղաբուծության ճյուղը գրեթե չի զիջում երկրի առաջատար այգեգործական գոտիներին: Այստեղ զարգացած են չրագործությունը, սառնարանային տնտեսությունները, իսկ որոշ հատվածներում նաև՝ գինեգործությունը, ինչի շնորհիվ ճյուղը դառնում է առավել շահութաբեր և մրցունակ:

Խաղողը մշակվում է Կողբ բնակավայրում, հիմնականում տեխնիկական սորտեր՝ լավվար, օկաձիթելի և թավրիզենի: Խաղողի հիմնական մասը մթերվում է գինու և կոնյակի գործարանների կողմից: Բերքի որոշ մասն էլ տնտեսություններն օգտագործում են գինեգործության մեջ: Գրեթե բոլոր խաղողագործներն էլ ունեն սեփական գինու արտադրություն:

Մեկ կիլոգրամ տեխնիկական խաղողի դիմաց վճարում են 145 դրամ: Ընդհանուր հաշվարկներով 1 հա խաղողի մշակումից այգեգործներն ապահովում են միջինը 2 մլն. դրամ շահույթ:

Դաշ տավար ու թյ ու ն

Դաշտավարության մեջ հիմնական մշակաբույսերն են՝ ցորենը, գարին, եգիպտացորենն ու կարտոֆիլը: Տնային տնտեսությունները փոքր քանակությամբ մշակում են նաև սոխ, լոբի, լոլիկ և հաճար: Վերջին երեք տարիների ընթացքում Ջորականում փորձ է արվում աճեցնելու նոր մշակաբույսեր՝ սոխ և սխտոր: Սոխը ապահովում է մեկ հեկտարից մոտ 1 200 000 դրամ շահույթ, ինչը մի քանի անգամ մեծ է գարու և ցորենի մշակման արդյունքում ստացած շահույթից: Խոսքը ոչ ջրովի հողատարածքներում սոխի մշակման մասին է: Ջրովի հողատարածքներում սոխը կարող է ունենալ երկու անգամ ավելի շատ բերքատվություն:

Մշակաբույսերի բերքատվության ցուցանիշները մոտ են հանրապետության միջին ցուցանիշներին: Բուսաբուծության ոլորտը որևէ աչքի ընկնող առավելություն չունի շրջանի և երկրի այլ համայնքների հետ համեմատած, բացառությամբ, որ կարտոֆիլն այստեղ շուտ է հասնում և վաճառքի է հանվում շուկա այն ժամանակ, երբ կարտոֆիլի գներն ամենաբարձրն են: Մնացած տեսակներն ու հացահատիկային մշակաբույսերը վաճառվում են երկրի շուկայում ձևավորված գներով և եկամտաբերությամբ նույնն են, ինչ երկրի մյուս շրջաններում: Ցորենի և գարու արտերի 1 հեկտարն ապահովում է միջինը 100 000 դրամ շահույթ:

Մշակաբույսերն աճեցվում են անջրդի հողերում, այդ պատճառով էլ փոխարինումը բարձրարժեք մշակաբույսերով և այգիներով արդարացված չէ: Մակայն ոլորտում նոր արժեք ստեղծելու հնարավորություն է ջերմոցային տնտեսությունների հիմնումն ու զարգացումը: Համայնքների աշխարհագրական դիրքն ու բնակլիմայական պայմանները բարենպաստ են ջերմոցային տնտեսություններ վարելու համար:

Ան սա ն սալահ ու թյ ու ն

Անասնապահությամբ համայնքում զբաղվում է բնակչության մոտ 65 տոկոսը: Հիմնականում պահում են խոշոր եղջերավոր անասուններ: Կովերի կաթնատվությունն այս հատվածում կազմում է տարեկան 1300-1800 լիտր: Անասուններին բացարձակապես կերակրում են խոտով:

Աղյուսակ 15. Անասնապահության տվյալներն ըստ բնակավայրերի (աղբյուր՝ համայնքային հանդիպումների արդյունքում ստացված տվյալներ):

	Զորական	Կողբ
Խոշոր եղջերավոր	750	1200
• որից կովեր	420	547
Մանր եղջերավոր	800	72
Խոզ	351	265
Խոտհարք	55 հա	270 հա
Արոտավայրեր	1000 հա	2000 հա

Համայնքներում ստացված կաթն ամբողջությամբ սպառվում և վերամշակվում է տեղում՝ տնային տնտեսությունների կողմից: Արտադրում են մածուն, ռեժան, թան, պանիր և կարագ: Կաթի մթերում տեղի չի ունենում: Համայնքում արտադրված կաթնամթերքի մի մասը վաճառվում է տեղի խանութների միջոցով, մյուս մասն էլ անմիջապես տնտեսությունների կողմից՝ ծանոթ- բարեկամներին: 1 անասունի խնամքը ֆերմերին ապահովում է միջինը 140000 դրամ տարեկան եկամուտ:

Մսի արտադրությունն ու վաճառքը ևս աչքի չի ընկնում բարձր եկամտաբերությամբ, քանզի այն վաճառվում է հիմնականում դրսի վերավաճառողների միջնորդությամբ, ովքեր գյուղացիներից ձեռք են բերում միսը ցածր գներով (1կգ դիմաց՝ 1800դրամ):

Առևտուր և սպասարկում

Համայնքների Մ-16 Երևան-Թբիլիսի մայրուղու վրա գտնվելու հանգամանքը բարենպաստ պայմաններ է ստեղծում ճանապարհամերձ հատվածներում հանրային սննդի կետերի և առևտրի կազմակերպման համար: Համայնքում գործառնախ առկայությունը ևս ապահովում է լրացուցիչ շարժ և նպաստում ճյուղի զարգացմանը: Ներկայումս մի շարք սննդի կետեր և փոքր խանութներ են գործում: Մսնդի կետերում սպասարկման որակը բավականին ցածր է: Մենյակներն աչքի չեն ընկնում մաքրությամբ, չկան ճաշատեսակների ցանկեր՝ իրենց գներով: Ինչ վերաբերում է սննդին, ապա այստեղ պատկերն ավելի խոստուն է՝ տեղական մսից պատրաստված ուտեստներ, կաթնամթերք, ավանդական կերակուրներ: Սպասարկման որակի բարելավման պարագայում կավելանա հաճախորդների քանակը և ոլորտի զարգացումը կբերի եկամուտների աճին:

Փայտամշակում


Փայտմշակմամբ զբաղվում են Կողբ բնակավայրի մի քանի փոքր արտադրամասեր: Արտադրում են կահույք, փայտյա դետալներ, արկղեր, ինչպես նաև աթոռի կիսաֆաբրիկատներ: Կահույքի պատվերներ են ունենում տարբեր մարզերից և Երևանից: Պայմանավորված փայտանյութի էժանությամբ, որը ձեռք է բերվում առաջնային շուկայից, հմուտ մասնագետների առկայությամբ՝ փայտամշակման ոլորտը մրցունակ է երկրի առաջատար համայնքների հետ համեմատած:

Արտադրությունից առաջացած թափոններից և թեփից վերամշակում չի իրականացվում: Պահանջվող սարքավորումներով վերագինվելու դեպքում հնարավոր կլինի օգտագործել թափոնները ևս՝ ապահովելով լրացուցիչ շահույթ:

Չարգացման նախաձեռնություններ

Մասնակցային ախտորոշման և պլանավորման վարժության միջոցով համայնքի բնակիչների և գլխավոր դերակատարների հետ դուրս բերվեցին տնտեսության զարգացման հետևյալ հիմնական նախաձեռնությունները.

- արոտավայրերի ջրարբիացում և տաղավարների կառուցում,



- անասնապահական ռեսուրսային կենտրոնի հիմնում,
- մեքենատրակտորային պարկի հիմնում,
- ոռոգման ջուր,
- այգեգործության և հողագործության ռեսուրսային կենտրոն,
- սառնարանային տնտեսությունների, չորանոցների և ջերմոցների հիմնման աջակցություն,
- հակակարկտակայանների տեղադրում,
- մսի վերամշակման արտադրամասերի հիմնման աջակցություն:

Մասնակցային գնահատման մեթոդով դուրս բերված առաջնային երկու նախաձեռնություններն են՝

- մեքենատրակտորային պարկի հիմնում,
- ոռոգման ջրագիծ:

Առաջնային նախաձեռնություններ

Ոռոգման ջրագիծի կառուցում

Համայնքն ունի 933 հա վարելահող: Ոռոգման ջրի խնդիրը լուծելու նպատակով 2003-2004թթ. գյուղի տարածքով անցնող Կողբ գետի ջրի բազայի վրա կառուցվել է ինքնահոս ջրագիծ, սակայն վերջին տարիներին գետի ջրի նվազելու հետևանքով ջրագծի թողունակությունն իջել է (15-20լ/վ), ինչը բավարարում է գյուղի միայն մեկ հատվածին: Ինքնահոս ջրագծում ջրի քանակի ավելացման նպատակով նախկինում կառուցվել է 3900 մետր երկարությամբ ջրագիծ (Ախիտք-Խլագոմ-Կողբ), սակայն աշխատանքներն ավարտին չեն հասցվել ֆինանսական միջոցների սղության պատճառով:

2300 գծամետր ջրագծի կառուցման դեպքում հնարավոր կլինի ոռոգել 245 հա տնամերձ հողեր, 32 հա խաղողի և 23 հա պտղատու այգիներ, 18 հա բանջար-բոստանային մշակաբույսերի ցանքատարածություններ:

Ոռոգման խնդրի լուծումը հնարավոր է նաև կուտակման միջոցով՝ կառուցելով 15000-25000 մ³ տարողությամբ ջրահավաք ավազան, որի համար առկա է նպաստավոր տեղանք (Մալերք):

Ծրագրի արժեքը կազմում է մոտ 40 մլն. դրամ (առանց ջրահավաք ավազանի):

Մեքենատրակտորային կայանի հիմնում

Կողբ համայնքում տնային տնտեսությունների գերակշիռ մասը ներգրավված է հողագործության մեջ երեք հիմնական ուղղություններով՝ այգեգործություն, բանջար-

բուստանային մշակաբույսերի և հացահատիկային մշակաբույսերի աճեցում: Ստորև ներկայացված է հողագործության պատկերը Կողբ համայնքում ըստ բնակավայրերի:

Աղյուսակ 16. Հողագործության պատկերը թվերով (աղբյուր՝ համայնքային հանդիպումների արդյունքում ստացված տվյալներ):


	Զորական	Կողբ
Բնակչություն	1050	4838
Տնային տնտեսություններ	324	1453
Վարելահողեր	656 հա	933 հա
Ցանվող մշակաբույսեր (հա)	552	350
Այգիներ	83	140
Խոտհարք	53	271

Լինելով համայնքի եկամուտ ապահովող հիմնական ճյուղերից մեկը՝ հողագործությունն ապահովված չէ անհրաժեշտ գյուղատնտեսական տեխնիկայով: Ժամանակին չեն բարեկարգվում նաև դաշտամիջյան և հանդամիջյան ճանապարհները: Տեխնիկայի հետևյալ կազմի առկայության դեպքում կլուծվի հողագործության զարգացմանն ու տնտեսությունների արդյունավետ աշխատանքի կազմակերպման հիմնական խոչընդոտի խնդիրը:

- Էքսկավատոր («Погрузчик JCB ECX»)- 35-45 մլն. դրամ,
- «DT 75» թրթուրավոր տրակտոր -25 մլն. դրամ,
- Անիվավոր մինի տրակտոր (հնդկական) 3 հատ - 30 մլն. դրամ,
- Շարքացան -5 մլն. դրամ,
- Սրակիչ՝ 2 հատ՝ -5 մլն.դրամ,
- Ձեռքի խոտհնձիչ՝ 4 հատ -5մլն. դրամ,
- Գրեյդեր- 40-50 մլն. դրամ:

Ծրագրի արժեքը կազմում է 150 մլն. դրամ:

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ



Աղյուսակ 17. Վայոց Ձորի մարզի համառոտ տվյալներ²³

Տարածքը	2 308 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.8 %
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	41
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	51.4 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	1.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	35.2 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	190 337.6 հա

Վայ ք համայնքը

²³ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015»

Վայք համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործընթացը սկսվեց 04. 08. 2016-ին:

Դիրքը

Վայք համայնքը գտնվում է Վայոց Ձորի մարզում՝ Արփա գետի միջին հոսանքի աջ կողմում: Երևանից 135կմ հեռավորության վրա՝ հարավ-արևելք, Երևան-Միսիան մայրուղու վրա: Վայք համայնքը ներառում է Վայք, Արին, Զեդեա, Փոռ, Ագատեկ բնակավայրերը:

Ճանապարհներ

Վայոց Ձորի մարզը ընդհանուր առմամբ ապահովված է տրանսպորտային ցանցով: Տարածքով անցնում է Երևան-Վայք-Գորիս մայրուղին, որը ներկայիս նախագծով նախատեսվում է փոխարինել Արփա գետի ձախ ափով անցնող շրջանցիկ մայրուղով, որը կնպաստի էկոլոգիական, տրանսպորտային և քաղաքաշինական հիմնախնդիրների բարելավմանը: Վայքում ներհամայնքային ճանապարհների վիճակը հիմնականում բարվոք է, նպաստավոր գործարարության զարգացման համար: Կապիտալ վերանորոգման կարիք ունեն հիմնական մայրուղուց դեպի Արին և Զեդեա բնակավայրերը ձգվող ճանապարհները, ինչպես նաև գյուղական չորս բնակավայրերի ներքին ճանապարհները:

Անշարժ գույք

Վայքում կան բազմաթիվ չօգտագործվող շինություններ, որոնք նախկին խորհրդային գործարանների վարչական և արտադրական շինություններ են, ներկայում՝ մասնավոր սեփականություն: Անշարժ գույքը աչքի չի ընկնում ճարտարապետական յուրօրինակությամբ: Ավտոմայրուղու երկայնքով ձգվում են խորհրդային շրջանում կառուցված անհրապույր հինգհարկանի շինությունները: Վայք քաղաքի հիմնական փողոցը՝ գուգահեռ ավտոմայրուղուն, բարետես է, կանաչապատ: Երկհարկանի առանձնատները ավանդական ու հաճելի գյուղաքաղաքի միջավայր են ստեղծում:

Որակավորված աշխատուժ

Վայքի առանցքային առավելությունը գործարար ներուժն է, մարդկանց հակումը դեպի գործարարությունը: Համայնքում կան որակյալ երկրաբաններ, բնական հյուրերի և լիմոնադի արտադրության մասնագետներ, հացթուխներ, տուրիզմի կազմակերպման մասնագետներ, խորհրդային շրջանում որակավորված տեխնոլոգներ ու ինժեներներ: Մնացած ոլորտներում մասնագիտական աշխատուժը աչքի չի ընկնում յուրօրինակ ուժեղ կողմերով՝ սկսած տեխնիկական մասնագիտություններից մինչև սպասարկման ոլորտի մասնագետները:

Աղյուսակ 18. Վայք համայնքի գյուղատնտեսության ցուցանիշները (աղբյուրը՝ պաշտոնական վիճակագրություն)

	Բնակչություն	Գյուղ հողեր / հա	Վարելահող հա	Այգի	Մեղվարնտանք	Մանր եղջերավոր	Խոշոր եղջերավոր	Որից՝ կով
Վայք	6772	105	0	0	21100	257	617	176
Արին	337	3468	295	62	374	1379	497	172
Ագաստեկ	589	6542	785	76	392	597	542	247
Զեղեա	173	2744	302	46	83	57	83	40
Փոռ	145	1890	194	12	226	150	160	72
Ընդամենը	7966	14751	1577	198	22175	2440	1899	707

Վայքի տնտեսության մրցակցային առավելությունները

Համայնքի տնտեսության մրցակցային առավելությունները վեր հանվեցին՝ օգտագործելով «LED cafe» մեթոդոլոգիան:



Վայքի տնտեսությունն ունի մի շարք մրցակցային առավելություններ, որոնց մի մասը ներկայումս ունի տնտեսական կիրառություն, օգտագործվում է ձեռ-նարկությունների կողմից:

Բնական մրցակցային առավելություններ .

- ջրային ռեսուրսներ,
- ոսկու, բազալտի և

- արձձի հանքավայրեր,
- Ջերմուկը՝ որպես առողջարարական կենտրոն Վայքի հարևանությամբ է,
- մաքուր բնություն,
- մեղմ, տաք կլիմա,
- արևային օրերի ռեկորդային քանակ,
- միջպետական մայրուղին, հետագայում՝ Հյուսիս – Հարավ ավտոմայրուղին, անցնում են համայնքի միջով,

- բնական և պատմական բազմաթիվ հուշարձաններ,
- գյուղատնտեսական մեծաքանակ հողերի առկայություն,
- ինքնահոս ոռոգում,
- բազմազան բույսեր և դեղաբույսեր:

Մասնագիտական, մարդկային մրցակցային առավելություններ.

- տուրիզմի զարգացման մասնագետներ,
- տեխնոլոգներ, ինժեներներ, երկրաբաններ,
- գործարար ունակություններով մարդկանց մեծ տեսակարար կշիռ,
- մեղվաբուծության բարձրորակ մասնագետներ,
- բարձրագույն կրթություն ունեցող մարդկանց տեսակարար կշիռը բարձր է:

Տեխնոլոգիական մրցակցային առավելություններ.

- տնական գինու, օղու, դոշաբի ավանդական տեխնոլոգիաներ,
- սառնարաններ,
- գինեգործության ժամանակակից տեխնոլոգիաներ,
- այգեգործության ժամանակակից տեխնոլոգիաներ,
- մրգի վերամշակման (չիր, օղի) մրցունակ տեխնոլոգիաներ:

Վայ ք ի տն տե ս ու թ յ ան և կ ար ա գ ի ը ը

Ըստ առաջատար ոլորտների բնակավայրի տնտեսության պատկերը ստանալու համար՝ օգտագործվեց «COMPASS» մասնակցային ախտորոշման և գնահատման գործիքը:

1. Գործող ձեռնարկությունները, ճյուղերը

Վայքի տնտեսությունը բազմազան է: Մի կողմում մրցունակ, արտադրողական, արդյունավետ կազմակերպված մի քանի բիզնեսներ են, մյուս կողմում՝ ցածր տնտեսական մրցունակությամբ բազմաթիվ ձեռնարկություններ:

Մրցունակ ձեռնարկությունները կենտրոնացած են գինեգործության, հիդրոէլեկտրաէներգիայի ճյուղերում, ռեստորանային և հյուրանոցային սպասարկման մեջ. գազի լցակայանները նույնպես մրցունակ են:

Ձեռնարկությունների մրցունակությունը ցածր է առևտրի, սննդարդյունաբերության, բնակչության կենցաղային սպասարկման ոլորտներում, ինչպես նաև անասնապահության և հողագործության մեջ:

Համայնքի տնտեսության վերլուծությունը կատարվել է երկու չափանիշների հիման վրա: Մի կողմից ուշադրություն է դարձվում տնտեսության ճյուղերի շահութաբերականը համեմատած հարևան համայնքների հետ, մյուս կողմից՝ ճյուղի

ձեռնարկությունների հակվածությունն է դեպի փոփոխություններն ու համագործակցությունը, այսինքն՝ որքանով է քննարկվող ճյուղը հակված համագործակցելու համայնքի տնտեսության այլ ճյուղերի հետ:

	Ճյուղի շահութաբերությունը բարձր է	Ճյուղի շահութաբերությունը ցածր է
Համագործակցության հակված ճյուղեր	Ռազմավարական ճյուղեր - Հյուրանոցներ - Այգեգործություն	Բարելավվող ճյուղեր - Սննդարդյունաբերություն - Սպասարկման ոլորտ - Մեղվապահություն
Համագործակցության չհակված ճյուղեր	Հագեցած ճյուղեր - Գազի լցակայաններ - Հանքարդյունաբերություն - Մանրածախ առևտուր - Ռեստորանային ծառայություններ	Անհուսալի ճյուղեր - Անասնապահություն - Խաղողագործություն - Հացահատիկի արտադրություն

Վայքի տնտեսության հեռանկարը ռազմավարական և բարելավվող ճյուղերն են, որտեղ կուտակված է տնտեսական զարգացման պոտենցիալը: Տուրիզմի և այգեգործության զարգացման շուրջ պետք է կառուցվի Վայքի տնտեսության զարգացման առանցքը:

Անասնապահությունը համայնքի թույլ ճյուղերից է: Կովերի կաթնատվությունը ցածր է հանրապետության միջին ցուցանիշից, մթերման գներն էլ ցածր են և չեն ապահովում բավարար շահութաբերություն: Մսի արտադրության շահութաբերությունը բարձր է՝ պայմանավորված ընդարձակ արտավայրերի առկայությամբ և բնակլիմայական պայմաններով:

Հացահատիկային կուլտուրաների աճեցման ոլորտում Վայքում գրանցվող միջին արտադրողականությունը ցածր է հանրապետության միջին ցուցանիշից:

2. Սկսնակ ձեռնարկություններ, նոր ներդրումներ

Վերջին երկու տարվա ընթացքում Վայքում կատարվող ներդրումների մեծ մասն ուղղվում է դեպի այգեգործության և պտուղների վերամշակման ոլորտներ: Այստեղ կիրառվում են ժամանակակից տեխնոլոգիաներ, տնկիների ավելի արտադրողական տեսակներ:

Պտուղների վերամշակման առումով նույնպես հիմնվում են մրցունակ և արդյունավետ բիզնեսներ: Մարզում տեխնոլոգիական զինվածությամբ առաջատար գինեգործարանը, ծիրանի օդու արտադրամասը, չրերի արտադրամասը, սառնարանային տնտեսությունները գործում են Վայքում:

Սալորը, ծիրանը և դեղձը այգեգործության համեմատական մեծ արտադրողականությամբ ճյուղերն են: Ընդ որում, եթե դեղձի առումով արտադրողականությունը զիջում է Արմավիրի և Նոյեմբերյանի համապատասխան ցուցանիշին, ապա սալորի և ծիրանի առումով Վայքի տարածաշրջանը առաջատարներից է: Նույնը վերաբերում է նաև ընկույզի արտադրությանը:

Խաղողի արտադրողականությունը ցածր է, կան բարդություններ մթերման և գումարների վերադարձի հետ կապված:

Զարգացման և ախաձեռնություններ

Համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործիքների կիրառման արդյունքում բացահայտվեցին համայնքի տնտեսության զարգացման հետևյալ նախաձեռնությունները.



- մեքենաստրակտորային կայան, որի տեխնիկական կբավարարի համայնքի վարելահողի մշակման, խոտի հավաքման և այլ հարակից ծառայությունների մատուցման համար,
- գյուղատնտեսական մթերքների վերամշակման նոր տեխնոլոգիաներ, արտադրամասերի հիմնման աջակցություն,
- հակակարկտակայաններ կամ հակակարկտային ցանցերի ներդրման աջակցություն,
- լրացուցիչ շուկաներ (գյուղատնտեսական շուկա մայրուղու հարևանությամբ),
- արևային էներգիան տնտեսապես շահավետ օգտագործելու աջակցություն,
- բիզնես ինկուբատոր, որի հիմնական ծառայությունները ուղղված կլինեն նոր ստեղծվող ձեռնարկությունների աջակցությանը՝ հատկապես՝ ծառայությունների ոլորտում,
- մեղրի լաբորատորիա և ընդհանուր ռեսուրսային կենտրոն՝ ներառյալ փաթեթավորումը, բրենդավորումը և իրացման գծով աջակցությունը,
- ոռոգման ցանցերի վերանորոգման և բարելավման աջակցություն,
- Արիսի և Զեդեայի ճանապարհների վերանորոգում (6 և 8 կմ),
- բժշկական տեխնիկայի բարելավում, թարմացում: Հատկապես՝ ախտորոշիչ սարքավորումների մասով,
- արոտավայրերի և հողերի արդյունավետ կառավարում:

Ծրագրերի գերակայությունների սահմանման մասնակցային վարժության միջոցով

համայնքի հիմնական դերակատարները որոշեցին առաջնային ծրագրերը՝

- մեքենատրակտորային պարկ,
- հիմնական մայրուղուց դեպի Արին և Ջեդեա տանող ճանապարհների վերանորոգում,
- գյուղմթերքների վերամշակման նոր տեխնոլոգիաներ և ստեղծվող ձեռնարկությունների համակողմանի աջակցություն,
- ճանապարհային շուկա՝ գյուղատնտեսական մթերքների իրացման և Վայքի տուրիստական գրավչության բարձրացման համար:

Առաջնային և ավիաձեռնություններ

Մեքենատրակտորային պարկ

Գյուղական բոլոր 4 բնակավայրերում բնակչությունն ամբողջությամբ ներգրավված է հողագործության մեջ: Մոտ 350 տնային տնտեսությունների կողմից մշակվում է մոտ 1300 հա հող, որից 200 հա-ը տնամերձ հատվածներում: 250 հա-ը կազմում են այգիները: Աճեցնում են հիմնականում ծիրան, խնձոր և ընկույզ: Մնացած մասը բաժին է ընկնում հացահատիկի և բազմամյա խոտաբույսերի մշակմանը:

Աղյուսակ 19. Վայքի դաշտավարության հիմնական ցուցանիշները:

Համայնքներ	Շահառու տնտեսություններ	Մշակվող Վարելահողեր	Այգիներ (հա)	Չմշակվող
Ազատեկ	180	440	130	300
Արին	47	280	100	40
Ջեդեա	61	100	109	100
Փոր	70	130	19	90
Ընդամենը	358	950	358	530

Գյուղտեխնիկայի մաշվածության և որոշ տեսակների բացակայության պատճառով 500 հա հող չի մշակվում, իսկ մշակվող տարածքներում էլ հողային աշխատանքները լիարժեք չեն կատարվում: Այդ պատճառով նվազում է այգիների և վարելահողերի բերքատվությունը՝ հեղևաբար և եկամտաբերությունը: Գյուղատնտեսական աշխատանքների ժամանակին և որակյալ իրականացման համար հարկավոր է ՄՏԿ հիմնում՝ հետևյալ գյուղտեխնիկայի ցանկով.

1 հատ հացահատիկ հավաքող կոմբայն – 35-50 մլն. դրամ,

1 հատ տրակտոր (90-100 ձիաուժ) - 13 մլն դրամ,

2 հատ ցորենի շարքացան – 6 մլն. դրամ,

2 հատ խոտի հավաքիչ մամլիչ – 11 մլն. դրամ,

2 հատ գութան - 2 մլն. դրամ,

1 հատ մինի տրակտոր- 8-10մլն. դրամ,

2 հատ խոտհնձիչ - 2.5 մլն. դրամ

2 հատ կուլտիվատոր- 1.5մլն. դրամ:

Ընդամենը՝ 90-100 մլն. դրամ:

Ծրագրի իրականացման արդյունքում կմշակվեն ազատ հողերը, կընդլայնվեն այգիները, իսկ արդեն մշակվող տարածքներից տնտեսությունների եկամուտը կավելանա 20-30%-ով:

Հ ի մ ն ակ ան մ այ ր ու ղ ի ն Ար ի ն և Զ ե դ ե ա ք ն ակ ավ այ ր ե ր ի ն կ ապ ո ղ ճ ան ապար հ ն ե ր ի վ ե ր ան ո ր ո գ ու մ

Վայք քաղաքից Արին գյուղ տանող ճանապարհը մոտ 6 կմ է: Արինի բնակչությունը 337 մարդ է կամ մոտ 80 գյուղացիական տնտեսություն: Արինը հայտնի է մրգերի արտադրությամբ, ոչխարաբուծությամբ և կաթնամթերքի արտադրությամբ: Ճանապարհների վիճակը բարդացնում է գյուղատնտեսական մթերքների իրացման գործընթացը:

Ամեն տնտեսություն Վայքում կամ այլ քաղաքներում տարեկան իրացնում է ավելի քան մեկ տոննա գյուղատնտեսական արտադրանք՝ միրգ, ցորեն, միս, կաթնամթերք և այլն:

Տնտեսական արդյունավետության առումով ճանապարհի վերանորոգումը շահավետ չէ, այդուհանդերձ, հաշվի առնելով գյուղ-բնակավայրի պահպանման, գյուղացիական տնտեսությունների արդյունավետության բարձրացման, բեռնափոխադրումների և մարդկանց սեղափոխման կարևորությունը, ճանապարհի վերանորոգումը կարևոր ծրագիր է:

Դրա արժեքը մասնակի վերանորոգման դեպքում կկազմի մոտ 400 մլն դրամ, իսկ կապիտալ վերանորոգման դեպքում՝ մոտ 580 մլն դրամ:

Նույնը վերաբերում է նաև Ջեդեայի ճանապարհի վերանորոգմանը: Երևան-Վայք մայրուղուց Ջեդեա գյուղ ճանապարհը մոտ 6.5 կմ է: Ջեդեայում բնակչությունը 173 մարդ է: Բնակչության թվաքանակը և արտադրված գյուղատնտեսական մթերքների փոքր քանակը տնտեսապես շահավետ չեն դարձնում ճանապարհի վերանորոգումը: Այն ավելի շատ սոցիալական նշանակություն ունի գյուղի բնակչության արտագաղթի կանխման, մարդկանց սոցիալ- տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման համար:

Ջեդեայի ճանապարհի մասնակի վերանորոգումը մոտավոր գնահատմամբ արժե 450 մլն դրամ, իսկ կապիտալ վերանորոգումը՝ 650 մլն դրամ:

Գյ ու ղ մ թ եր ք ն եր ի վ եր ա մ շ ա կ մ ա ն ն ո թ տ ե խ ն ո լ ո գ ի ա ն եր և ս տ ե ղ ծ վ ո ղ ձ ե ռ ն ար կ ու թ յ ու ն ն եր ի հ ա մ ա կ ո ղ մ ա ն ի ա ջ ա կ ց ու թ յ ու ն

Գյուղատնտեսական մթերքների վերամշակման արդյունավետ ձեռնարկությունների հիմնումը և զարգացումը Վայքի համայնքի բնակիչները գնահատում են որպես տնտեսության զարգացման հիմնական խթան:

Համայնքի բնակչության հետ մասնակցային պլանավորման արդյունքում վերամշակող ձեռնարկությունների աջակցության կենտրոնը անվանվեց՝ «Տեխնոլոգիական նորարարական կենտրոն» (ՏՆԿ): ՏՆԿ հիմնական գործառույթները՝

- նոր տեխնոլոգիաների գծով գործնական կրթություն տարածաշրջանի սկսնակ ձեռնարկությունների համար,
- ուսուցողական այցելություններ լավագույն փորձ կիրառող հայկական կամ արտասահմանյան ընկերություններ,
- սկզբնական կապիտալի տրամադրում ընկերություններին՝ գրանցման և գործունեության սկզբի համար. դրանք կարող են լինել փոքր գրանտներ, անտոկոս փոխատվություններ կամ բանկային տոկոսների սուբսիդավորումներ,
- տեխնոլոգիաների վաճառք, վերանորոգում, մասնագետների կրթություն, նոր սարքավորումների կամ տեխնոլոգիաների վերաբերյալ ուսումնական նյութերի տարածում,
- մշտական խորհրդատվություն սկսնակ ձեռնարկություններին՝ տեխնոլոգիաների ներդրման կամ շուկաների հասանելիության մասով,
- տեղական ապրանքանիշերի ստեղծում և զարգացում, միասնական բրենդինգ տարածաշրջանի ձեռնարկությունների համար:

ՏՆԿ-ն առանձին խորհրդատվական ծառայություններ կունենա ինչպես մրգերի վերամշակման՝ չիր, մուրաբաներ, կոմպոտներ, ջեմեր և այլն, այնպես էլ կաթնամթերքի և մսամթերքի վերամշակման գծով:

Առանձին բաժին կգրադվի այգեգործության զարգացման համար նոր տեխնոլոգիաների ներդրման աջակցությամբ՝ տնկիներ, հակակարկտային ցանցեր, կաթիլային ոռոգում, իրացման աջակցություն և այլն:

Ընդհանուր առմամբ, ՏՆԿ-ի գործունեության համար անհարժեշտ են հետևյալ ներդրումները՝

- սկզբնական ներդրում՝ շինություն, կահավորում, նախնական սարքավորումներ՝ մոտ 50 մլն դրամ,
- գործառնական ծախսեր առաջին երկու տարվա համար՝ մոտ 50 մլն դրամ (արդեն երկրորդ տարվա սկզբից ծառայությունները մատուցվում են վճարովի, իսկ երրորդ տարվանից կենտրոնը դառնում է կայուն և ինքնաբավ),
- սկզբնական կապիտալի դրամագլուխ՝ հարյուր մլն դրամ,
- սարքավորումների ձեռքբերման համար՝ մոտ հարյուր մլն դրամ:

Ընդհանուր առմամբ, կենտրոնի հիմնումը և առաջին երկու տարվա ամբողջական գործունեությունը կարժենա մոտ երեք հարյուր մլն դրամ:

Կենտրոնը կարող է հիմնվել համայնքի կողմից՝ ներգրավելով մասնավոր ներդրումներ, այսպիսով՝ դառնալով մասնավոր-պետական համագործակցության օրինակ և ապահովելով գործունեության հետագա կայունությունը:

Ճանապարհային շուկա

Այս նախաձեռնությունը նոր չէ Վայքի համար: Ամեն զարնանից մինչև ուշ աշուն մայրուղու վրա տարբեր տեղերում տարերային շուկաներ են գոյանում, որտեղ մարդիկ վաճառում են միրգ, տնական արտադրության գինի, օղի և այլ բարիքներ:

Ճանապարհային կազմակերպված շուկան հնարավորություն կտա կենտրոնացնել նման ծառայությունները մեկ վայրում և դարձնել այն ավելի գրավիչ հաճախորդների, հատկապես տուրիստների համար:

Շուկայի մեջ կներառվեն՝

- տաս-տասներկու հիմնական տաղավար՝ ուրույն ազգային ձևավորմամբ, որտեղ կիրացվի գյուղատնտեսական արտադրանք կամ տարածքում արտադրվող այլ բարիքներ, հուշանվերներ,
- փոքրիկ սրճարան, որտեղ ներքին և արտաքին տուրիստները կարող են զովանալ և հանգստանալ,
- կոմունալ հարմարություններ,
- տեղեկատվական կենտրոն, որտեղ կներկայացվի Վայք համայնքը և այստեղ առկա տուրիստական օբյեկտներն ու տեսարժան վայրերը,
- կկազմակերպվեն տուրեր և այցելություններ:


Նմանօրինակ ծրագրերը հիմնական շինությունների կառուցման և երկու տարի շահագործման հետ մեկտեղ արժեն մոտ հարյուր միլիոն դրամ:

Երկրորդ տարվա վերջում ճանապարհային շուկան դառնում է ինքնաբավ և կայուն:

Շուկան կարող է հիմնվել որպես համայնքային սեփականություն, սակայն դրա առանձին բաժիններ՝ տաղավարներ, սրճարան, տուրիստական կենտրոն, կարող են շահագործվել մասնավոր սեփականատերերի կողմից, ովքեր կվճարեն վարձավճար տարածքի օգտագործման համար:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ



Աղյուսակ 20. Վայոց Ձորի մարզի համառոտ տվյալներ²⁴

Տարածքը	2 308 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.8 %
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	41
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	51.4 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	1.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	35.2 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	190 337.6 հա

²⁴ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015»

Ջերմուկ համայնքը

Ջերմուկ համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործընթացը սկսվեց 03. 08. 2016 –ին:

Ջերմուկ համայնքի կազմում ներառված են Ջերմուկ քաղաքը՝ Կեչուտ թաղամասով, Հերիեր, Կարմրաշեն և Գնդեվազ գյուղերը:

Ջերմուկը հայտնի է որպես տուրիստական և առողջարանային գոտի՝ շնորհիվ բուժիչ հանքային ջրերի աղբյուրների և գեղատեսիլ բնության: Գործում են տասնյակից ավել առողջարաններ և հյուրանոցներ: Գյուղական բնակավայրերում զբաղվում են հողագործությամբ՝ այգեգործություն, հացահատիկային մշակաբույսեր, ինչպես նաև՝ անասնապահությամբ: Հիմնականում մշակում են ծիրան, խնձոր, ընկույզ և հացահատիկային մշակաբույսեր:

Ջերմուկի մրցակցային առավել ությունները

Համայնքի տնտեսության մրցակցային առավելությունները վեր հանվեցին՝ օգտագործելով «LED cafe» մեթոդոլոգիան:



- արևոտ օրերի մեծ քանակ՝ հանրապետության միջինից բարձր,
- առողջարար և խմելու համար պիտանի հանքային ջրերի աղբյուրներ, որոնցով պայմանավորված գործում են բազմաթիվ առողջարաններ և խմելու ջրի շշալցման խոշոր արտադրամասեր,
- «Ջերմուկ» հանրահայտ բրենդը, տուրիստական ճանաչված կենտրոն,
- օգտակար հանածոների առկայություն՝ ոսկի, շինարարական քարեր և այլն,
- պատմամշակութային և այլ տեսարժան վայրեր, որոնք համալրում են տուրիստների զբաղվածությունը,
- ուշահաս ծիրանի այգիների համար բարենպաստ դիրք. ծիրանն այստեղ հասնում է սեզոնի վերջում և վաճառվում բարձր գնով,
- հողային մեծաքանակ ռեսուրսներ՝ գյուղատնտեսության ընդլայնման և զարգացման համար,

- ալպիական մարգագետիններ, որտեղ աճում են նաև բազմազան բույսեր և դեղաբույսեր. բնակիչները հավաքում և վաճառում են դեղաբույսերը տեղի և արտասահմանյան զբոսաշրջիկներին,
- ճոպանուղու առկայություն, որն ավելի գրավիչ է դարձնում տուրիզմը,
- «Չնեմարդուկ» փառատոն,
- ձմեռային սպորտաձևերի հնարավորություն, որով պայմանավորված՝ ձմռանը ևս այցելում են ձմեռային մարզաձևերով զբաղվող սպորտսմեններ և սիրողական մակարդակի զբոսաշրջիկներ:

Ջերմուկի տնտեսության նկարագիրը

Ըստ առաջատար ոլորտների բնակավայրի տնտեսության պատկերը ստանալու համար՝ օգտագործվեց «COMPASS» մասնակցային ախտորոշման և գնահատման գործիքը:

Ջերմուկ համայնքի տնտեսության հիմնական ճյուղերն են՝

- առողջարանային հանգիստը՝ որպես տուրիզմի հիմնական մաս,
- հանքային ջրերի շշալցումը,
- հանքավայրերի շահագործումը,
- հողագործությունն ու անասնապահությունը:

Ջերմուկ քաղաքում աշխատատեղերի գերակշիռ մասն ապահովում են հանքային ջրերի շշալցման գործարաններն ու առողջարանները: Առողջարանների առկայությունն իր հերթին հանգեցնում է սպասարկման կետերի, ռեստորանների և հյուրատների զարգացմանը: 2008 թվականին Ջերմուկում շահագործման հանձնվեց նորակառույց ճոպանուղին և դահուկուղին, որը նպաստեց ձմեռային մարզաձևերով զբաղվող տուրիստների հոսքին: Ձմռան ամիսներին Ջերմուկ են ժամանում սպորտսմեններ ՌԴ-ից և արտասահմանյան այլ երկրներից:

Գործում են 10 առողջարան և հյուրանոց, վարձով են տրվում մոտ 10 բնակարան: Առկա են ռեստորաններ և բացօթյա սրճարաններ: Այցելուներն օրվա առաջին կեսն անցկացնում են առողջարաններում՝ ստանալով իրենց բուժական թերապիաները: Օրվա երկրորդ կեսին այցելում են տեսարժան վայրեր, բուժիչ ջրերի ըմպելասրահ, որտեղ հանքային ջուրը մատակարարվում է տարբեր ծորակներով՝ ըստ ջրի ջերմաստիճանի, ջրվեժ, ճոպանուղի և այլն:

Զբոսայգին, որը տարիներ առաջ ժամանցի հիմնական կենտրոնն էր, ներկայում հրապուրիչ չէ և վերականգնման կարիք ունի: Չկան զվարճանքի կենտրոններ և հյուրատներ:

Գյուղական բնակավայրերում տնային տնտեսությունների հիմնական մասը ներգրավված է այգեգործության և հողագործության մեջ: Բարենպաստ հատվածներում ընդլայնվում են այգիները (հիմնականում՝ ծիրանի): Մնացած շրջանների համեմատությամբ, նախալեռնային գոտով պայմանավորված՝ ծիրանի բերքը Ջերմուկում 20-25օր ուշ է հասնում (հանրապետությունում վերջին բերքն է): Այս գործոնը նպաստում է տվյալ

Ժամանակահատվածում ծիրանի համեմատաբար բարձր գնի սահմանմանն ու արագ իրացմանը: Ի տարբերություն Հայաստանի մյուս այգեգործական համայնքների՝ այստեղ ծառերի բողբոջման և ծաղկման շրջանը սովորականից ուշ է սկսվում, երբ ցրտահարություններն արդեն ավարտված են լինում, և բերքի զգալի կորուստներ հիմնականում չեն լինում:

Ըստ տեղի այգեգործների՝ այգեգործության զարգացման առաջնային նախապայմաններից են հակակարկտային ցանցերի տեղադրումն ու կաթիլային համակարգերի ներդրումը:

Բնությունը պարզևեղ է համայնքին նաև վայրի հատապտուղներով լեցուն անտառներով: Մարդիկ զբաղվում են հատապտուղների հավաքչարարությամբ, բերքը վաճառում համայնք այցելող զբոսաշրջիկներին և հանգստացողներին:

Ներկայումս գյուղական բնակավայրերում ևս կա հյուրատների զարգացման տենդենց: Սակայն գործընթացը դանդաղում է, քանի որ ոլորտի կայացման և զարգացման համար տնտեսություններին անհրաժեշտ է ֆինանսական (մատչելի վարկեր), տեխնոլոգիական, տեղեկատվական և գործարարության զարգացմանը միտված այլ աջակցությունների տրամադրում:

Զարգացման նախաձեռնություններ

Համայնքում մասնակցային ախտորոշման և գնահատման վարժությունների կիրառման արդյունքում բացահայտվեցին համայնքի տնտեսության զարգացման հետևյալ նախաձեռնությունները՝

- հիմնական մայրուղուց դեպի Կարմրաշեն և Հերիեր տանող ճանապարհի վերանորոգում,
- մեքենատրակտորային կայանի հիմում,
- ձմռանը ճանապարհները սպասարկող տեխնիկայի ձեռքբերում,
- աղբահանությունը կազմակերպելու համար տեխնիկայի ձեռքբերում:

Լինելով տուրիստական կենտրոն՝ Ջերմուկ համայնքը աղբահանությունը պատշաճ կազմակերպելու համար չունի անհրաժեշտ տեխնիկական բազա:

- Համայնքի գրավչությունների գովազդում՝ տուրիստների ներգրավման նպատակով:
- Սպասարկման որակի բարձրացմանն ուղղված աջակցություն:
- Ծննդատան և հիվանդանոցի տեխնիկական և կադրային թարմացում:
- Մեծ միջոցառումների համար տեխնիկայի ապահովում:
- Ոռոգման ցանցերի բարեկարգում, կաթիլային համակարգերի ներդրում:
- Հակակարկտակայանների տեղադրում (նախընտրելի է ցանցային տարբերակը):

- Տանիքների վերանորոգում:
- Օդանավակայանի վերագործարկում:
- Ջերմուկի զբոսայգու վերականգնում (12 հա տարածքով), խաղահրապարակների կառուցում:

Այստեղ համայնքի բնակիչներն ու այցելուները կարող են անցկացնել իրենց ազատ ժամանակը: Զբոսայգու վերականգնումը կապահովի զբոսաշրջիկների համար լրացուցիչ զբաղվածություն և ժամանց, ինչը կնպաստի Ջերմուկում ավելի շատ օրեր անցկացնելուն:


- Համայնքային և միջահամայնքային տրանսպորտի կայացման աջակցություն:
- Կաթնամթերքի և մրգերի վերամշակման փոքր արտադրամասերի հիմնման աջակցություն:

Համայնքում չկան կաթնամթերքի և մրգերի վերամշակման գործող արտադրամասեր, որոնք կմթերեին համայնքում արտադրվող կաթը և վերամշակման ենթակա մրգերը և իրենց հերթին կնպաստեին գյուղատնտեսության ընդլայնմանը: Անհրաժեշտ է ֆինանսական և տեխնոլոգիական աջակցության տրամադրում՝ վերամշակման արտադրամասեր հիմնելու ցանկություն ունեցողների համար:

- Հյուրատների ստեղծման և տարածման աջակցություն:

Տուրիստների հոսքն առաջացնում է հյուրատների պահանջարկ: Առողջարանների ծառայություններից օգտվողներն ու մնացած զբոսաշրջիկները կարող են գիշերել գյուղական բնակավայրերի հյուրատներում, որոնք ավելի էժան են և հետաքրքրաշարժ: Սակայն նվազագույն պայմաններով հագեցած հյուրատներ գրեթե չկան:

- Բնակարանաշինություն՝ երիտասարդ ընտանիքների համար:



Առ աջ ն այ ի ն ն ախաձեռն ու թ յ ու ն ն եր

Մասնակցային վարժության միջոցով առանձնացվեցին առաջնային նախաձեռնությունները, որոնք, ըստ համայնքի բնակիչների, ունեն առաջնային կարևորություն և ամենաէական ազդեցությունը կարող են ունենալ տնտեսության զարգացման վրա՝

- Մեքենատրակտորային կայանի հիմում, որն իր մեջ ներառում է գյուղատնտեսական նշանակության և համայնքի ճանապարհներն ու թաղամասերը սպասարկող տեխնիկա:
- Հիմնական մայրուղուց դեպի Կարմրաշեն և Հեր Հեր տանող ճանապարհի վերանորոգում:

Մեքենատրակտորային կայանի հիմնում

1. Գյուղատնտեսական նշանակության տեխնիկայի ձեռքբերում

Գնդևազ և Հերհեր գյուղական բնակավայրերում տնտեսությունների մեծ մասը ներգրավված են այգեգործության մեջ: Աճեցնում են հիմնականում խնձոր և ծիրան: Այգիները կազմում են 200 հա: Առաջիկա տարիներին այգիները կընդլայնվեն ևս 110 հեկտարով:

Պայմանավորված ծիրանի հասունացման սեզոնով՝ բերքը վաճառվում է բարձր գնով՝ 700-1000 դրամ մեկ կիլոգրամը: 1 հա-ի միջին բերքատվությունը կազմում է 20 տոննա:

Գյուղերը չունեն համապատասխան տեխնիկա այգիների՝ ժամանակին և պատշաճ մշակման համար, որի պատճառով էլ նոր այգիների հիմնումը հետաձգվում է:

Մեքենատրակտորային կայանը պետք է ներառի 4-5 փոքր տրակտոր (40 ձիաուժ՝ 8-10 մլն. դրամ 1 հատը), նույն քանակի սրակիչներ (2-5 մլն. դրամ 1 հատը), ձեռքի խոտհնձիչներ՝ ծառերի շարքերում խոտերը հնձելու (ինչպես նաև՝ խոտհարքերի) համար՝ 5 հատ (1-1.5 մլն. դրամ մեկ հատը), խոտհավաքիչ՝ 4-5 հատ (1.5-2 մլն. դրամ) և կայանատեղի կառուցում (30-40 մլն. դրամ), մեկ հատ տրակտոր՝ 80-90 ձիաուժ (8-10 մլն. դրամ) և խոտի հավաքիչ մամլիչ-1 հատ (5-6 մլն. դրամ) :

Ամբողջ գյուղտեխնիկայի արժեքը կկազմի մոտավորապես 150 մլն. դրամ:

Ծրագրի ազդեցության գնահատական

Ծրագրի իրականացման շահառու են հանդիսանում համայնքի մոտ 350 տնտեսություն, որոնք ներգրավված են այգեգործության մեջ: Բավարար գյուղտեխնիկայի առկայության դեպքում 2-5 տարվա ընթացքում կհիմնվեն ևս 110 հա նոր այգիներ: Ընդհանուր առմամբ, ժամանակին կկազմակերպվի այգիների որակյալ մշակումը՝ ինչն անմիջականորեն նպաստում է բերքատվության աճի և մրգի որակի վրա:

2. Զմռանը ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհները սպասարկող տեխնիկայի ձեռքբերում

Լինելով ձմեռային մարզաձևերի և առողջարանային գոտի՝ Ջերմուկ համայնքը ձմռանը ևս հյուրընկալում է բազմաթիվ տեղացի և արտասահմանյան տուրիստների: Հյուրընկալման գործընթացն արդյունավետ իրականացնելու համար կարևոր պայման է ձմռանը ճանապարհները ժամանակին մաքրելը՝ ձյունից և զրոսաշրջիկների ելումուտն անխափան կազմակերպելը, ինչը, սակայն, տեղի չի ունենում անհրաժեշտ տեխնիկայի բացակայության պատճառով:

Թերի է կազմակերպվում նաև աղբահանությունը, ինչը տուրիստական գոտու համար առաջնային հիմնախնդիր է: Համայնքում եղած փոքրաթիվ և մաշված տեխնիկայով փորձում են միաժամանակ իրականացնել և՛ աղբահանությունը, և՛ ձյունամաքման աշխատանքները, ինչը խոչընդոտում է համայնքում տուրիզմի կայացմանն ու զարգացմանը:

Ջերմուկ համայնքի ձյան շերտի և սանամքրման տարածքը ունի հետևյալ պատկերը.

- Ջերմուկ քաղաք-37 կմ, 222000մ2,
- Գնդեվազ գյուղ-11կմ, 66000մ2,
- Հերիեր գյուղ- 9.5 կմ, 57000մ2,
- Կարմրաշեն գյուղ-6.5կմ 57 000մ2,

Միջհամայնքային ճանապարհներ՝ Երևան-Գորիս մայրուղուց մինչև Կարմրաշեն՝ 23կմ:

Նշված խնդիրներն հաղթահարելու և ճանապարհների կանոնավոր սպասարկումն իրականացնելու համար հարկավոր է զինել համայնքը հետևյալ տեխնիկաներով՝

- Էքսկավատոր «CAT 428F»-1 հատ,
- գրեյդեր «D3-98»-1 հատ,
- ռոտորային ձյունամաքիչ-1 հատ,
- վակուումային ավլոդ մեքենա-1 հատ,
- աղբատար՝ կողային բարձումով «ГАЗ КО 440-3»-2 հատ,
- աղբատար՝ կողային բարձումով «KAMAZ КО 440-3»-1 հատ,
- փոքր ինքնաթափ «Fiori D100 sl» -1 հատ,
- աղբամաններ-120 հատ:

Ծրագրի արժեքը

Նշված տեխնիկաները ձեռք բերելու համար կպահանջվի մոտ 250 մլն. դրամ, իսկ ընդհանուր կայանի համար (ներառյալ այգեգործական տեխնիկան)՝ մոտ 400 մլն դրամ:

Գլխավոր մայրուղուց դեպի Կարմրաշեն և Հերիեր տանող ճանապարհի վերանորոգում


Մայրուղուց դեպի Հերիեր և Կարմրաշեն տանող գլխավոր ճանապարհն (20կմ) ամբողջությամբ անմխիթար վիճակում է: Ըննապարհի ասֆալտե ծածկույթը քայքայված է: Ըննապարհի մի մեծ հատված անցնում է Հերիերի ջրամբարի առափնյա հատվածով, որտեղով երթևեկելն առավել վտանգավոր է: Նշված ճանապարհով է ապահովվում կապը նաև Ջերմուկ քաղաքի հետ: Քանդված ճանապարհի պատճառով նույնիսկ տաքսիներն են հրաժարվում դեպի գյուղ մուտք ու ելքից: Դժվարանում է գյուղմթերքների վաճառքի կազմակերպումը և տնտեսական մնացած գործունեությունը: Տուժում է նաև տուրիզմի ոլորտը: Ջերմուկ այցելող զբոսաշրջիկները ևս չեն կարողանում այցելել Հերիերի պատմամշակութային և տեսարժան վայրեր: Այս ճանապարհը վերջին անգամ վերանորոգվել է 1980-ականների սկզբին:

Ծրագրի արժեքը

Նախնական հաշվարկներով ճանապարհի կապիտալ վերանորոգման համար կպահանջվի 1.5- 2 մլրդ. դրամ:

ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ



Աղյուսակ 21. Վայոց Ձորի մարզի համառոտ տվյալներ²⁵

Տարածքը	2 308 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.8 %
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	41
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	51.4 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	1.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	35.2 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	190 337.6 հա

²⁵ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015»

Զառիթափի համայնքը

Զառիթափի համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործընթացը սկսվեց 04. 08. 2016 –ին:

Զառիթափի համայնքը գտնվում է Վայոց Ձորի մարզում և իր մեջ ներառում է հետևյալ 9 բնակավայրը՝ Զառիթափ, Մարավան, Արտավան, Նոր Ազնաբերդ, Խնձորուտ, Բարձրունի, Սերս, Մարտիրոս և Գոմք:

Տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն է, որով զբաղված է տնային տնտեսությունների մոտ 90%-ը: Համեմատաբար զարգացած է արհեստագործական և այլ մասնագիտական ծառայությունների մատուցումը (շինարարներ, եռակցողներ, դարբիններ, ատաղձագործներ և այլն): Վերջին տարիներին զարգանում են նաև հյուրատնային ծառայությունները:

Զառիթափի տնտեսության մրցակցային առավելությունները

<ul style="list-style-type: none"> • Գեղատեսիլ բնություն, անտառներ • Պատմական հուշարձաններ • Կարմիր գրքում գրանցված կենդանիներ • Մարտիրոս, Սերս, Զառիթափի վերանորոգված ճանապարհներ <ul style="list-style-type: none"> • Խմելու մաքուր ջրի առկայություն: 	<p>Համայնքում առկա են էկո և ագրո տուրիզմի զարգացման համար անհրաժեշտ այնպիսի պայմաններ, ինչպիսիք են բազմաթիվ պատմամշակութային հուշարձանները, գեղատեսիլ բնությունը, յուրահատուկ ու բազմազան կենդանիները: Մայրուղուց դեպի Մարտիրոս, Զառիթափ և Սերս ճանապարհները հիմնովին վերանորոգված են:</p>
<ul style="list-style-type: none"> • Ոռոգման ջրերի առկայություն 	<p>Համայնքում առկա է ոռոգման ջրի մեծ պաշար, ինչը բավարար է առկա տարածքների ոռոգման համար:</p>

- Այգեգործության համար բնակլիմայական նպաստավոր պայմաններ.

Տարածքային առանձնահատկությունները, արևոտ օրերի քանակը յուրահատուկ համ են հաղորդում աճեցվող մրգերին, պտուղներին:

- Մեծաքանակ հողային ռեսուրսներ.
- Բերրի հողեր.

Մեծաքանակ բերրի հողերի առկայությունը նպաստում է ինչպես դաշտավարության, այնպես էլ անասնապահության զարգացմանը:

- Բարձրագույն կրթություն ունեցող մարդկանց տեսակարար բարձր կշիռ.
- Երիտասարդ աշխատուժ.
- Ճանաչված մասնագետներ, արհեստագործներ.

Բարձրագույն կրթվածություն ունեցող մարդկանց բարձր տեսակարար կշիռը նպաստում է համայնքներում ինֆորմացիայի, նորությունների, ներդրումների ներհոսքին:

Համայնքում առկա են բավականին ճանաչված մասնագետներ, արհեստագործներ, որոնք ծառայություն են մատուցում ինչպես մարզում, այնպես էլ մարզի սահմաններից դուրս:

Զառիթափի տնտեսության նկարագիրը

Ըստ առաջատար ոլորտների բնակավայրի տնտեսության պատկերը ստանալու համար՝ օգտագործվեց «COMPASS» մասնակցային ախտորոշման և գնահատման գործիքը:



Գյ ու ղատն տնտեսություն

Համայնքի տնտեսության հիմքում գյուղատնտեսությունն է: Մարդիկ հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, այգեգործությամբ, դաշտավարությամբ և մեղվապահությամբ: Գյուղատնտեսության զարգացման հիմքում ընկած են համայնքի հետևյալ մրցակցային առավելությունները.

- **Ոռոգման ջրերի առկայություն**

Համայնքի բոլոր բնակավայրերին հասանելի է ոռոգման ջուրը, ինչն ուղղակիորեն նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը: Չնայած ոռոգման ջրերի առկայությանը՝ գրեթե բոլոր բնակավայրերում ոռոգման ցանցերի վերանորոգման, կառուցման և արդիականացման խնդիր կա:

- **Այգեգործության համար բնակլիմայական նպաստավոր պայմաններ**

Համայնքի աշխարհագրական դիրքը յուրահատուկ համ և քաղցրություն է հաղորդում այստեղ աճեցվող պտուղներին, ինչի շնորհիվ դրանք իրենց առանձնակի գինն ու տեղն ունեն հայաստանյան բոլոր շուկաներում: Բացի համից և ճանաչվածությունից, համայնքում բերքը համեմատաբար ուշ է հասունանում՝ այլ այգեգործական համայնքների հետ համեմատած, ինչի արդյունքում շուկայում վաճառքի գինը համեմատաբար բարձր է (հատկապես՝ ծիրանի դեպքում): Այգեգործության հետագա զարգացումը տեղի բնակիչները կապում են մրգերի վերամշակման փոքր արտադրությունների ստեղծման հետ, ինչը թույլ կտա բերքի մի մասը վերամշակել՝ ստանալով չրեր, հյութեր, մուրաբաներ և այլն, ինչը էականորեն կբարձրացնի արտադրանքի շահութաբերությունը և համայնքի ներսում ստեղծվող եկամուտը:

- **Մեծաքանակ հողային ռեսուրսներ և բերրի հողեր:**

Համայնքին հասանելի են մեծաքանակ բերրի հողեր, ինչը թույլ է տալիս դաշտավարության մեջ հասնելու բարձր բերքատվության, որն էլ էականորեն բարձրացնում է ցանվող կուլտուրայի շահութաբերությունը: Հողային ռեսուրսների առկայությունը մրցունակ է դարձնում նաև անասնապահությունը: Արոտավայրերը, խոտհարքները, բազմամյա խոտաբույսերի աճեցումը լուծում են կերային ապահովվածության հարցը: Չնայած կերի առկայությանը՝ անասունները հիմնականում չեն լիակթվում: Գերակշռում է կովկասյան գորշ տեսակը, որի կաթնատվությունը մոտ 1300 – 1600 լիտր / տարի է:

- **Բազմազան բույսեր և դեղաբույսեր:**

1000–ից ավելի բույսերի և դեղաբույսերի առկայությունը Ալպիական գոտիներում նպաստում է մեղվաբուծություն զարգացմանը: Համայնքում առկա է 3903 հատ մեղվաընտանիք (յուրաքանչյուր բնակչին բաժին է ընկնում գրեթե մեկ մեղվաընտանիք):

Աղյուսակ 22. Համայնքի գյուղատնտեսության հիմնական ցուցանիշները. (աղբյուր՝ համայնքային հանդիպումների արդյունքում ստացված տվյալներ):

Վարելահողեր	3814 հա
Բազմամյա տնկարկներ	74 հա
Խոտհարքներ	976 հա
Արոտավայր	23 993 հա
Խոշոր եղջերավորներ / կովեր	3925 / 1634 գլուխ
Ոչխարներ և այծեր	3087 գլուխ
Խոզեր	280
Մեղվաընտանիքներ	3903


Ար հ ե ս տ ա գ ո թ ծ ա կ ան և ս յ լ մ ս ս ն ա գ ի տ ս կ ան ծ առ ս յ ու թ յ ու ն ն ե թ

Համայնքում առկա են բազմաթիվ ճանաչված շինարարներ, եռակցողներ, դարբիններ և այլ մասնագետներ, ովքեր ծառայություն են մատուցում ամբողջ մարզի տարածքում: Այս մասնագիտությունները հիմնականում ժառանգաբար անցնում են սերնդից սերունդ, ինչի արդյունքում առկա են երիտասարդ մասնագետներ, ովքեր իրենց կատարած աշխատանքով մրցունակ են ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս:

Հ յ ու թ ա տ ն ե թ

Գեղատեսիլ բնությունը, բազմաթիվ պատմամշակութային տեսարժան վայրերը նպաստում են զբոսաշրջիկների այցելությանը: Յավոք, այս պահին տուրիզմի զարգացման ռազմավարություն և ընդհանուր տեսլական համայնքի բնակիչները չունեն, ինչի արդյունքում տուրիզմի սպասարկող ոլորտը իրենից ներկայացնում է մի քանի հյուրատուն, հասարակական սննդի օբյեկտ և խանութներ:

Զ ա թ գ ա գ մ ան և ա խ ա ձ ե ո ն ու թ յ ու ն ն ե թ



Համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործիքների կիրառման արդյունքում բացահայտվեցին համայնքի տնտեսության զարգացման հետևյալ նախաձեռնությունները՝

- ոռոգման ցանցերի վերանորոգման և բարելավման աջակցություն,
- մեքենա-տրակտորային պարկի ստեղծման աջակցություն,
- հանդամիջյան և ներհամայնքային ճանապարհների բարեկարգման տեխնիկայի ձեռքբերման աջակցություն,
- Մարտիրոս – Խնձորուտ և Մերս – Բարձրունի ճանապարհների վերանորոգում՝ համապատասխանաբար 12 կմ և 5 կմ,
- պտղի, մսի և կաթի վերամշակման փոքր արտադրությունների հիմնման աջակցություն,
- կաթի մթերման կայանի ստեղծման աջակցություն,
- նոր սորտերի, սերմերի, կենդանիների, տեխնոլոգիաների ներդրման աջակցություն,
- աղբահանության կազմակերպում:

Առաջնային նախաձեռնություններ

Մասնակցային վարժության միջոցով առանձնացվեցին առաջնային նախաձեռնությունները, որոնք, ըստ համայնքի բնակիչների, ամենաեական ազդեցությունը կարող են ունենալ տնտեսական զարգացման վրա:

Մեքենատրակտորային կայանի հիմնում

Զառիթափ համայնքի 9 բնակավայրերը միասին ունեն մոտ 4000 հա վարելահող: Ներկայումս մշակում են մոտ 2000 հա տարածքը: Վարելահողերի մեծ մասը բաժին է ընկնում հացահատիկային մշակաբույսերին՝ 1000 հա: 700 հա-ի վրա մշակվում են բազմամյա խոտաբույսեր (առվույտ, կորնզան և այլն): Մոտ 240 հա տարածք զբաղեցնում են այգիները: Մոտ 700 տնտեսություններ ներգրավված են հողագործության մեջ:

Հացահատիկի այսքան տարածքների մշակումն իրականացվում է մաշված գյուղտեխնիկայի միջոցով, ինչը բերում է բերքի մեծ քանակի կորստի, աշխատանքների կազմակերպումը միշտ չէ, որ ժամանակին է տեղի ունենում, ինչպես նաև չեն ավելանում մշակվող տարածքները: Գյուղատնտեսական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար պահանջվում է հետևյալ տեխնիկաների կազմը.

- 2 հատ կոմբայն – 70-100 մլն. դրամ,
- 2 հատ անիվավոր տրակտոր- 20 մլն. դրամ,
- 2 հատ գութան – 2 մլն. դրամ,
- 2 հատ փխրեցուցիչ – 1.5 մլն. դրամ,
- 2 հատ խոտի հավաքիչ մամլիչ – 11 մլն. դրամ,
- 2 հատ խոտհնձիչ – 2.5 մլն. դրամ:

Ընդամենը՝ 130 մլն. դրամ:

Ռոռզման ցանցերի կառուցում և վերանորոգում

Զառիթափի բոլոր 9 համայնքների համար գյուղատնտեսությունը հանդիսանում է տնտեսության առանցքային ճյուղ, որտեղ ներգրավված է տնային տնտեսությունների 90 % - ը: Անասնապահության մեջ գերակշռում է խոշոր եղջերավորների անասնապահությունը, հողագործության մեջ՝ դաշտավարությունն ու այգեգործությունը:

Համայնքի բնակչությունը թե՛ անասնապահության, և թե՛ հողագործության զարգացումը ուղղակիորեն կապում է ռոռզման ջրի առկայության հետ, ինչը թույլ կտա՝

- վարելահողերում աճեցնել բազմամյա խոտաբույսեր, որոնք կօգտագործվեն որպես լրացուցիչ կեր անասնապահության մեջ: Ցանովի խոտհարքի բարձր բերքատվության և կերամիավորի բարձր մակարդակի շնորհիվ հնարավոր կլինի բարձրացնելու կաթնատվության մակարդակը:

Աղյուսակ 23. Ցանովի և բնական խոտհարքերի բերքատվություն ու կերամիավորի պարունակությունը (աղբյուր՝ մասնագիտական խորհրդատվություն):

Կերի տեսակը	Բերքատվությունը (g/հա)	Ընդամենը կերամիավոր (g)	Կերի ծախսը 1 g կաթի հաշվարկով (g/կ.մ.)	Կաթ (g)	Միս (կգ)
Առվույտի խոտ	75	39	1.1	35.45	410
Կորնգանի խոտ	65	35	1.1	31.8	368
Վարսակի խոտ	40	19.2	1.1	17.45	202
Բնական խոտ	18	8.1	1.1	8	100

- Ավելացնել ցանվող մշակաբույսերի բերքատվությունը (ցորենի և գարու դեպքում բերքատվության ցուցանիշը կարող է աճել մոտ 3 անգամ՝ 15 ցենտներից հասնելով 45 –ի, ինչն ուղղակիորեն ազդելու է շահութաբերության վրա):
- Մշակել առավել մեծ շահութաբերություն ունեցող մշակաբույսեր՝ բանջարեղեն, և զարգացնել այգեգործությունը: Ոռոգման ջրի հասանելիությունն ապահովվելու համար պետք է բնակավայրերում իրականացնել հետևյալ ծրագրերը.

Մե ր ս ք ն ակ սվ սյ ր

Բնակավայրը ունի մայր առուների խնդիր: Բնակավայր մտնող մայր առուները գտնվում են անմխիթար վիճակում, մոտավոր՝ 2,5 կմ, անհրաժեշտ է տեղադրել կիսախողովակ կամ խողովակ:

Նշված ոռոգման ցանցից օգտվում են 44 գյուղացիական տնտեսություն, ոռոգման ցանցի տակ գտնվում են 35 հա տնամերձ հողատարածք, որտեղ կան նաև նորաստեղծ այգիներ:

Գ ո մ ք ք ն ակ սվ սյ ր

Գոմքում անհրաժեշտ է իրականացնել երկու նախաձեռնություն.

- Ոռոգման մայր գիծ՝ 6.5 կմ. Ախտա գետի 2010 մ բարձրությունից ինքնահոս ջուրը պետք է բերվի բնակավայր (1940 մ):
- Ոռոգման ներքին ցանցի վերանորոգում (մոտ 3 կմ):

Այս երկու նախաձեռնությունները թույլ կտան ոռոգելու 108 հա վարելահող, 40 հա խոտհարք և կստեղծվի 30 հա նոր այգի: Ծրագրի իրականացումից կօգտվեն 105 տնտեսություններից 78 տնտեսությունը:

Նոր Ազնաբեքի քանակավայր

1. Անհրաժեշտ է կառուցել մայր գիծ, որն ունի 500մ երկարություն: Այս ջրագծի կառուցումից կօգտվի 16 տնտեսություն և կոռոզվի 35 հա տարածք: Նախատեսվում է աճեցնել բանջարաբոստանային կուլտուրաներ և հիմնել պտղատու այգիներ:

2. Բնակավայրում առկա է ներքին ցանցի վերանորոգման խնդիր, որի երկարությունը կազմում է 500 մ, դրա շնորհիվ կոռոզվի 14 հա տարածք: Կօգտվի 20 տնտեսություն: Նախատեսվում է հիմնել պտղատու այգիներ:

Զառիթափի քանակավայր

Անհրաժեշտ է կառուցել ոռոգման ներքին ցանց: Ոռոգման ներքին ցանցի ընդհանուր երկարությունը մոտավոր 6.5 կմ է:

Ծրագրից կօգտվի 90 տնտեսություն՝ 75-80 հա հող:

Այդ հողերում հիմնականում աճեցվում է հացահատիկ, առվույտ, կորնզան: Ոռոգելի դառնալուց հետո հնարավոր կլինի նոր պտղատու այգիներ հիմնել:

Մարտիրոսի քանակավայր

Մարտիրոսում անհրաժեշտ է մասնակի վերանորոգել մայր գիծը (880 մ) և կառուցել ոռոգման ներքին ցանց (3000 մետր): Ծրագրից կօգտվի 130 տնտեսություն (150 հա), ովքեր կաճեցնեն բանջարաբոստանային կուլտուրաներ, կհիմնեն մրգատու այգիներ:


Խնձորուտի քանակավայր

Խնձորուտում անհրաժեշտ է կառուցել ոռոգման ջրի արտաքին ցանց՝ 5կմ երկարությամբ 150մ տրամագծով, որով ոռոգելի կդառնա մոտ 80 հա հողատարածք, և 3կմ երկարությամբ 200մ տրամագծով, որով ոռոգելի կդառնա 60 հա հողատարածք: Անհրաժեշտ է նաև վերանորոգել ներքին ցանցի բաշխիչ – բաժանարար հատվածները:

Ընդհանուր առմամբ, ծրագրից կօգտվեն մոտ 187 տնտեսություն, որոնք նշված հողերում աճեցնում են առվույտ, կորնզան և հացահատիկային կուլտուրաներ: Ոռոգումից հետո 2-3 անգամ կբարձրանա նշված կուլտուրաների բերքատվությունը, կհիմնվեն մրգատու այգիներ:

ՈՒՐՑԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ



Աղյուսակ 24. Արարատի մարզի համառոտ տվյալներ²⁶

Տարածքը	2 090 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7 %
Քաղաքային համայնքներ	4
Գյուղական համայնքներ	93
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	260. 1 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	8. 6 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	28.4 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	156 916.2 հա

²⁶ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015»

Ուրցաձոր համայնքը

Ուրցաձոր համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործընթացը սկսվեց 16. 08. 2016 –ին:

Ուրցաձոր համայնքը գտնվում է Արարատի մարզում, Վեդի գետի հովտում, Ուրծի լեռների լանջերին: Համայնքի կազմի մեջ են մտնում Ուրցաձոր, Շաղափ և Լանջանիստ բնակավայրերը: Բնակչության թիվը՝ 4200: Մարդիկ հիմնականում զբաղված են անասնապահության, հողագործության, թռչնաբուծության, վայրի բույսերի հավաքչարարության և այգեգործության ճյուղերում: Համայնքում գործում է նաև Էկո-կրթական կենտրոն, որը կառուցվել է Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից: Քայլեր են արվում տուրիզմի կայացման և զարգացման ուղղությամբ:

Ուրցաձորի մրցակցային առավել ությունները

Համայնքի տնտեսության մրցակցային առավելությունները վեր հանվեցին՝ օգտագործելով «LED cafe» մեթոդոլոգիան:

- ինքնահոս ոռոգման ջրերի առատություն Ուրցաձոր բնակավայրում,
- նպաստավոր պայմաններ ծխախոտի և բանջարեղենային մշակաբույսերի աճեցման համար,
- բավարար քանակությամբ արոտավայրեր,
- բազմազան դեղաբույսերի և այլ օգտակար խոտաբույսերի առկայություն,
- Էկոլոգիապես մաքուր միջավայր՝ գյուղատնտեսության զարգացման համար,
- բարձրակարգ և փորձառու մասնագետների առկայություն գյուղատնտեսության ոլորտում,
- տուրիզմի զարգացման Էկո-կրթական կենտրոն:

Ուրցաձորի տնտեսության նկարագիրը



Ըստ առաջատար ոլորտների բնակավայրի տնտեսության պատկերը ստանալու, ինչպես նաև տնտեսական զարգացման նախաձեռնությունները վեր հանելու համար՝ օգտագործվեց Մ. Պորտերի «Ադամանդ» մասնակցային ախտորոշման և գնահատման գործիքը:



Ուրցածոր համայնքի հիմնական ճյուղերն են՝

- անասնապահություն,
- հողագործություն,
- այգեգործություն,
- հավաքչարարություն:

Անասնապահություն

Համայնքի առաջատար ճյուղերից է անասնապահությունը: Խոշոր անասնապահական տնտեսությունները 15-ն են՝ 25-30 գլխաքանակով: Խոշոր եղջերավորների միջին տարեկան կաթնատվությունը մոտ 1500լ է:

Արոտավայրերի և խոտհարքների տարածությունները բավարարում են անասնապահության զարգացման, ինպես նաև ընդլայնման համար: Սակայն գյուղտեխնիկական սակավաթիվ է և մաշված, ինչը դժվարացնում է անասնակերի հավաքման և կուտակման աշխատանքները: Բարեկարգ չեն նաև հանդամիջյան ճանապարհները:

Արոտավայրերում անասունների համար խմելու ջուրը խնդիր է: Մի քանի կիլոմետր տեղաշարժվում են, որպեսզի ջուր խմեն և վերադառնան արոտ, ինչի հետևանքով էլ կաթնատվությունը նվազում է: Ջրի պաշարներ առկա են արոտավայրերում, սակայն չկա համակարգ, որը թույլ կտա կուտակելու ընդերքից բխող ջուրը և տարածելու անասունների համար նախատեսված խմոցների մեջ. վերջիններս նույնպես բացակայում են: Այսպիսով՝ ջուրը կորում է դաշտերում և չի օգտագործվում անասնապահության արդյունավետությունն ապահովելու համար: Սեզոնին մոտ 2000-2200 գլուխ անասուն է արածում նշված հատվածում, իսկ մնացած 1000 գլուխը տեղափոխվում են հեռագնա արոտավայրեր:

Կաթի մի մասը հանձնում են Վեդու կաթնամթերքի գործարանին, իսկ մյուս մասը, որն արտադրվում է հեռագնա արոտավայրերում, օգտագործվում է տնային պայմաններում պանրի արտադրության մեջ:

Հողագործություն

Հողագործության հիմնական ուղղություններն են բանջարաբուստանային մշակաբույսերն ու թութունի աճեցումը:

Ուրցածորում հիմնականում աճեցվում են բանջարաբուստանային կուլտուրաներ: Տարածված է հատկապես տաքդեղի աճեցումը, որը բավականին հայտնի է և ունի

համեմատաբար կայուն շուկա: Բերքը վաճառվում է ներքին շուկայում կամ ապրանքափոխանակում Գեղարքունիքի մարզի գյուղերում՝ կարտոֆիլի կամ կաղամբի հետ: Լավագույն արդյունքը մեկ հեկտարից 45 տոննա է, նվազագույնը՝ 35տ՝ կախված մշակման մասնագիտացման աստիճանից: Հիմնականում մշակվում է բուլղարական «խրուստալ» քաղցրահամ տեսակը: Շնորհիվ ոռոգման ջրի առկայության և բնակլիմայական պայմանների՝ բերքատվությունը հանրապետության ամենաբարձր ցուցանիշներից է:

Համայնքում՝ հատկապես տաքդեղի աճեցմամբ զբաղվողների շրջանում, մեծ տարածում ունի տնային պայմաններում կարմիր աղացած պղպեղի արտադրությունը: Բերքի մեծ մասը՝ մինչև 80%, սպառվում է թարմ վիճակում, տեղական շուկաներում՝ վերավաճառողների միջոցով: Մեկ կիլոգրամը 150-250 դրամ է՝ կախված տաքդեղի մեծությունից և որակից: Մնացած մասը չորացվում և աղալուց հետո վաճառվում է կարմիր պղպեղի փոշու տեսքով: Մեկ կիլոգրամը վաճառվում է 2000-3000 դրամով՝ կրկին կախված որակից: 1հա տաքդեղի մշակումից ստացվում է միջինը 5մլն. դրամ շահույթ: Թարմ և որակյալ պտղի վաճառքն ավելի եկամտաբեր է, քան աղացած փոշին: Իսկ ապրանքային տեսք չունեցող, վնասված և փոքր պտուղների դեպքում վաճառքի գինը շատ էժան է, նույնիսկ պահանջարկ էլ չկա: Դրա համար էլ չորացնելն ու աղալը լրացուցիչ արժեք է ավելացնում և ապահովում բարձր եկամուտ (1կգ աղացած տաքդեղից (12կգ թարմ) ստացվում է 1000-1500 դրամ շահույթ):

Համայնքում ծխախոտի ցանքերը կազմում են մոտ 30 հա, որով զբաղվում են մոտ 30 տնտեսություն: Ուրցածորում է գտնվում «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ընկերության ծխախոտի ընդունման և չորացման կետը, որը մթերում է աճեցվող ծխախոտն ամբողջությամբ: 1 հա-ից ստացվում է միջինը 25 տ. ծխախոտ (երբեմն մինչև 30տ): 1կգ կանաչ ծխախոտն ընդունում են 40-90 դրամով՝ կախված որակից:

Այս համայնքում այգեգործության մեջ, կախված պտղի տեսակից, մեկ հա այգին տնտեսություններին ապահովում է 2-4 մլն դրամ շահույթ, ծխախոտի մշակումը՝ միջինը 1մլն դրամ: Բանջարեղենատանային մշակաբույսերի 1 հա-ից (հատկապես տաքդեղի) ստացվում է 4-6 մլն. դրամ շահույթ: Վերջին 2 տարիների ընթացքում զգալիորեն նվազել են տաքդեղի մշակման ցանքերը՝ պայմանավորված հաստատուն շուկայի բացակայությամբ: Մարդիկ անցում են կատարում այգիների հիմնման՝ գիտակցելով, որ տաքդեղի մշակումն ավելի եկամտաբեր է քան մրգերինը: Այնուամենայնիվ, բանջարաբուստանային մշակաբույսերի աճեցումը համարվում է համայնքի տնտեսական զարգացման առանցքային ճյուղերից մեկը: Բացի բարձր շահութաբերությունից, ի տարբերություն այգիների, բանջարաբուստանային մշակաբույսերի մշակումը սկսվում է ցրտահարություններից հետո, և վնասվելու ռիսկերն ավելի քիչ են: Մշտական շուկաներ ձևավորելու դեպքում նորից կընդլայնվեն տաքդեղի ցանքատարածքները:

Վայրի բույսերի հավաքչարարություն

Համայնքում, բացի վերոնշյալ ճյուղերից, բնակչության մի մասը զբաղվում է նաև վայրի բույսերի և հատապտուղների հավաքմամբ և վաճառքով, քանի որ շրջակա բլուրները և լեռները հարուստ են դրանցով: Որոշակի բուսատեսակներ և հատապտուղներ վաճառվում են որոշակի վերամշակման փուլ անցնելուց հետո (օրինակ՝ ուտելի բանջարների չորացում, բոխու թթվեցում և այլն): Այս գործունեությամբ զբաղվում են մոտ 30 հոգի, հիմնականում՝ կանայք: Հավաքն սկսում են դեռ մարտի վերջերից՝ Ղարաբաղի հովիտներից, մինչև տարածքում կհասնի բուսականությունը: Մայիսից տեղափոխվում են իրենց տարածքներ: Դաշտերն հարուստ են նաև ուրցի և այլ բույսերի մեծ քանակությամբ: Հավաքված խոտաբույսերն հանձնում են վերամշակող և փաթեթավորող արտադրամասերին:

Թռչնարածություն

Համայնքում քիչ չէ նաև թռչնաբուծությամբ զբաղվողներ թիվը: Բուծում են, մասնավորապես, հնդկահավեր: Այստեղ աճեցվող ընտանի թռչունները սնվում են բացառապես բնական սննդով, հիմնականում՝ մորեխներով (արածում են դաշտերում), ինչի շնորհիվ ունեն բարձր որակական հատկանիշներ և էկոլոգիապես մաքուր են: Պահանջարկն աստիճանաբար մեծանում է: Վաճառում են անհատներին, ռեստորաններին և հանրային սննդի կետերին:

Մեղվաբուծություն

Համայնքում տնտեսությունների մեծ մասը զուգահեռաբար զբաղվում է նաև մեղվապահությամբ: Բնակավայրերը միասին ունեն մոտ 15000 մեղվի փեթակ: Տարեկան ստացվում է նվազագույնը 150 տ մեղր: Այստեղ արտադրվող մեղրն աչքի է ընկնում որակական հատկանիշներով՝ շնորհիվ դաշտերում բույսերի բազմազանության:

Այգեգործություն

Համեմատաբար փոքր ծավալներ են կազմում պտղատու այգիները՝ 20հա, որից ինձորի տեսակները՝ գոլդեն՝ 70%, սիմերենկո՝ 20%, դեմիրճյան՝ 10%, դեղձ, ծիրան:

Համայնքում տարեկան ստանում են մոտ 300տ խնձոր, որը սպառվում է մարզերի շուկաներում: Իսկ դեղձի և ծիրանի այգիներն աստիճանաբար ընդլայնվում են: Այգիները բերքատվությամբ և պտղի համային հատկանիշներով չեն զիջում Արարատյան դաշտավայրի այլ այգեգործական գոտիներին:

Ջար գ աց մ ան ն ախաձ է ո ն ու թ յ ու ն ն ե ր

Համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործիքների կիրառման արդյունքում բացահայտվեցին համայնքի տնտեսության զարգացման հետևյալ նախաձեռնությունները՝

- մեղվաբուծության ռեսուրսային կենտրոնի հիմնում,
- կաթի և մսի վերամշակման աջակցություն,
- սպանդանոցի հիմնում,
- Շաղափ բնակավայրի ապահովում ոռոգման ջրով,
- մեքենատրակտորային պարկի հիմնում,
- պտուղների վերամշակման և պահպանման աջակցություն:

Մասնակցային գնահատման մեթոդով դուրս բերված առաջնային երկու նախաձեռնություններն են՝

- պտուղների վերամշակման և պահպանման (սառնարանային տնտեսությունների հիմնման) աջակցություն,
- մեքենատրակտորային կայանի հիմնում:

Առ աջ ն սյ ի ն ն ախաձ է ո ն ու թ յ ու ն ն ե ր

Մե ք է ն առ ր ա կ տ ր ս յ ի ն կ ս յ ան ի հ ի մ ն ու մ

Գյուղատնտեսական աշխատանքների (խոտքաղ, հունձ, վար, ցանք և այլն) արդյունավետ կազմակերպման համար Ուրցածոր համայնքը չունի բավարար և ժամանակակից գյուղտեխնիկա: Աշխատանքների բնականոն ընթացքին խոչընդոտում է նաև հանդամիջյան ճանապարհների քանդված վիճակը: Ամեն տարի հարկավոր է ճանապարհների բարեկարգում իրականացնել, որպեսզի բեռնատարներն անխափան կազմակերպեն խոտի, բերքի, անասունների և այլ անհրաժեշտ բեռների տեղափոխումը:

Խնդրի լուծմամբ գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետությունը բարձրացման համար հարկավոր է մեքենատրակտորային կայանի հիմնում՝ հետևյալ տեխնիկական կազմով.

- Ձեռքի խոտհնձիչ 5 հատ/ 7մլն. դրամ,

- էքսկավատոր 1 հատ/ 50մլն դրամ,
- գրեյդեր 1 հատ / 50 մլն դրամ,
- տրակտոր 1 հատ/ 15 մլն. դրամ,
- խոտի հավաքիչ մամլիչ 1 հատ/ 6 մլն. դրամ:

Ընդհանուր արժեքը՝ 128 մլն. դրամ:

Կաթի, բանջարեղենի, պտուղների վերամշակման և պահպանման (սառնարանային տեսակառնային) աջակցություն


Ներկայումս, բացի տնային պայմաններում արտադրվող սահմանափակ քանակությամբ պանրից և աղացած պղպեղից, համայնքում արտադրված բարիքների կազմակերպված վերամշակում չի իրականացվում: Համայնքում առկա տնտեսական ճյուղերից և ոչ մեկում արժեքային շղթաներ չկան:

Գործարարության զարգացման տարատեսակ աջակցությունների (տեխնոլոգիական, ֆինանսական, մարքեթինգային և այլն) տրամադրմամբ հնարավոր է համայնքում սկիզբ դնել կանոնավոր և շարունակական վերամշակման փոքր արտադրությունների կայացմանը, ինչպիսիք են՝

- ⇒ կաթի վերամշակում- պանրի արտադրություն,
- ⇒ էկոլոգիապես մաքուր թռչնամսի մշակում և փաթեթավորում,
- ⇒ աղացած պղպեղի, վայրի բույսերի չորացում և փաթեթավորում,
- ⇒ չրերի և պահածոների արտադրություն,
- ⇒ սառնարանային տնտեսությունների հիմնում:

Նշված նախաձեռնությունների հիմքում ընկած ամբողջ հումքն արտադրվում է համայնքի ներսում և որակական առումով մրցակցում երկրի առաջատար գյուղատնտեսական գոտիների հետ:

Տեղական պանրի արտադրության մեջ կարելի է օգտագործել նաև Ուրցաձորում արտադրվող պղպեղը, հավաքվող ուրցը և այլն: Պանրի տեխնոլոգիական աջակցությամբ կարելի է մշակել Ուրցաձոր ապրանքանիշի 1-2 տեսակ ավանդական և 2-4 տեսակ նոր տեսակի պանիր, որոնք կբավարարեն ամենատարբեր հաճախորդների ճաշակները: Այս ապրանքանիշի պանիրը շուկայահանման ընթացքում կարելի է կապել հարևան մարզում արտադրվող և հանրահայտ Արենի տեսակի գինու հետ: Նույնպիսի յուրահատուկ տարբեր շեշտադրումներով էլ հնարավոր է զարգացնել մնացած ոլորտները:




Այս ծրագրի իրականացման հաջորդական փուլերը՝

- մասնակիցների ընտրություն,
- դասընթացներ՝ բիզնեսի կազմակերպման և կառավարման, ինչպես նաև բիզնես պլանավորման գծով,
- դասընթացներ՝ արտադրական տեխնոլոգիաների գծով,
- մասնակիցների ֆինանսավորում (ցածր տոկոսադրույքով վարկ, փոխաստվություն), տեխնոլոգիական աջակցություն,
- ընդհանուր ռեսուրսային՝ առաջնային սարքավորումներով կենտրոնի ստեղծում՝ փաթեթավորում, նշավորում, ժամկետավորում և այլն,
- միասնական բրենդի ստեղծում և առաջմղում,
- նորաստեղծ ձեռնարկությունների ընթացիկ ուղեկցում:

12 ձեռնարկությունների, ինչպես նաև ռեսուրսային կենտրոնի հիմնման և գործարկման ընդհանուր ծախսը երկու տարվա կտրվածքով կկազմի մոտ 120 մլն դրամ:

ՄԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ



Աղյուսակ 25. Շիրակի մարզի համառոտ տվյալներ²⁷

Տարածքը	2 680 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	9 %
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	116
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	246. 4 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	8. 2 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	58.2 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	78 438.5 հա

²⁷ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015»

Սարապատ համայնքը

Սարապատ համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործընթացը սկսվեց 23. 08. 2016 –ին:

Սարապատ համայնքը գտնվում է Շիրակի մարզում և իր մեջ ներառում է հետևյալ 15 բնակավայրերը՝ Արփենի, Բաշգյուղ, Գոգհովիտ, Լեռնագյուղ, Թորոսգյուղ, Կաքավասար, Հողմիկ, Հարթաշեն, Ձորաշեն, Մուսայելյան, Մալուտ, Սարապատ, Վարդաղբյուր, Ցողամարզ և Փոքր Սարիար:

Տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն է, որտեղ զբաղված են տնային տնտեսությունների մոտ 90 %-ը:

Սարապատի տնտեսության մրցակցային առավելությունները

Համայնքի տնտեսության մրցակցային առավելությունները վեր հանվեցին՝ օգտագործելով «LED cafe» մեթոդոլոգիան:

- | | |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> • Մեծաքանակ վարելահողերը, արոտավայրեր և խոտհարքեր • Որակյալ մեխանիզատորներ | <p>Մեծաքանակ վարելահողերը, արոտավայրերը և խոտհարքերը նպաստում են անասնապահության և դաշտավարության զարգացմանը:</p> |
| <ul style="list-style-type: none"> • Ոռոգման և խմելու ջրի մեծ պաշարների առկայություն | <p>Համայնքում առկա է ոռոգման ջրի մեծ պաշար, ինչը բավարար է առկա տարածքների ոռոգման համար</p> |
| <ul style="list-style-type: none"> • Բնակլիմայական նպաստավոր պայմաններ այլընտրանքային էներգիա ստանալու համար | <p>Տարածքի բնակլիմայական առանձնահատկություններն են արևային օրերի քանակը և քամին, որը հնարավոր է օգտագործել այլընտրանքային էներգիա ստանալու համար:</p> |

- Ագրո և էկո տուրիզմի զարգացման պոտենցիալ
- Գեղատեսիլ բնություն, անտառներ
- Պատմական հուշարձաններ և կոթողներ
- Հանքային ջրերի որակյալ պաշարներ

Գեղատեսիլ բնությունը, Թռչկանի ջրվեժը, անտառները, պատմամշակութային հուշարձանները և կոթողները մեծ հնավորություն են տալիս ագրո և էկո տուրիզմի զարգացման համար:

Մար ապատի տն տե ս ու թ յ ան ն կ ս ր ա գ ի ռ ը

Ըստ առաջատար ոլորտների բնակավայրի տնտեսության պատկերը ստանալու, ինպես նաև տնտեսական զարգացման նախաձեռնությունները վեր հանելու համար՝ օգտագործվեց Մ. Պորտերի «Ադամանդ» մասնակցային ախտորոշման և գնահատման գործիքը:



Գ յ ու ղ ա տ ն տ ե ս ու թ յ ու ն

Համայնքի տնտեսության հիմքում գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսության զարգացած ճյուղերն են անասնապահությունը, դաշտավարությունը և մեղվապահությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը օգտագործվում են վարելահողերի,

խոտհարքների և արոտների համար: Հիմնականում մշակում են կերային խոտաբույսեր (կորնգան, առվույտ և այլն) և հացահատիկ:

- **Անասնապահություն**

Անասնապահությամբ զբաղվում է համայնքի տնտեսության մոտ 90%-ը: Այս համայնքում բավականին շատ են ալպիական գոտիները, սակայն կաթնատվությունը գտնվում է միջին մակարդակի վրա: Անասնապահության մեջ գերակշռում է «կովկասյան գորշ» ցեղատեսակը, որի կաթնատվությունը 1200–1500 լիտր/տարի է: Համայնքում ստեղծված կաթի 90%-ը հանձնվում է մթերողներին ամռան ամիսներին 1 լիտրը 120 դրամով, իսկ ձմռան ամիսներին կարող է այս գինը բարձրանալ՝ դառնալով մինչև 140 դրամ: Կաթի մնացած մասը՝ 10%, օգտագործվում է սեփական սպառման համար:

Տավարի միսը հիմնականում ընդունում են վերավաճառողները՝ 1կգ-ը միջինը 1800 դրամով: Այստեղ նաև զարգացած է ոչխարաբուծությունը, սակայն չկա բրդի շուկա և միսն էլ դժվարությամբ է վաճառվում (մեկ կիլոգրամը՝ 800 դրամ):

- **Մեղվապահություն**

Համայնքում գտնվող ալպիական գոտիները նպաստում են մեղվապահության զարգացմանը: Համայնքում առկա է 926 մեղվաընտանիք: Համայնքում մեղրի 1 կգ-ը վաճառվում է 3000-3500 դրամով:

- **Դաշտավարություն**


Գրեթե բոլոր բնակավայրերում առկա է ոռոգման ջուր, ինչը նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը: Չնայած ոռոգման ջրերի առկայությանը, բոլոր բնակավայրերում ոռոգման ներքին ցանցերի կառուցման խնդիր կա:

Համայնքում հասանելի են մեծաքանակ հողային ռեսուրսներ, ինչը թույլ է տալիս դաշտավարության մեջ հասնելու բարձր բերքատվության: Սա էականորեն բարձրացնում է ցանվող կուլտուրայի շահութաբերությունը: Մեծաքանակ հողային ռեսուրսները մրցունակ են դարձնում անասնապահությունը: Արոտավայրերի, խոտհարքի առկայությամբ և բազմամյա խոտաբույսերի աճեցմամբ լուծվում է անասնակերի հարցը:

Աղյուսակ 26. Համայնքի գյուղատնտեսության հիմնական ցուցանիշները (աղբյուր՝ համայնքապետարաններից ստացված տեղեկություններ):

Վարելահողեր	5 246 հա
Բազմամյա տնկարկներ	5 հա
Խոտհարքներ	1 985 հա
Արոտավայր	16 782 հա
Խոշոր եղջերավորներ / կովեր	8543/ 3869 գլուխ
Ոչխարներ և այծեր	10 500 գլուխ
Խոզեր	271
Մեղվաընտանիքներ	926

Զարգացման Նախաձեռնություններ



Համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործիքների կիրառման արդյունքում բացահայտվեցին համայնքի տնտեսության զարգացման հետևյալ նախաձեռնությունները՝

- Ոռոգման ցանցերի վերանորոգում և բարելավում. այս նախաձեռնության միջոցով հնարավորություն կստեղծի ավելի շատ բերք ստանալ, և կիջնի բերքի ինքնարժեքը:
- Մեքենա-տրակտորային պարկի ստեղծում: Նման պարկի ստեղծումը կնպաստի ավելի շատ հողատարածքներ մշակելուն և բերքի ինքնարժեքի նվազմանը:
- Միջհամայնքային, ներհամայնքային և հանդամիջյան ճանապարհների բարեկարգման տեխնիկայի և հասարակական տրանսպորտի ձեռք բերում: Բնակավայրերի միացումից հետո բնակիչների տեղաշարժը ավելի հրատապ խնդիր է դառնում: Ճանապարհների բարեկարգումը և հասարակական փոխադրամիջոցների ձեռքբերումը կնպաստի, որպեսզի բնակիչները կարողանան ազատ տեղաշարժվել մի բնակավայրից մյուս բնակավայրեր, իր հետ բերելով ապրանքաշրջանառության աճ:

- Տոհմաբուծություն: Չնայած այն հանգամանքին, որ համայնքում կան բավականին շատ ալպիական գոտիներ՝ անասունների կաթնատվությունը տարվա համար 1200-1500 լիտր է: Այս նախաձեռնությունը հնարավորություն կստեղծի անասունների կաթնատվության բարձրացման համար:
- Որակյալ սերմեր և նոր մշակաբույսեր: Այս նախաձեռնությունը նպաստելու է, որ բնակավայրերում սկսեն մշակել նոր մշակաբույսեր, իսկ արդեն մշակվող բույսերի բերքատվությունը կբարձրանա:

Համայնքի բնակիչները վերը նշված նախաձեռնություններից ավելի կարևոր համարեցին և իրենց առաջնությունը տվեցին՝

1. մեքենա-տրակտորային պարկի ստեղծմանը,
2. միջհամայնքային, ներհամայնքային և հանդամիջյան ճանապարհների բարեկարգման տեխնիկայի ձեռք բերմանը:

Առաջ նայ ին ն ախաձեռնություններ

Մեքենա-տրակտորային կայան

Սարապատ համայնքի 15 բնակավայրը միասին ունեն մոտ 5246 հա վարելահող: Ներկայումս մշակում են մոտ 1584 հա-ը (մոտ 35%): Վարելահողերի մեծ մասը բաժին է ընկնում բազմամյա խոտաբույսերին՝ (ատվույտ, կորնզան , վարսակ և այլն) մոտ 1000 հա: 700 հա-ի վրա մշակվում են հացահատիկային մշակաբույսերին:

Գյուղտեխնիկան բավականին մաշված վիճակում է, որն էլ իր հերթին բերում է կերային խոտաբույսերի և հացահատիկի բերքի մեծ կորստի: Գյուղտեխնիկա չլինելու պատճառով շատ հողատարածքներ մնում են առանց մշակելու, նաև այս ամենին խոչընդոտում է հանդամիջյան ճանապարհների ոչ բարեկարգ վիճակը: Ստեղծելով մեքենա-տրակտորային կայան՝ կլուծվեն վերը նշված արդիական խնդիրները: Բացի այդ կայանը կնպաստի, որպեսզի բնակիչները ավելի ակտիվ սկսեն մշակել իրենց հողատարածքները:

Գյուղատնտեսական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար պահանջվում է գյուղատնտեսական և ճանապարհների բարեկարգման հետևյալ տեխնիկան՝

- 1 հատ կոմբայն – 40 մլն. դրամ,
- 1 հատ Բելառուս տրակտոր- 10 մլն. դրամ,
- 4 հատ գութան – 2 մլն. դրամ,
- 1 հատ շարքացան – 2,5 մլն. դրամ,
- 2 հատ փխրեցուցիչ – 3 մլն. դրամ,
- 1 հատ ֆրեզ կուլտիվատոր – 3 մլն. դրամ,
- 6 հատ խոտհնձիչ – 6 մլն. դրամ:

Ընդամենը՝ մոտ 67 մլն. դրամ:

Աղյուսակ 27. Ցանվող կուլտուրաների ցուցանիշները Սարապատ համայնքում (աղբյուր՝ համայնքապետարաններից ստացված տեղեկություններ):

Մշակաբույսեր	Այս պահի դրությամբ մշակվող (հա)	Սպասվող ցուցանիշներ (հա)
Գարի	283	510
Ցորեն	409	723
Կարտոֆիլ	87	120
Ամլույտ	278	318
Կորնզան	194	236
Վարսակ	148	225
Այլ	185	387
Ընդամենը	1584	2519

Վերլուծելով ներկայացված աղյուսակները՝ պարզ է դառնում, որ համայնքում մշակվող վարելահողերի թիվը էականորեն կաճի՝ 1584-ից դառնալով 2519-ի, որը գյուղատնտեսության մեջ էական փոփոխություն է:

Մի ք հ ա մ ա յ ն ք ա յ ի ն և ն եր հ ա մ ա յ ն ք ա յ ի ն հ ա ս ա ր ա կ ա կ ա ն փ ո խ ա տ ր ա մ ի ջ ո ց և ճ ա ն ա պ ա ր հ ն եր ի ք ա ր ե կ ա ր գ մ ա ն տ ե խ ն ի կ ա

15 բնակավայրի միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտային կապը ստեղծելու, բարեկարգելու համար անհրաժեշտ է ձեռք բերել հետևյալ տեխնիկաները, որոնք նաև կծառայեն հանդամիջյան ճանապարհները բարեկարգելու համար՝

- 3 հատ միկրոավտոբուս – 36 մլն. դրամ,
- 1 հատ էքսկավատոր – 30 մլն. դրամ,
- 1 հատ կցովի հողափոր-հարթեցնող մեքենա (գրեյդեր) – 50 մլն. դրամ,
- 1 հատ ինքնաթափ բեռնատար մեքենա – 25 մլն. դրամ:

Ընդամենը՝ 141 մլն. դրամ:


Աղյուսակ 28. Բարեկարգման ենթակա ճանապարհները ըստ ճանապարհների տեսակի (կմ):

Ճանապարհներ	
Միջհամայնքային	103
Ներհամայնքային	43
Հանդամիջյան	203

Վերը նշված աղյուսակից երևում է, որ ճանապարհների բարեկարգման տեխնիկաները օգտագործվելու են 347 կմ ընդհանուր երկարությամբ և միջինով 4-5 մետր լայնությամբ ճանապարհներ բարեկարգելու համար՝ որից 100 կմ բնակավայրերը իրար կապող ներհամայնքային ճանապարհներն են:

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ



Աղյուսակ 29. Շիրակի մարզի համառոտ տվյալներ²⁸

Տարածքը	2 680 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	9 %
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	116
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	246. 4 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	8. 2 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	58.2 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	78 438.5 հա

²⁸ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015»

Ամասիա համայնքը

Ամասիա համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործընթացը սկսվեց 24. 08. 2016 –ին:

Ամասիա խոշորացված համայնքը իր մեջ ներառում է հետևյալ 9 բնակավայրը՝ Ամասիա, Բյուրակն, Մեղրաշատ, Արեգնադեմ, Գտաշեն, Ողջի, Բանդիվան, Հովտուն և Ջրածոր:


Համայնքը գտնվում է Շիրակի մարզում՝ ծովի մակերևույթից 1800–2000 մետր բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը՝ տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն է և հողագործությունը:

Համայնքում գործում են բանկային համակարգի և պետական ենթակառույցների ներկայացուցիչներ:

Ամասիայի մրցակցային առավել ու թյ ու ն ն եր ր

Համայնքի տնտեսության մրցակցային առավելությունները վեր հանվեցին՝ օգտագործելով «LED cafe» մեթոդոլոգիան:

- բերրի վարելահողերի մեծ քանակություն (6201.62 հա),
- ոռոգման ջրի մեծ պաշար, ոռոգման ինքնահոս ցանցերի առկայություն,
- ալպիական գոտի, ինչը մրցունակ պայմաններ է ստեղծում անասնապահության և մեղվապահության զարգացման համար,
- համայնքում որակյալ գյուղատնտեսներ, մեխանիզատորներ և անասնաբույժեր կան,
- համայնքը մոտ է գտնվում հայ-վրացական սահմանին, Վրաստանի՝ հայերով բնակեցված համայնքներին, առկա է բարեկամական և տնտեսական երկկողմանի կապ,
- համայնքում առկա են պետական, ֆինանսական



ծառայություններ և ենթակառուցվածքներ (բանկերի մասնաճյուղեր, գրասենյակներ, նոտար և այլն):


Ամասիայի տնտեսության նկարագիրը

Ըստ առաջատար ոլորտների բնակավայրի տնտեսության պատկերը ստանալու համար՝ օգտագործվեց «COMPASS» մասնակցային ախտորոշման և գնահատման գործիքը:

Ամասիայի տնտեսության հիմքում կաթնատու անասնապահությունն է և հողագործությունը (հացահատիկի, կարտոֆիլի և կերային կուլտուրաների արտադրություն): Համեմատաբար զարգացած է նաև թռչնաբուծությունը:

Համայնքում գործում են երկու պանրի գործարան, որտեղ արտադրվում են «Լոռի», «Չանախ» պանիրներ, և արտադրանքը սպառվում է ՀՀ ամբողջ տարածքում:

Ամասիա համայնքի ներսում ստեղծվող բնակչության եկամուտները ունեն հետևյալ աղբյուրները (աղբյուր՝ համայնքային հանդիպումների արդյունքում ստացված տվյալներ).



Ամասիայի տարածքում գործում են 4 հիդրոէլեկտրակայան: Այս կայանները էական ազդեցություն չունեն համայնքի տնտեսական կյանքի վրա, քանի որ աշխատողները հիմնականում Գյումրի քաղաքից են:

Անասնապահություն

Անասնապահության մեջ է ստեղծվում համայնքի ներսում ստեղծվող եկամտի մոտ 80% -ը: Համայնքում տնային տնտեսությունների 90% -ը զբաղվում են անասնապահությամբ՝ նույնիսկ եկամտի այլ աղբյուրների առկայության դեպքում:

Ըստ պաշտոնական տվյալների՝ համայնքում կա

- ⇒ 7281 խոշոր եղջերավոր անասուն, որից
 - կով – 3784,
- ⇒ ոչխարներ և այծեր – 12204,
- ⇒ խոզեր – 490,
- ⇒ մեղվաընտանիքներ – 1619:

Վերջին հինգ տարիների պաշտոնական վիճակագրությունը վկայում է ն՝ խոշոր, ն՝ մանր եղջերավոր անասնապահության կայուն աճի մասին (մոտ 60%-ով): Անասնապահության աճին զուգահեռ համայնքներում հետզհետե նվազել է հողագործությունը՝ վերածվելով անասնապահությանը հիմնականում լրացուցիչ կերով ապահովող ճյուղի:

Անասնապահության ճյուղի ներքին որակական բնութագրիչներ

- Արոտավայրերը հիմնականում լեռնային են և գտնվում են 7-10 կմ հեռավորության վրա, ինչը բացասական է ազդում կովերի կաթնատվության վրա: Ոչխարաբուծության վրա արոտավայրերի լեռնային և համեմատաբար հեռու գտնվելը առանձնապես չի ազդում:
- Մեկ կովի տարեկան միջին կաթնատվությունը 1500 լիտր է, ոչխարինը՝ 120 լիտր:
- Կովերը հիմնականում խառնածին են և ունեն ցածր կաթնատվություն:
- Արոտի սեզոնը խոշոր եղջերավոր կենդանիների համար մայիսից հոկտեմբեր է, փոքրերի համար՝ ապրիլից նոյեմբեր:
- Արոտավայրերում չկա ջուր, ինչը լրացուցիչ խոչընդոտ է առաջացնում արոտի սեզոնին: Անասնապահները ստիպված են լինում կենդանիներին քշել ավելի քան հինգ կմ մեկ ուղղությամբ, որպեսզի կենդանիները կարողանան ջուր խմել:

Կաթնամթերքի պահանջարկը և կաթի իրացումը՝

- Կովի կաթի ավելի քան 90% -ը հանձնում են 4 հիմնական մթերողներին, իսկ 10%-ից՝ պանիր ստանում: Կաթի գինը կախված է յուղայնությունից: Կաթի արժեքը տատանվում է 120–140 դրամի շրջանակում՝ կախված սեզոնից:
- Ոչխարի կաթը հիմնականում չի վաճառվում և ամբողջությամբ օգտագործվում է գառներին կերակրելու, իսկ ավելացված մասը՝ պանրի արտադրության մեջ:
- Թե՛ ոչխարի, և թե՛ կովի պանրի վաճառքի հիմնական շուկան Գյումրի քաղաքն է, որտեղ ոչխարի պանիրը վաճառվում է միջինը 1200 դրամով, կովինը՝ 1500 դրամով:
- Միսը վաճառվում է մսավաճառների և միջնորդ վաճառողների օգնությամբ: Որակյալ մսի վաճառքի գինը մոտ 2000 դրամ է: Միևնույն ժամանակ մի քանի կենդանի մորթելու դեպքում ֆերմերը կանգնում է վաճառքի հետ կապված բարդության առաջ. հնարավոր չէ միանգամից իրացնել համամեմատաբար մեծ քանակությամբ միս:

Հոդագործություն

Հոդագործությունը համայնքում անասնապահության համար լրացուցիչ կերի արտադրության ոլորտ է:

Վարելահողերում աճեցնում են հացահատիկային կուլտուրաներ և անասնակեր: Կարտոֆիլի և բանջարեղենային կուլտուրաների աճեցման համար օգտագործվում են տնամերձ հողատարածքները, որտեղ, հիմնականում սեփական կարիքների համար, աճեցնում են կարտոֆիլ, լոբի, գազար, կաղամբ, կանաչեղեն:

Համայնքում հոդագործությանը խոչընդոտող հիմնական գործոններն են՝

- ոռոգման ջրագծերի բացակայություն,
- գյուղտեխնիկայի մաշվածությունը,
- անկայուն և անկանխատեսելի եղանակը:

Զարգացման նախաձեռնություններ

Մասնակցային հանդիպումների արդյունքում համայնքի բնակիչները վեր հանեցին տնտեսական զարգացման հետևյալ առաջնային նախաձեռնությունները.

Նոր տեխնոլոգիաների գծով ինֆորմացիա և գիտելիք

Համայնքի բնակիչները համատեղ կարևորում են այս խնդրի առկայությունը. անհրաժեշտ է տեղեկություն անասնապահության և դաշտավարության մեջ կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման մասով, որոնք կարող են ներդրվել համայնքում և զգալիորեն բարձրացնել տվյալ ոլորտի արդյունավետությունը՝ բերելով ծախսերի և աշխատաժամանակի կրճատմանը, ինչպես նաև բերքատվության և որակի բարձրացմանը:

Արտավայրերի ջրարբիացում

Այն թույլ կտա արտավայրերում ունենալ խմոցներ, ինչն էականորեն կկրճատի խմելու համար կենդանիների անցած ճանապարհը: Այս նախաձեռնությունը ուղղակիորեն կազդի կաթնատվության բարձրացման վրա:

Որակյալ սերմացու, հակակարկտակայան , պայքար կրծողների դեմ և պահեստային շինություններ:

Այս չորս նախաձեռնությունները ուղղակի դրական ազդեցություն կունենան որակյալ բերքի աճեցման, պահպանման և բերքատվության բարձրացման վրա, ինչն ուղղակիորեն հողագործության զարգացման հիմքն է:

Առաջ և սպիտակ ին և ախաձեռնություններ

Էկոպայմանի տեսակ	Կոլտնտեսություն	Կոլտնտեսություն	Կոլտնտեսություն	Կոլտնտեսություն	Կոլտնտեսություն	Կոլտնտեսություն	Կոլտնտեսություն	Կոլտնտեսություն
Երկրորդականի քարե շերտի	2	1	1	1	1	1	1	8
Արտադրական չունեցող	1	0	0	0	1	0	2	4
Կոլտնտեսության շրջան	1	0	0	1	0	1	1	4
Արտադրականի օգնություն	2	1	1	1	1	2	2	10
Կոլտնտեսության	1	0	0	1	0	1	1	4
Արտադրական	2	1	0	1	1	0	1	6
Արտադրականի օգնություն	1	0	1	1	1	1	1	6
Կոլտնտեսության շրջան	1	1	0	0	0	1	1	4
Կոլտնտեսության օգնություն	2	0	0	1	1	2	2	8
Արտադրականի օգնություն	2	2	1	1	1	1	1	9

Մեքենա տրակտորային կայանի ստեղծման աջակցություն:

Ամասիա համայնքում դաշտավարության զարգացմանը խոչընդոտող հիմնաքարային գործոնը ժամանակակից որակյալ գյուղտեխնիկայի բացակայությունն է, ինչն էական ազդեցություն ունի բույսի մշակման բոլոր փուլերում՝ սկսած հողի նախապատրաստական աշխատանքներից մինչև բերքի հավաքումը և տեղափոխումը:

Ստորև ներկայացված է կայանի համար անհրաժեշտ տեխնիկան.

- **2 հատ կոմբայն – 80 մլն. դրամ:**
Ժամանակակից կոմբայնները անհրաժեշտ են հացահատիկի հավաքման փուլում: Համայնքում առկա սովետական մակնիշի մի քանի կոմբայնները տեխնիկապես մաշված են, ինչը բերում է բերքի կորստի, հատիկների փչացմանը, վառելիքի և սպասարկման վրա կատարվող մեծածավալ ծախսերի:
- **2 հատ անիվավոր տրակտոր- 20 մլն. դրամ,**
 - 2 հատ գութան – 2 մլն. դրամ,
 - 2 հատ փխրեցուցիչ – 1.5 մլն. դրամ,
 - 2 հատ խոտի հավաքիչ մամլիչ – 11 մլն. դրամ:

Հողի նախապատրաստման, աճեցման աշխատանքների համար անհրաժեշտ են ունիվերսալ այս տրակտորները՝ իրենց կցորդներով.
- **2 հատ թրթուրավոր տրակտոր - 40 մլն դրամ:**
Հատկապես վերջին տարիներին չմշակված հողերը հնարավոր չէ վարել անիվավոր տրակտորով: Այս տրակտորները հիմնականում անհրաժեշտ են չմշակվող հողերը վարելու համար:

- **2 հատ խոտհնձիչ – 2.5 մլն. դրամ,**
- **Fortschritt E302 խոտհնձիչ – 15 մլն դրամ,**
Որակյալ և նոր խոտհնձիչները գերակա պայման են անասնախոտի՝ ժամանակին հավաքման համար:
- **Գրեյդեր – 50 մլն դրամ,**
Գրեյթե բոլոր բնակավայրերում առկա է միջհամայնքային և հանդամիջյան ճանապարհների բարեկարգման խնդիր, ինչը հնարավոր է լուծել սեփական համապատասխան տեխնիկայի առկայության դեպքում:
- **Ինքնաթափ բեռնատար մեքենա – 25 մլն դրամ,**
Մեքենան անհրաժեշտ է հիմնականում սերմացույի և բերքի տեղափոխման ժամանակ:

Ընդամենը՝ 247 մլն. դրամ:

Ծրագրի ազդեցության գնահատական

Ծրագրի շահառուներն են համայնքի բոլոր բնակավայրերի տնային տնտեսությունների մոտ 80% -ը (մոտ 800 տնտեսություն), որոնք ուղղակիորեն ներգրավված են գյուղատնտեսության մեջ: Այս տեխնիկաների առկայությունը թույլ կտա մշակվող տարածքները տարեկան ավելացնելու մոտ 100 հեկտարով՝ մի քանի տարում հասնելով գյուղատնտեսական ներկա ծավալի 2,5–3 անգամ աճի:

Ոռոգման ցանցերի բարելավում և կառուցում

Չնայած համայնքում առկա է ոռոգման ջրի մեծ պաշար, գրեթե բոլոր համայնքներում ոռոգման ցանցերի բացակայության և ոչ բարվոք վիճակում լինելու պատճառով ջուրը հնարավոր չէ արդյունավետ օգտագործել: Համայնքի վարելահողերի 70 % -ից ավելը ունեն ոռոգման ջրի խնդիր: Այս խնդրի լուծումը թույլ կտա կտրուկ բարձրացնել աճեցվող մշակաբույսերի բերքատվությունը, ինչպես նաև մասամբ անցում կատարելու առավել բարձր շահութաբերություն ունեցող մշակաբույսերի՝ բանջարեղեն, ջրովի անասնախոտ և այլն:

Գրեյթե բոլոր բնակավայրերում առկա է ներքին ցանցի վերանորոգման, որոշ հատվածներում նաև մայր գծի կառուցման խնդիր: Ընդհանուր առմամբ համայնքում անհրաժեշտ է մոտ 30 կմ ներքին ցանցի բարելավում տարբեր հատվածներում և 15 կմ ոռոգման մայր գծի վերականգնում: Ծրագրի արժեքը հնարավոր կլինի հաշվարկել չափազրման և ինժեներական նախագծումից հետո:

Ծրագրից կօգտվեն մոտ 1000 տնտեսություն, այն թույլ կտա ռոռզելու ավելի քան 3000 հեկտար հողատարածք:

Օրինակներ՝

Մեզնաղեմ

Ոռզման ներքին ցանցը վնասված է, որոշ հատվածներում էլ իսպառ բացակայում է: Անհրաժեշտ է ոռզման ներքին ցանցի մոտ 2,3-4 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոզում՝ բետոնե կիսախողովակներով կամ խողովակներով:

Ծրագրի արդյունքում բնակավայրում կոռզվի 47 հա տնամերձ և մոտ 500 հա գյուղնշանակության վարելահող, ծրագրից կօգտվի 80 տնտեսություն, որոնք այս պահին հիմնականում աճեցնում են ցորեն, գարի, վարսակ, առվույտ և կորնզան, իսկ ոռզման դեպքում պատրաստ են աճեցնելու հնդկաձավար, կարտոֆիլ, կաղամբ, գազար, ճակնդեղ և այլն:

Բուրակն


Բյուրակնում անհրաժեշտ է ոռզման ներքին ցանցի մոտ 2 կմ երկարությամբ հատվածի մաքրում և բետոնապատում: Ոռզման ցանցը սպասարկում է 320 հեկտարի: Ծրագրից կօգտվի 32 տնտեսություն, որոնք կցանեն հացահատիկ, կարտոֆիլ, բանջ. բոստանային կուլտուրաներ:

Ջրաձոր

Ջրաձորում անհրաժեշտ է հիմնովին նորոզել ոռզման ներքին ցանցի մոտ 3-4 կմ երկարությամբ հատված՝ ներքին խողովակաշարերի անցկացման եղանակով: Ծրագրի շնորհիվ կջրարբիացվի մոտ 420 հեկտար տարածք՝ ուղղակիորեն ազդելով այդ տարածքում գյուղատնտեսությամբ զբաղվող 92 տնտեսությունների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ



Աղյուսակ 30. Շիրակի մարզի համառոտ տվյալներ²⁹

Տարածքը	2 680 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	9 %
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	116
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	246. 4 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	8. 2 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	58.2 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	78 438.5 հա

²⁹ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015»

Աշոցք համայնքը

Աշոցք համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործընթացը սկսվեց 23. 08. 2016 –ին:

Աշոցք համայնքի կազմում են Աշոցք, Բավրա, Զույգաղբյուր, Թավշուտ, Կարմրավան, Ղազանչի, Կրասար, Մեծ Սեպասար, Սարագյուղ, Փոքր Սեպասար և Սիգավետ բնակավայրերը:

Աշոցքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմուտքում, Ախուրյան գետի վերին հոսանքի ավազանում: Համայնքն ունի 7700 բնակիչ: Տնտեսությունների հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է՝ անասնապահություն, հողագործություն, փոքր քանակությամբ նաև՝ մեղվաբուծություն և թռչնաբուծություն: Բնակչության զգալի մասն ունի բարձրագույն կրթություն:

Աշոցքի մրցակցային առավելությունները

Համայնքի տնտեսության մրցակցային առավելությունները վեր հանվեցին՝ օգտագործելով «LED cafe» մեթոդոլոգիան:



- ☞ Ոռոգման ինքնահոս ջրերի առատություն:
- ☞ Ալպիական գոտիներում մեծաքանակ արոտավայրերի առկայություն:
- ☞ Բույսերի բազմազանություն մեղվաբուծության զարգացման համար:
- ☞ Գյուղատնտեսության ոլորտում փորձառու մասնագետների և աշխատուժի առկայություն:
- ☞ Համայնքի միջոցով է անցնում Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհը:
- ☞ Առկա են բավարար վարելահողեր՝ դաշտավարության զարգացման և ընդլայնման համար:
- ☞ Համեմատաբար զարգացած կոմունիկացիաներ, հաստատություններ (հիվանդանոց, արվեստի դպրոց և այլն):

Աշոցքի տնտեսության նկարագիրը

Ըստ առաջատար ոլորտների բնակավայրի տնտեսության պատկերը ստանալու համար՝ օգտագործվեց «COMPASS» մասնակցային ախտորոշման և գնահատման գործիքը:



Աշոցք համայնքում բնակչությունը հիմնականում ներգրավված է անասնապահության և դաշտավարության մեջ:

Անասնապահության

Անասնապահության հիմնական ուղղություններն են մանր (ոչխար և այծ) ու խոշոր եղջերավոր անասնապահությունը: Արտադրում են կաթ և միս:

Խոշոր եղջերավորների ընդհանուր թիվը մոտ 10600 է, որից մոտ 5000-ը՝ կաթնատու: 1 կովի տարեկան կաթնատվությունը միջինը 1500 լիտր է:

Արտադրված կաթի 90%-ը տնտեսությունները հանձնում են վերամշակող ընկերություններին, մնացածն օգտագործում սեփական սպառման համար: Կաթի մեկ լիտրը հանձնում են 120 դրամով: Տնտեսությունների մեծ մասն ունեն սեփական խոտհարքը, որտեղից ապահովում են ձմռան անասնակերը: Համայնքն ունի մոտ 3000 հա խոտհարք և 9000 հա արոտավայր: Արոտներում առկա է խմելու ջրի խնդիր, որի պատճառով անասուններն օրվա մեջ մի քանի կիլոմետր տեղաշարժվում են դեպի արոտներից հեռու գտնվող ջրի աղբյուրներ, ինչն էականորեն նվազեցնում է կաթնատվությունը:

Միսը վաճառվում է վերավաճառողների միջոցով՝ 1800-2000 դրամով: Վաճառքի այլ ուղիներ գրեթե չկան, այդ պատճառով էլ ֆերմերները մսի գնի սահմանման հարցում կախվածություն ունեն վերավաճառողներից:

Ոչխարների և այծերի թվաքանակը՝ մոտ 8000:

Ոչխարաբուծության հիմնական արդյունքը միսն է: Կիթ չի իրականացվում: Բոտում են գառներին և վաճառում՝ միջինը 25 000 դրամով: Ստացված բուրդը չի իրացվում (ինչպես շատ այլ համայնքներում):

Դաշտավարություն

Տնտեսության հաջորդ հիմնական ուղղությունը դաշտավարությունն է: Համայնքն ունի 7540 հա վարելահող: Համայնքում մշակվում է ցորեն և գարի, փոքր քանակությամբ նաև՝

հաճար, վարսակ, հնդկաձավար, կտավատ և կարտոֆիլ: Դաշտերն հիմնականում չեն ոռոգվում: Պատճառը ոռոգման ներքին ցանցերի բացակայությունն է: Ինքնահոս ջուրը հասնում է համայնք, սակայն լիարժեք չի ծառայում նպատակին: Ցորենի բերքատվությունը 2-4 տոննա է՝ կախված բնակավայրի դիրքից և գոտուց: Գարու բերքատվությունը՝ 1.2-2 տոննա:

Ոլորտում հեռանկարային է հատկապես կտավատի արտադրությունը, որը սկսվել է վերջին տարիներին: Բերքատվությունը անջրդի պայմաններում 1 հա-ից 1 տոննա է, ինչը համարվում է միջին բերքատվություն: Բերքահավաքից հետո համայնքից մոտ մեկ տոննա ձեթ է վերամշակվում և մատակարարվում «Նատալի ֆարմ» ընկերությանը: Մնացածն էլ փոքր ծավալներով վաճառվում է տարբեր շուկաներում: Պահանջարկի մեծացման դեպքում սպասվում է կտավատի մշակության և վերամշակման ընդլայնում:

Զարգացման նախաձեռնություններ

Մասնակցային ախտորոշման և պլանավորման վարժության միջոցով համայնքի բնակիչների և գլխավոր դերակատարների հետ դուրս բերվեցին տնտեսության զարգացման հետևյալ հիմնական նախաձեռնությունները.

- Ոռոգման ցանցերի հիմնանորոգում. բնակավայրերում ոռոգման ներքին ցանցն ամբողջությամբ վնասված է: Ջուրը հասնում է բնակավայրեր, սակայն ներքին ցանցի բացակայության պատճառով մշակվող տարածքները չեն ջրվում:
- Արտավայրերի ջրաբեխացում:
- Հակակարկտային կայանների տեղադրում:
- Մեքենատրակտորային կայան:
- Անասնաբուժական որակյալ ծառայությունների ռեսուրս կենտրոնի հիմնում:
- Դաշտապաշտպան անտառաշերտի հիմնում:
- Դաշտամիջյան և միջհամայնքային ճանապարհների բարեկարգում:
- Որակյալ սերմացուների հասանելիություն:
- Բրդի իրացման գծով աջակցություն:
- Կոմբինացված կերերի արտադրություն:
- Մսամթերքի իրացման և վերամշակման աջակցություն:

	1	2	3	4	5	6	7
Գյուղատնտեսության զարգացում	1	1	0	1	2	0	5
Գյուղատնտեսության զարգացում	1	1	0	1	1	0	4
Որոգման ցանց	1	1	0	2	2	0	6
Գյուղատնտեսության զարգացում	0	1	2	1	0	0	4
Գյուղատնտեսության զարգացում	0	0	0	1	1	0	2
Գյուղատնտեսության զարգացում	0	1	0	1	0	2	4
Գյուղատնտեսության զարգացում	2	1	1	2	2	1	9
Գյուղատնտեսության զարգացում	0	0	1	0	2	0	3
Գյուղատնտեսության զարգացում	1	0	1	1	2	0	5
Գյուղատնտեսության զարգացում	1	1	1	1	2	0	6
Գյուղատնտեսության զարգացում	1	2	1	1	1	1	7

Առաջնային և նախաձեռնություններ

Մասնակցային գնահատման միջոցով դուրս բերված առաջնային երկու նախաձեռնություններն են՝

- Մեքենատրակտորային կայանի հիմնում,
- Կաթի և մսի վերամշակման և իրացման աջակցություն:

Մեքենատրակտորային կայանի հիմնում

Աշոցք համայնքն իր տասը բնակավայրերով հանդերձ ունի մոտ 7500 հա վարելահող և մոտ 3000 հա խոտհարք: Վարելահողերի գերակշիռ հատվածում մշակվում է հացահատիկ՝ ցորեն և գարի: Սակայն ամեն տարի բերքահավաքի ժամանակ սկսվում է պայքար՝ կոմբայն գտնելու և ժամանակին բերքը հավաքելու համար: Համայնքում չկա բավականաչափ գյուղտեխնիկա, եղածն էլ այնքան հին է, որ բերքի 20-40%-ը մնում է դաշտերում: Այս բացը մեծ խոչընդոտ է հանդիսանում հողագործության ընդլայնման և զարգացման համար: Ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկայով հագեցած պարկի հիմնումը էականորեն կհեշտացնի գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպումը և բերքի ցանքերի ընդլայնմանն ու տնտեսությունների եկամտի ավելացմանը:

Անհրաժեշտ գյուղատնտեսական տեխնիկայի ցանկ

- 4 կոմբայն – 140 մլն դրամ,
- 2 տրակտոր (130 ձիաուժ) – 30 մլն դրամ,
- էքսկավատոր – 45 մլն դրամ,
- 3 խոտի հավաքիչ մամլիչ – 16,5 մլն դրամ,
- խոտհնձիչ կոմբայն «Fortschritt E402» – 28 մլն դրամ

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 259 մլն. դրամ:

Կաթի և մսի վերամշակման և իրացման աջակցություն

Աշոցք համայնքում տնտեսությունների կողմից բուծվում է մոտ 5200 մսատու և նույնքան կաթնատու խոշոր եղջերավոր անասուն: Արտադրված կաթն ու միսը իրացնելը մշտական խնդիր է ֆերմերների համար: 1 լիտր կաթի մթերման գինը 120 դրամ է, ինչը շատ էժան է տնտեսությունների համար, իսկ միսը վերավաճառողների կողմից գնվում է 1 կգ-ը

1800-2000 դրամով և քիչ քանակությամբ, այնինչ շուկայում վաճառվում է նվազագույնը 2500 դրամ:


Խոշոր արտադրողների կողմից ձևավորված շուկայական գների վրա տնտեսություններն ազդեցություն չեն կարող ունենալ, իսկ համայնքում վերամշակման (պանիր, կաթնամթերք, սուջուխ, բաստուրմա, կիսաֆաբրիկատներ և այլն) փոքր արտադրամասերի հիմնման դեպքում տնտեսությունները կստեղծեն լրացուցիչ արժեք և կապահովեն բարձր եկամուտ:

Տեխնոլոգիական, ֆինանսական (երկարաժամկետ և ցածր տոկոսադրույքով վարկեր, փոքր դրամաշնորհներ և այլն) և շուկայի հասանելիությանն ուղղված աջակցությունների տրամադրման միջոցով հնարավոր է հիմնել 10-15 վերամշակող փոքր արտադրամաս, որոնք իրենց արտադրանքի վրա կավելացնեն նոր արժեք և կվաճառեն ավելի բարձր գներով, ինչպես նաև կմթերեն ավելի փոքր տնտեսությունների կողմից արտադրված միսն ու կաթը:

Նախաձեռնության իրականացման համար կպահանջվի 150-200մլն. դրամ:

ԱՐՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ



Աղյուսակ 30. Շիրակի մարզի համառոտ տվյալներ³⁰

Տարածքը	2 680 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	9 %
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	116
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	246. 4 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	8. 2 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	58.2 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	78 438.5 հա

³⁰ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015»

Արփի համայնքը

Արփի համայնքում մասնակցային ախտորոշման և պլանավորման գործընթացը սկսվեց 24. 08. 2016 –ին:

Արփի համայնքի բնակավայրերը ինն են՝ Բերդաշեն, Աղվորիկ, Արդենիս, Ալվար, Գառնառիձ, Զառիշար, Զորակերտ, Ծաղկուտ, Շաղիկ: Գյուղերը Արփի լճի շուրջն են՝ Ազգային պարկի հարևանությամբ կամ տարածքում:

Բարձրադիր լեռները և խիստ կլիման անդրադառնում են համայնքի տնտեսության վրա: Գյուղերում զբաղված են հիմնականում անասնապահությամբ: Տարվա գրեթե կեսը ձմեռ է՝ հաստ ձյունածածկությամբ: Արոտավայրերի ու խոտհարքների պակաս չկա, բնակչության ավանդական զբաղմունքն էլ հիմնականում խոշոր եղջերավոր անասնապահությունն է:

Ինը բնակավայրերը միասին ունեն 2000-ից պակաս բնակչություն, բայց գյուղատնտեսական նշանակության հողերը 20 հազար հեկտարից ավել են: Մեկ տնտեսությանը հասանելիք խոտհարքների և վարելահողերի քանակով այս համայնքը Հայաստանում առաջատարներից է:

Արփի ի տնտեսության մրցակցային առավելությունները

Համայնքի տնտեսության մրցակցային առավելությունները վեր հանվեցին՝ օգտագործելով «LED cafe» մեթոդոլոգիան:

- Անասնապահության զարգացման համար բարենպաստ բնական պայմաններ կան՝ անձայրածիր արոտավայրեր, խոտհարքեր, լեռնային սառնորակ աղբյուրներ:
- Արոտավայրերը համայնքներին համեմատաբար մոտ են, անասունների վազքը քիչ է, ինչը դրական է ազդում կաթնատվության վրա:
- Համայնքի տարածքը հարուստ է ռոռզման և խմելու ջրի աղբյուրներով:
- Ալպիական մարգագետինները բարենպաստ են և՛ մեղվապահության զարգացման, և՛ անասնապահական մթերքների որակի վրա ազդեցության առումով:
- Անասնապահության մեջ մարդկանց ավանդական փորձը համադրվում է նոր գիտելիքների նկատմամբ հակվածության հետ:
- Վրացական սահմանի մոտ լինելը դրական է ազդում մթերքների գնման և իրացման գործընթացի վրա:
- Տարածաշրջանի էկոլոգիան Հայաստանում լավագույններից է, արտադրված բարիքը՝ մաքուր և առողջարար:
- Տարածաշրջանում պահպանված են հնագույն բնակատեղիների, ամրոցների, բերդերի ավերակներ և դամբարաններ:

- Ազգային պարկը հարուստ է կարմիր գրքում գրանցված թռչուններով և կենդանիներով:

Արփի ի տնտեսության նկարագրը

Ըստ առաջատար ոլորտների բնակավայրի տնտեսության պատկերը ստանալու համար՝ օգտագործվեց «COMPASS» մասնակցային ախտորոշման և գնահատման գործիքը:



Արփի համայնքի տնտեսության հիմնական ճյուղը անասնապահությունն է: Սա պայմանավորված է ինչպես բնական, այնպես էլ՝ մասնագիտական նախադրյալներով:

Խոշոր եղջերավոր անասնապահություն

Արփի համայնքում կա մոտ յոթ հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն, դրանց մոտ կեսը՝ կովեր: Անասնապահությունը երկու հիմնական և գրեթե հավասար արդյունք ունի՝ միս և կաթ:

Կովերի կաթնատվությունը չի անցնում տարեկան 1500 լիտրը: Սա մոտ է Հայաստանի միջին ցուցանիշին, սակայն հեռու է առաջատար տնտեսությունների ցուցանիշից: Կովերի կաթնատվության նման ցածր մակարդակը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

- ցեղատեսակները չեն թարմացվում, արհեստական սերմնավորում կամ տոհմաբուծություն չկա: Տարեցտարի պատկերը ավելի է վատանում՝ խառնածին սորտերի պատճառով,
- պահքի կանոնները չեն պահպանվում, կովերը լիարժեք սնվում են միայն ամառվա երեք ամիսներին, իսկ մնացած ընթացքում, հատկապես՝ մսուրային պահքի ժամանակ թերսնված են: Մանրային հավելումներ, խտացված կերեր չեն տրվում, հիմնականում օգտագործվում է միայն խոտ:
- Քանի որ բացակայում է պլանավորումը, կովերի ծնի հիմնական սեզոնը ձմեռն է ու վաղ գարունը, իսկ կաթնատվության պիկը՝ ամառային ամիսները, երբ առանց այդ էլ կաթ շատ կա և գները նվազագույն են: Ծնի պլանավորման գործընթացը հնարավորություն կտա կաթնատվության պիկը տեղափոխել այլ ամիսներ, երբ կաթի պահանջարկը մեծ է, իսկ առաջարկը սկսում է նվազել:

- Ժամանակակից տեխնոլոգիաներ չեն կիրառվում՝ կրթի ավտոմատացումը անբավարար է, գումային պայմանները՝ անբարենպաստ:

Արտադրված կաթը հանձնում են հիմնականում չորս մթերոդների: Ամառվա սեզոնին կաթի գինը 120-130 դրամ է, ինչը ինքնարժեքից ավել է 30-40 դրամով: Արփի համայնքում անասնապահական տնտեսությունները միջինը ունեն 5-10 գլուխ կով, ինչը շուկայում ձևավորված կաթի գնի պայմաններում չի բավարարում անգամ ընտանիքների առաջնային սպառման ծախսերը փակելուն, և տնտեսությունը ընդլայնելու գումար չի մնում: Ֆինանսական հաստատությունների կողմից առաջարկվող վարկերը խնդրահարույց են՝

- Կառավարության կողմից սուբսիդավորվող վարկերի ծավալները փոքր են, բոլոր ցանկացողներին չի հերիքում, իսկ բանկերի կողմից առաջարկվող առավելագույն գումարով հնարավոր չէ տնտեսությունն ընդլայնել:
- Մնացած վարկերի տոկոսադրույքը բարձր է, իսկ գրավի պահանջը անհասանելի է գյուղերի համար:
- Առաջարկվող վարկերի ժամկետները կարճ են և չեն բավարարում տնտեսությունների նորմալ վերարտադրության համար:

Մսի արտադրության և իրացման հարցում նույնպես կան բարդություններ .

- միսն իրացվում է շատ դանդաղ, իսկ գինը թելադրվում է վերավաճառողների կողմից,
- վերավաճառողները ավելի մեծ շահույթ ունեն, քան հենց միս արտադրողները:

Շուկայում ձևավորված միջին գինը ներկայումս մեկ կիլոգրամ տավարի մսի համար 1800 դրամ է: Միջին տնտեսությունը ունի հինգ-վեց ցուլիկ, դրանց գարնանային ամիսներին ուղարկում են արոտ, աշնանը՝ իրացնում: Ցուլիկների բոտում չի իրականացվում:

Անասնապահության զարգացման, ինչպես նաև կաթի ու մսի հետագա վերամշակման ուղղությամբ տարածաշրջանում հարկավոր է ներքոնշյալ գործողությունների իրականացումը:

Անասնապահության մեջ ֆիզիկական աշխատանքը շատ է և ծանր, երիտասարդներն էլ խուսափում են դրանից, պետք է հնարավորինս մեքենայացնել և՛ անասունների պահքը, և՛ խոտքաղն ու խոտի մատակարարումը: Այս առումով հետևյալ գործընթացներն են արդեն սկսվել և կարիք կա խթանելու, աջակցելու՝

- Գումային պայմանների բարելավում, կառուցում, գումադրի հեռացման մեքենայացում:
- Ժամանակակից գյուղտեխնիկայի ապահովում, լիզինգային եղանակով իրացում գյուղացուն: Հատկապես՝ փոքր հզորության տրակտորներ և խոտհնձիչներ, խոտի հակավորման սարքավորումներ:
- Կրթի սարքավորումների լայնատարած կիրառում:

Այժմ բազմաթիվ գյուղացիական տնտեսություններ ցանկանում են ավելացնել անասունների գլխաքանակը, սակայն հասանելի ֆինանսավորում չկա, հատկապես՝ տասից ավել անասնազլխաքանակ ունեցող տնտեսությունների զարգացման համար:

Պետության կողմից սուբսիդավորվող վարկերը առավելապես 2-5 անասուն ունեցող տնտեսությունների համար են (մինչև մեկ միլիոն դրամ): Ավելի մեծ տնտեսություններն այդ գումարով զարգանալ չեն կարող, իսկ գյուղի զարգացման համար միջին ֆերմերային տնտեսությունների կայացումը հաջողության էական գործոն է:

- Օպտիմալ ֆերմերային տնտեսությունների (10 և ավելի գլխաքանակ անասունով) ֆինանսավորման մեխանիզմի ներդրում: Չորս միլիոն դրամից ավելի և տարեկան տասը տոկոս տոկոսադրույքից պակաս պայմաններով վարկերը կարող են իրանել նկարագրված թիրախ տնտեսությունների զարգացումը:

Տարածաշրջանում անասունների հիմնական ցեղատեսակը «Կովկասյան գորշն» է: Օրինակելի պահվածքի դեպքում այս ցեղատեսակի կաթնատվությունը կարող է հասնել մինչև 3500-4000լ տարեկան ծավալի: Ցավոք, ամռան երկու- երեք ամիսներից բացի, անասունները թերսնված են, պայմանավորված խոտի որակով և լրացուցիչ կերի բացակայությամբ, ինչն էլ կրճատում է կաթնատվությունը մինչև 1500 լ-ի տարեկան: Բացի այդ, կովերի ծինը հիմնականում հունվար- մարտ ամիսներին է: Այս ժամանակահատվածում ամբողջ Հայաստանում կաթ չկա, գինը բարձր է (170-200 դրամ), իսկ ամռան ամիսներին, որը նաև համընկնում է կաթնատվության պիկի հետ, գինը նվազագույնն է՝ մոտ 120 դրամ: Այս անհամապատասխանությունը վերացնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները:

- Անասունների արհեստական սերմնավորման համակարգի լայնատարած ներդրում:
- Անասունների լիակատար կերակրման նոր համակարգի ներդրում և գյուղացիներին ուսուցում՝ լիակատար կերակրման առավելությունների մասին: Անասնակերի արտադրության սարքավորումների ապահովում, այս ոլորտում սկսնակ գործարարների խրախուսում, նաև՝ ֆինանսական աջակցության ծրագրերով:
- Կերային մշակաբույսերի մշակման աջակցություն՝ սերմացուի, տեխնիկայի, ինչպես նաև նոր մշակաբույսերի ներդրման ուղղությամբ:

Մսի իրացման և վերամշակման համար անհրաժեշտ է՝

- Տարածաշրջանում գոնե մեկ սպանդանոցի հիմնում՝ համապատասխան սարքավորումներով հագեցած:
- Կարող են գործել նաև մսի նախնական վերամշակման փոքր արտադրամասեր՝ բաստուրմայի, սուջուլիի, մսի կիսաֆաբրիկատների արտադրություն և այլն:

Մանր եղջերավոր անասնապահություն

Համայնքում կա մոտ 6500 գլուխ մանր եղջերավոր անասուն: Զարգացած է հիմնականում ոչխարաբուծությունը:

Միջին տնտեսությունն ունի մոտ տասը գլուխ ոչխար:

Մի քանի տարի առաջ, երբ ոչխարի միսն սկսեցին արտահանել Իրան, ոչխարաբուծությունը զարգացավ: Մսի գինը էապես աճեց, ինչը գրեթե կրկնապատկեց ոչխարի քանակը համայնքում:

Սակայն վերջին երկու տարիների ընթացքում գները կրկին նվազեցին, կրճատվեց նաև ոչխարների քանակը: Հիմա տնտեսություններն իրացնում են հիմնականում գառներ, մեկ գառը՝ մոտ 25000 դրամ կամ մեկ կիլոգրամ միսը՝ 800 դրամ:

Մսի իրացումը բարդ է, պահանջարկը հաստատուն չէ, և, եթե տնտեսությունները մորթեն մեծ քանակությամբ գառներ՝ դրա իրացումը անհնար կլինի:

Սպանդանոցի և մսի նախնական վերամշակման արտադրամասերի նախաձեռնությունը կնպաստի նաև փոքր եղջերավոր անասնապահության զարգացմանը:

Դաշ տալ սար ու թյ ու ն և խո տք սող

Չնայած ավելի քան 6000 հա վարելահողերի առկայությանը՝ հողագործությունը մեծ տեսակարար կշիռ չի կազմում բնակչության եկամուտների մեջ: Վարելահողերի մեծ մասը օգտագործվում է որպես խոտհարք, իսկ մնացած մասի վրա ցանում են ցորեն, գարի, առվույտ, վարսակ:

Մշակաբույսերի բերքատվությունը մոտ է հանրապետության միջինին, դաշտերը հարթ են և հողը՝ բերրի:

Հողագործության հիմնական խնդիրներն են՝

- հին և մաշված գյուղատնտեսական տեխնիկան,
- ոչ որակյալ սերմերը,
- ցանքաշրջանառության և համապատասխան գիտելիքի բացակայությունը և այլն:

Խոտքաղը Արփի համայնքում սկսվում է հուլիսին և կարող է ձգվել մինչև հոկտեմբեր: Անցյալ տարիներին բնակչությունը քաղած խոտի մոտ 30%-ը վաճառել է՝ ապահովելով համեմատաբար կայուն եկամուտ: Իսկ այս տարի, պայմանավորված անասնազիլաքանակի կրճատմամբ և խոտի գնի կտրուկ անկմամբ, մարդիկ քաղում են միայն իրենց անասուններին բավարարող խոտը, իսկ մնացածը մնում է դաշտում: Մեկ 20 կգ-ոց խոտի հակի ինքնարժեքը մոտ 300 դրամ է, իսկ այս տարվա շուկայական գինը՝ 400-500 դրամ: Մինչդեռ անցյալ տարիներին այն հասնում էր 1000 դրամի:

Զարգացման նախաձեռնություն ու ն ն եր


Մասնակցային վարժության միջոցով համայնքի բնակիչները դուրս բերեցին հետևյալ նախաձեռնությունները, որոնք կարող են նպաստել համայնքի տնտեսական զարգացմանը՝

- ճանապարհների ձևեռային մաքրման և ընթացիկ բարեկարգման տեխնիկա,

- գյուղատնտեսական տեխնիկա հողագործության զարգացման համար,
- որակյալ սերմացու և հողերին համապատասխան պարարտանյութ,
- ծրագրեր մշակելու և կառավարելու կարողություններ,
- ռեսուրսային կենտրոն անասնապահության համար, որը կմատուցի անասնաբուժական, արհեստական սերմնավորման և այլ ծառայություններ, կապահովի համապատասխան տեխնիկայով,
- հակակարկտային կայաններ,
- պահեստային տարածքներ՝ ցորենը պահելու համար, ռոտզման ցանցեր,
- մսի և կաթի վերամշակման ձեռնարկությունների աջակցություն,
- ջերմոցային տնտեսությունների հիմնման աջակցություն:

Ապա բնակիչները վերընտրեցին երկու ամենաեական նախաձեռնությունները՝

- ճանապարհների ձմեռային մաքրման և ընթացիկ բարեկարգման տեխնիկա,
- գյուղատնտեսական տեխնիկա՝ հողագործության զարգացման համար:



Առաջ և սպիսի նախաձեռնություններ

Ճանապարհների ձմեռային մաքրման և ընթացիկ բարեկարգման տեխնիկա


Համայնքը, գտնվելով միջինը 2000 մետր բարձրության վրա, ունի բավականին խիստ ձմեռ, որի ընթացքում ներհամայնքային ճանապարհների մեծ մասը հաճախ փակվում են ձնաբքի պատճառով՝ զրկելով այլ համայնքերի հետ և համայնքի բնակավայրերի միջև տրանսպորտային կապից:

Համայնքի բնակիչները միաձայն կարևորում են ճանապարհների բարեկարգման և ձնահեռացման տեխնիկայի կարևորությունը, ինչը թույլ կտա սեփական ուժերով բարեկարգելու այդ ճանապարհները, իսկ ձմռանը պահելու անցանելի վիճակում:



Այս ծրագրի շահառուներ են համայնքի բոլոր բնակիչները:

Բարեկարգման և ձնաբքից մաքրման առաջնային կարիք ունեցող ճանապարհներն են՝

- Շաղիկ - Գառնատիճ – Ծաղկուտ – Ջորակերտ – Բերդաշեն ճանապարհը, որն ունի 14,3 կմ երկարություն:
- Բերդաշեն – Ամասիա ճանապարհը, որն ունի 15,6 կմ երկարություն:



- **Բերդաշեն – Արդենիս ճանապարհը, որն ունի 6,3 կմ երկարություն:**



Երկրորդային կարիք ունեցող ճանապարհներն են բնակավայրերի ներսում և հանդամիջյան ճանապարհները:

Ճանապարհների բարեկարգման և ձնաքրից մաքրման համար անհրաժեշտ է ձեռք բերել.

- 1. գրեղեր – 50 մլն դրամ,
- 2. ճանապարհային ձյուն մաքրող տեխնիկա – 40 մլն դրամ:

Ծրագրի արժեքը՝ **90 մլն դրամ:**

Գյ ու դ առն տե ս ա կ ան տե ի ն ի կ ա հ ո ղ ա գ ո թ ու թ յ ան զ ար գ ա ց մ ան հ ա մ ար

Համայնքի համար, որտեղ գյուղատնտեսությունը բնակիչների հիմնական եկամուտն է ապահովում, գյուղտեխնիկայի առկայությունը առավել քան կարևոր հիմնախնդիր է: Այս պահին վարելահողերի մեծ մասը օգտագործվում է որպես խոտհարք, իսկ մնացած մասի վրա ցանում են ցորեն, գարի, առվույտ, վարսակ: Ժամանակակից գյուղտեխնիկայի առկայությունը թույլ կտա զարգացնելու դաշտավարությունը, որպես առանձին եկամուտ ստեղծող ոլորտ, ինչպես նաև ավելի արդյունավետ կդարձնի անասնապահության համար, որտեղ ներգրավված է համայնքի տնտեսության 90%-ը, լրացուցիչ կերի արտադրությունը:

Ստորև ներկայացված է առաջնային անհրաժեշտ գյուղտեխնիկան.

- **Հ ա ց ա հ ա տ ի կ ի կ ո մ բ ա յ ն – 40 մ լ ն դ ռ ա մ**

Համայնքում վերջին տարիներին սկսել են աճեցնել հացահատիկ, ինչի աճեցման ծավալները գնալով ավելանում են: Գնալով կոմբայնի անհրաժեշտությունը ավելի է զգացվում, քանի որ ավելանում են մշակվող հացահատիկի տարածքները:

- **Վարի տրակտոր և գույքան – 30 մլն դրամ**

Երկար տարիների ընթացքում չմշակված հողերը հնարավոր չէ վարել փոքր անիվավոր տրակտորով, ինչի համար անհրաժեշտ է առավել հզոր տեխնիկա, օրինակ թրթուրավոր $DT - 70$, կամ անիվավոր $T - 150$ և այլն:

- **4 խոտհնձիչ կոմբայն (օր՝ «Fortschritt E302») – 70 մլն դրամ**

Որակյալ և նոր խոտհնձիչները գերակա պայման են անասնախոտի ժամանակին հավաքման համար: Առավել հզոր խոտհնձիչներ են անհրաժեշտ, որոնք թույլ կտան ժամանակին ավելի մեծ քանակով խոտ հավաքել, ինչպես նաև զգալիորեն պակասեցնել խոտի հավաքման ինքնարժեքը:

- **Անիվավոր տրակտորների կցորդ սարքավորումներ (2 արքացան, գույքան, կուլտիվատոր և այլն) – 20 մլն դրամ:**

Համայնքում առկա են բավականին քանակությամբ անիվավոր տրակտորներ, սակայն չկան բավարար քանակությամբ որակյալ կցորդ սարքավորումներ: Մոտ 20 մլն դրամով հնարավոր է ձեռք բերել բավական քանակությամբ կցորդ սարքավորումներ:

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ **160 մլն դրամ:**

Հավելված 1. Խոշորացվող համայնքներ, կենտրոններ և ընտրություններ

Մարզ	Նոր համայնք/ բնակչություն	Նախկին համայնքներ	Բնակչություն	Ընտրություններ			
Արարատ	1. Ուրցաձոր (3)	Ուրցաձոր	3127	18 սեպտեմբեր			
		Լանջանիստ	157				
		Շաղափ	913				
		Ընդամենը	4,197				
Շիրակ	2. Ամասիա (9)	Ամասիա	1963	2 հոկտեմբեր			
		Արեգնաղեմ	516				
		Բանդիվան	284				
		Բյուրակն	830				
		Գտաշեն	479				
		Հովտուն	190				
		Մեղրաշատ	376				
		Ողջի	539				
		Զրաձոր	351				
		Ընդամենը	5,528				
		3. Աշոցք (11)	Աշոցք		Աշոցք	2903	2 հոկտեմբեր
					Բավրա	635	
					Զույգաղբյուր	562	
Տավշուտ	389						
Կարմրավան	245						
Կրասար	529						
Ղազանչի	624						
Մեծ Մեպասար	914						
Սարագյուղ	253						
Սիգավետ	391						
Փոքր Մեպասար	260						
Ընդամենը	7,705						
4. Արփի (9)	Բերդաշեն			Բերդաշեն	370	2 հոկտեմբեր	
		Ալվար	279				
		Աղվորիկ	146				
		Արդենիս	207				
		Գառնատիճ	321				
		Զատիշատ	74				
		Զորակերտ	216				
		Ծաղկուտ	247				
		Շաղիկ	112				
		Ընդամենը	1,972				
5. Սարապատ (15)	Թորոսգյուղ	Թորոսգյուղ	372	2 հոկտեմբեր			
		Արփենի	376				

		Բաշցյուղ	63	
		Գոգհովիտ	394	
		Լեռնագյուղ	23	
		Կաքավաասար	133	
		Հարթաշեն	133	
		Հողմիկ	471	
		Ձորաշեն	192	
		Մուսայելյան	405	
		Սայլուտ	93	
		Սարապատ	117	
		Վարդաղբյուր	125	
		Ցողամարգ	578	
		Փոքր Սարիյար	239	
		Ընդամենը	3,714	
Սյունիք	6. Գորիս (10)	Գորիս	21302	18 սեպտեմբեր
		Ակներ	1103	
		Բարձրավան	136	
		Խնձորեսկ	2021	
		Հարթաշեն	687	
		Ներքին Խնձորեսկ	260	
		Շուրնուխ	151	
		Վորոտան	286	
		Վերիշեն	2109	
		Քարահունջ	1368	
		Ընդամենը	29,423	
	7. Մեղրի (13)	Մեղրի	4655	18 սեպտեմբեր
		Ագարակ	4742	
		Ալվանք	289	
		Գուդեմնիս	36	
		Լեհվազ	629	
		Լիճք	270	
		Կարչևան	270	
		Կուրիս	52	
		Նոնաձոր	153	
		Շվանիձոր	336	
		Վահրավան	35	
		Վարդանիձոր	266	
		Տաշտուն	116	
		Ընդամենը	11,849	
	8. Գորիս (4)	Գորիս	517	18 սեպտեմբեր
		Ծղուկ	386	
		Սառնակունք	517	
		Սպանդարյան	452	
		Ընդամենը	1,872	
	9. Տեղ (7)	Տեղ	2259	18 սեպտեմբեր
		Արավուս	169	
		Խնածախ	852	
		Խոզնավար	374	
		Կոռնիձոր	1102	

		Վաղատուր	404	
		Քարաշեն	536	
		Ընդամենը	5,696	
Վայոց Ձոր	10. Վայք (5)	Վայք	6722	2 հոկտեմբեր
		Ազատեկ	589	
		Արին	337	
		Ջեղեա	173	
		Փոք	145	
		Ընդամենը	7,966	
	11. Ջերմուկ (4)	Ջերմուկ	7647	2 հոկտեմբեր
		Գնդեվազ	822	
		Կարմրաշեն	237	
		Հերիեր	728	
		Ընդամենը	9,434	
	12. Զատիթափ (9)	Զատիթափ	1416	2 հոկտեմբեր
		Արտավան	328	
		Մարավան	310	
		Խնձորուտ	501	
		Նոր Ազնաբերդ	159	
		Բարձրունի	397	
		Մերս	206	
		Մարտիրոս	621	
		Գոմք	254	
		Ընդամենը	4,192	
Տավուշ	13. Այրում (8)	Այրում	2608	18 սեպտեմբեր
		Առչիս	1326	
		Բագրատաշեն	3087	
		Դեբեդավան	789	
		Դեղձավան	410	
		Լճկաձոր	422	
		Հաղթանակ	1519	
		Պտղավան	931	
		Ընդամենը	11,092	
	14. Նոյեմբերյան (9)	Նոյեմբերյան	6042	18 սեպտեմբեր
		Բաղանիս	917	
		Բարեկամավան	483	
		Դովեղ	618	
		Կոթի	2194	
		Ոսկեպար	937	
		Ոկսեվան	1431	
		Ջուջևան	595	
		Բերդավան	3556	
		Ընդամենը	16,773	
	15. Կողբ (2)	Կողբ	4888	18 սեպտեմբեր
		Զորական	1080	
		Ընդամենը	5,968	
		Ընդամենը	127,381	

Հավելված 2. Մասնակցային ախտորոշման և պլանավորման վարժությունների մասնակիցների քանակը ըստ համայնքների³¹

Հ/Հ	Համայնք	Մասնակիցների քանակ	
		1-ին վարժություն	2-րդ վարժություն
1	Գորիս	25	13
2	Տեղ	23	7
3	Գորիայք՝	9	
4	Ջերմուկ	30	12
5	Վայք	18	17
6	Զառիթափ	22	19
7	Նոյեմբերյան	29	21
8	Այրում	29	21
9	Կողբ*	24	
10	Ուրցաձոր*	28	
11	Մեղրի	24	20
12	Աշոցք	30	26
13	Սարպատ*	26	
14	Ամասիա	31	31
15	Արփի	35	17
	Ընդամենը	383	204

³¹ Մասնակիցների գրանցաթերթիկները կցված են հաշվետվությանը կից հավելվածում:

* Աստղանիշով նշված համայնքներում աշխատաժողովները անցկացվել են մեկ վարժությամբ: